5348

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԾԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(սկզբից մինչեւ մեր օրերը)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆԸ Է 50 ԿՈՊ.

9(47.925)
Վ-22

Հրատարակութիւն տիկին Մ. ՎԱՆՑԵԱՆԻ

B.553

9(47.925)
Վ-22
Ն-Հ. օրէսդ.
ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ
53
130
Ի գրոց ուսուցչ Ժողովրդական Հայկական դպրոցը երբեմն ընդհատուած Կամսարական.
4 6 12 20

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏ ԿԵՆԱԶԱՐԴ

Հրատարակութիւն տիկին Մ. ՎԱՆՑԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ
Ելեքտր. տպարան «ԷՊՕՒԱ» Մուզեյակի պեր., № 8.
1912

38491 ակ.

2004

21705-60 ք

Նուէր Թիֆլիզի Առևտրական և Մանթաշևի վաճառային դպրոցների իմ աշակերտներին։

Դուք, սիրելի աշակերտներ, որ սովորում էք Եգիպտոսի, Բաբելոնի, Ասորեստանի, Մարաստանի, Հրէաների, Պարսից և այլ բազմաթիւ ազգերի պատմութիւնները, շատ անգամ դիմել էք ինձ հարցերով —վարժապետ, ինչու չենք սովորում հայոց պատմութիւն, երբ պիտի սովորենք մեր սեփական պատմութիւնը։—

Ակամայ լռութիւնից յետոյ, այս գիրքն է ահա, որ պիտի պատասխանէ ձեր հարցերին, ուր համառօտ ու կարճ, պիտի գտնէք Ձեր Նախնեաց գործերի պատմութիւնը։

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Նիւթն աւելի կենդանի և բնական դարձնելու լաւագոյն միջոցը կլինէր, դիմել բուն պատմական աղբիւրներին և երբեմն ամենահարցասիրական հատուածները կարդալ դասատանը ականատեսների զեղեցիկ պատմածներից։ Այդ հնարաւոր չէ, որովհետև մեր պատմիչներից մի քանիսը միայն թարգմանուած են աշխարհաբար, մեծ մասը գրաբար և անմատչելի են։ Այդ պակասը լրացնելու համար խորհուրդ ենք տալիս դիմելու մեր «Հայ Հեղինակներ» գրքին, ուր զետեղուած են մեր լաւագոյն հեղինակների գրչին պատկանող պատմական յօդուածները։ Այս գրքում, ծանուցումների մէջ ցոյց են արուած համապատասխան տեղերը, որոնք կարող են կարդացուել յիշեալ գրքից։

Գիրքս կազմելիս, բացի բուն աղբիւրներից, օգտուել և հետևել ենք մեծ մասամբ Պալասանեանին։

ՀԱՅԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Մարդկութիւնը բաժանուում է երեք մեծ ցեղերի՝ սպիտակ, դեղին, սև ու կարմիր-պղնձագոյն։ Կենսակրթութեան (կուլտուրա) մէջ առաջ են գնացել և մեծ դեր են կատարել առաջին երկուսը։ Սև ցեղը ոչ բարձր կուլտուրայի է հասել, ոչ էլ պատմութիւն ունի։ Պատմութիւն ունեցող ազգերը պատկանում են դեղին կամ սպիտակ ցեղին։ Դեղին ցեղի մէջ ամենից կուլտուրական ազգերն են Չինացիք և Ճապոնացիք։ Շատ հին և պատկառելի է Չինաստանի կուլտուրան, միայն նա սահմանափակուած լինըն իր մէջ մեծ տարածութիւն չգտաւ և ազդեցութիւն չունեցաւ մարդկութեան ծնացեալ մասերի վրայ։ Դրա հակառակ լայն ծաւալ ստացաւ և այսօր ձգտում է գրեթէ տիրապետելու ամբողջ աշխարհին սպիտակ ցեղի ստեղծած կուլտուրան։

Սպիտակ ցեղը բաժանուում է երկու մեծ ընտանիքների. Սեմիտներ և Արիներ կամ Հնդեւրոպացիներ։ Սեմիտներն ապրում էին Միջագետքում, Սիրիայում, Արաբիայում, Փիւնիկէում և Պալեստինում։ Այդ երկիրներումն էլ աճեց ու ծաղկեց նրանց կուլտուրան (կենսակրթութիւնը)։

Շուտով կուլտուրայի ղեկը Սեմիտներից անցնում է արիական ցեղի անդամներին կամ Հնդեւրոպացիներին։ Այդ ցեղը որպէս իր մարմնի գեղեցկութեամբ, նոյնպէս իր մտաւոր բարձր ընդունակութիւններով առաջին տեղն է բռնում մարդկութեան մէջ։

Այդ ցեղն է, որ ստեղծագործել է մարդկային ամենաբարձր կուլտուրան և գիտութեան ու արուեստի մէջ գրեթէ չունի իր մրցակիցը։ Այդ ցեղի բնավայրն է Եւրոպան, Փոքր և Միջին Ասիան մինչև Հնդկաստան։ Այսօր,

սակայն, գրեթէ ամբողջ աշխարհը գտնուում է այդ ցեղի ձեռքին։

Այդ ցեղին էին պատկանում հնումը յոյները, հռոմայեցիք. նոյն այդ ցեղի մի մի ընտանիք են կազմում այսօրուայ ամենակենսակիրթ ազգերը՝ անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք, իտալացիք, լեհերը, ռուսները, պարսիկները և Հնդկաստանում արիական ծագում ունեցող որոշ ցեղեր։

Այդ ցեղին են պատկանում նա և հայերը, որոնք հէնց օտարազգի գիտնականների և ճամբորդների վկայութեամբ ամենաընդունակ ազգերից մինն են համարուում. առաջինն էին որ ընդունեցին քրիստոնէութիւն, և հազարաւոր տարիներ շարունակ կռուեցին վայրենի ու բարբարոս ցեղերի հետ, պահպանելու համար իրանց լեզուն, հայրենիքը և կրօնը։ Հայերը Եւրոպական լաւագոյն դաղափարների ընդունողն ու տարածողն են Ասիայում։—

Հայաստանը, ուր ապրում են հայերը, գտնուում է Ասիայի, Եւրոպայի և Ափրիկայի մէջ տեղ և այդ երեք մայր ցամաքները կապող անցքն է։ Հնուց հետէ նա մի կամուրջ է եղել, միակ ճանապարհը, որի վրայով անցել են զանազան ազգեր. Ասիայից Եւրոպա կամ Ափրիկա և ընդհակառակը։ Բոլոր մեծ արշաւներն ու պատերազմները այս երեք մայր ցամաքների մէջ, ինչպէս օրինակ, ազգերի մեծ գաղթը, պարսիկների արշաւները, Հռոմի կռիւները պարթևների հետ, Արաբաց յարձակումները պարսից կամ յունաց վրայ, խաչակրաց արշաւանքները, սելճուկների կամ օսմանցոց շարժումները, ռուսաց ձգտումը դէպի հարաւ կամ արևելք, կատարուել է Հայաստանի վրայով։ Ապրելով այսպիսի երկրում, հայ ազգը մի հանգիստ օր չէ ունեցել իր ընդունակութիւնները գործադրելու կամ զարգացնելու. այնու ամենայնիւ «մեր երկրումն էլ կատարուել են քաջութեան և արիութեան մեծ գործեր», ինչպէս գեղեցիկ ասել է մեր պատմահայր Խորենացին, որոնք արժանի են ամեն մի կրթուած հայի ուշադրութեանը։ Մեր ազգը դեռ հինդե-

րորդ դարուց մշակել ու զարգացրել է մի գեղեցիկ և հարուստ լեզու, մի հարուստ և հիանալի գրականութեան հետ։ Ճարտարապետութեան մէջ ստեղծել է Անի քաղաքի նման մի հրաշակերտ, որի աւերակների միայն անգամ, հէնց այսօր ամեն մի եւրոպացու և ամեն մի ճամբորդի հիացքն ու զարմանքն է շարժում։ Հին գհարիւրամեայ խաւարից և մոռացոր ու քաղաքական անկումից յետոյ այդ ազգը այսօր նորից զարթնելով ստեղծել է երկու լեզուաբևմտեան և արևելեան հայերէն և նորից ուզում է ուսումնասիրել մի կողմից իր անցեալ փառքի նսեմ միայորդները, միւս կողմից ընդունելով եւրոպական կուլտուրա, տարածել այն հարևան ազգերի մէջ։ Այս ազգի պատմութիւնն է ահա, որ մենք պիտի սովորենք այս փոքրիկ գրքոյկից։

Սիրենք և սովորենք, մեր ազգի պատմութիւնը, սիրելի մանուկներ։...

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

ՀԱՅ ԱԶԳԻ ԾԱԳՈՒՄՆ ԸՍՏ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ

Ինչպէս ամեն ազգի, այնպէս էլ մեր հին պատմութիւնը զարդարուած է գեղեցիկ աւանդութիւններով, որտեղ երբեմն իրական ու ճշմարիտ հերոսները երևան են գալիս որպէս դիւցազն և ուր ճշմարտութիւնը խառն է լինում աւանդական առասպելների հետ։ Հայկը մի ճշմարիտ ազգային հերոս էր, մի քաջ նետաձիգ որսորդ։ Հետևելով Աստուածաշունչին, մեր նախնիք մի գեղեցիկ պատմութիւն են յօրինել, ուր Հայկը դուրս է գալիս որպէս հակառակորդ Բէլի։ Ահա այդ աւանդական պատմութիւնը Հայկի և Բէլի մասին ըստ Խորենացու։

Բաբելոնի աշտարակաշինութիւնից յետոյ Բէլ կամ Ներբովթ անունով մի հսկայ սկսաւ բռնանալ ժողովրդի վրայ։ Հայկ անունով մի քաջ որսորդ չուզեց հնազանդիլ նրան և առնելով իր որդիքն ու թոռները, թուով 300 հոգի, հեռացաւ Բաբելոնից դէպի հիւսիս։ Նա բնակութիւն

հաստատեց Արարատեան երկրի մի լեռնադաշտի վրայ. շինեց մի գիւղ և անունը դրեց Հայկաշէն, իսկ գաւառը կոչուեցաւ Հարք։ Այդ երկրի հին բնակիչներն էլ միանալով Հայկի որդոց, հնազանդեցին նրան։

Այս բանը դուր չեկաւ Բէլին։ Նա պատգամ ուղարկեց Հայկին ասելով. «Գնացիր բնակուեցիր ցուրտ սառնամանիքի մէջ, լաւ կանես, որ քո սառն հպարտութիւնը մեղմես և գաս, հնազանդելով ինձ, հանդիստ ապրես իմ տէրութեան մէջ, ուր էլ կամենաս»։

ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ.

Հայկը խիստ պատասխանելով յետ դարձրեց Բէլի պատգամաւորներին։ Բէլը զայրացաւ և ահագին բանակով եկաւ Հայկի վրայ՝ պատերազմելու։ Հայկը լսելով Բէլի գալուստը, հաւաքեց իր ցեղից բոլոր ռազմիկներին և Վանայ ծովի մօտ մի դաշտավայրում հանդիպեց թշնամուն։

Բէլը մի խումբ քաջերով առաջ էր ընկած, Հայկը

յարձակուեց նրա վրայ։ Երկու կողմից էլ բազմաթիւ հսկաներ ու քաջեր ընկան, բայց երկու կողմն էլ ճնացին անպարտ։ Բէլը մտածեց յետ փախչել և միանալ գլխաւոր բանակին, բայց Հայկը նրան ժամանակ չտուաւ, նրա զօրաւոր նետը ցցուեց Բէլի կրծքում և բռնաւոր հսկան գետին տապալուեց։ Բէլի անտէր ճնացած զօրքը ցիր ու ցան եղաւ։ Հայկը տարաւ յաղթութիւնը։

Պատերազմի տեղում Հայկը մի գաստակերտ շինեց և անուանեց Հարք։ Բէլի ընկած տեղը կոչուեց Գերեզմանք։ Հայկը իր ժամանակի հսկաների մէջ ամենաքաջն էր և նշանաւոր. նա հաստաբազուկ էր, գեղեցիկ, գանգուր մազերով, խաժ աչքերով, գեղապատշաճ և անձնեայ։ Նրա անունով է, որ մենք կոչւում ենք Հայ, իսկ մեր երկիրը Հայաստան։—

ՀԱՅԿԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ ՄԻՆՉԵՒ ԱՐԱՄ.

Հայկի յաջորդն էր Արմենակ։ Սա իր Մանաւազ ու Մոռ եղբայրներին թողնելով Հարք գաւառում, ինքը գնաց դէպի հիւսիս և բնակութիւն հաստատեց մի բարձր լեռան մօտ, որ Արմենակի անունով կոչուեց Արագած, իսկ գաւառը Արագածոտն։

Մանաւազի որդի Բազը բնակուեց աղի ծովի արևմտահիւսիսային կողմերը, որի անունով էլ ծովը կոչուեց Բզնունեաց ծով (այժմ Վանայ)։

Արմենակին յաջորդեց Արամայիս, որ Արարատեան դաշտում, Գեհոն (Երասխ) գետի ափին մի քաղաք շինեց. դա հիմնողի անունով կոչուեցաւ Արմաւիր և վերջը Հայկազեանց մայրաքաղաքը դարձաւ։ Նա մի որդի ունէր, անունը Շարայ. դա սաստիկ շատակեր ու բազմածին էր, դրա համար ստացաւ մի արգաւանդ դաշտ, որ Շարայի անունով կոչուեց Շիրակ։—Դրա շատակերութիւնն առակ էր դարձել ժողովրդի մէջ, որ ասում էին ամեն մի որկրամոլի. «Թէ քո որկորը Շարայի որկորն է, մեր ամբարը Շիրակի ամբարքը չեն»։

Արամայիսին յաջորդեց Ամասիա, որի անունով էլ կոչուեց Հայաստանի ամենամեծ լեռը—Մասիս։ Սա ունեցաւ երեք որդի. Գեղամ, Ժիր Փառոխ և կայտառ Յոլակ.—դրանց համար նա շինեց երկու աւան, մինը Փառոխատ, միւսը Յոլակերտ։

Մի քանի ժամանակից յետոյ Գեղամը թողնելով իր որդի Հարմային Արմաւիր՝ ինքը գնում է արևելահիւսիս մի ծովակի մօտ։ Այդտեղ նա հիմնում է մի աւան, որ կոչւում է Գեղարքունի, ծովը էլ Գեղամայ ծով (այժմ Սևան)։ Այս երկրները մինչև Արաքս գետը Գեղամը տալիս է իբրև ժառանգութիւն իր Սիսակ որդուն։

Այսպէս Հայկի որդիքն ու թոռները հետզհետէ բազմանալով ցրուեցին ու ալրեցին ամբողջ Հայաստանին։

Կազմուեցան փոքրիկ ցեղեր իրանց նահապետներով, սակայն միութիւն և կապ չկար նրանց մէջ և թշնամիները նրանց դիւրութեամբ նեղում էին։ Այդ միութիւնն ու կապ հաստատողն եղաւ քաջն Արամ։

ԱՐԱՄ ՆԱՀԱՊԵՏ

Արամը վերին ասիճանի քաջ և հայրենասէր մարդ էր. նա լաւ էր համարում մեռնել՝ քան տեսնել այն նեղութիւնները, որ օտարները տալիս էին հայերին։ Նա միացնում է հայ ցեղապետներին, 50000 քաջ ու ընտիր զօրք հաւաքում և նրանց գլուխն անցնելով, յարձակւում է Նիւքար Մադէսի վրայ, որ նեղացնում էր Հայաստանի արևելեան կողմը։

Անսպասելի յարձակումով՝ դեռ արևը չծագած, Արամը կոտորում է Նիւքարի զօրքը և նրան էլ գերի առնելով բերում է Արմաւիր։

Այնտեղ աշտարակի ծայրին մեխում են նրան ճակատից ի տեսիլ անցորդներին։

Նինուէի թագաւոր Նինոսը թէպէտ մտածում էր իր նախահօր—Բէլի վրէժն առնել Արամից, բայց տեսնելով նրա քաջ պատերազմիները, մարգարտեայ վարսակալ ուղարկեց նրան ընծայ և իր երկրորդը կարգեց Արամին։

Մադէսի երկիրներին տիրելուց յետոյ, Արամը զէնքն ուղղեց հարաւ, ասորի Բարշամի դէմ, որ Հայաստանի հարաւը կատարեալ անապատ էր դարձրել,

Արամը նրան էլ յաղթելով զօրքը ցրուեց մինչև Կորդուաց լեռները և Բարշամի երկիրը հարկատու արաւ։ Բարշամն էլ պատերազմի մէջ մեռաւ։ Սա այն Բարշամն էր, որին քաջութեան համար ասորիները իբրև աստուած էին պաշտում։—Արևելեան և հարաւային կողմերը թշնամուց ապահովելով, Արամն իր ուշքը դարձրեց դէպի արևմուտք։

Պոնտոսի (Սև ծով) և Միջերկրականի մէջ գտնուած երկրի վրայ այդ ժամանակ իշխում էր Պայապես Բագեայ անունով մէկը, որ զօրք հաւաքեց Արամի դէմ դուրս գալու։ Մեր Արամը 40,000 հետևակ և 2,000 հեծելազօրքով յարձակուեց Պայապեսի վրայ, ջարդեց նրան և փախցրեց մինչև Միջերկրականի կղզիներից մէկը։

Պայապեսի երկիրներին տիրեց Արամ և բնակիչներին հրամայեց, որ հայերէն սովորեն ու խօսեն. ինքը գտնալով Հայաստան, այնտեղ թողեց Մշակ անունով մէկին 10,000 զօրքով։ Մշակն այնտեղ մի աւան հիմնեց իր անունով, որ տեղացիք անուանում էին Մաժաք և վերջը կոչուեց Կեսարիա։ Այս երկրներից էր, որ կազմուեցաւ Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք գաւառները, որ միասին կոչուեցին Փոքր—Հայք։

Արամի նշանակութիւնը շատ մեծ է մեր պատմութեան մէջ. նա որ բոլոր հայ ցեղերին միացրեց և դարձրեց մի ազգ. թշնամիներին վանելով՝ նա հիմք դրեց մի մեծ և ընդարձակ տէրութեան, ամեն տեղ բնակիչներով լցրեց և հայ անունը պատկառելի դարձրեց ամենի առաջ։ Նրա անունը այնքան ազգու և հռչակաւոր էր, որ օտար ազգերը մեզ և մեր երկիրը ճանաչում և կոչում են նրա անունով ԱՐՄԷՆ, ԷՐՄԷՆԻ, (Արամեան) և մեր երկիրն էլ ԱՐՄԵՆԻԱ։—

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

Արամին յաջորդեց նրա որդին՝ Գեղեցիկ Արան։

Նինոսի մահից յետոյ Ասորեստանի թագն անցաւ նրա կնոջ, Շամիրամին։ Սա լսելով Արայի գեղեցկութեան մասին, ուզեց ամուսնանալ նրա հետ։ Մարդիկ ուղարկեց ընծաներով և խնդրեց, որ Արան գայ Նինուէ, դառնայ Ասորոց թագաւոր և կամ, եթէ կամենում է, նորից յետ դառնայ Հայաստան։—Արա գեղեցիկը չհամաձայնեց, որով հետև ամուսնացած էր Նուարդ իշխանուհու հետ։ Շամիրամը բարկանալով զօրք հաւաքեց, եկաւ Հայաստան և զէնքի ուժով կամենում էր տիրել Հայաստանին և Արային։ Պատերազմելիս նա հրամայեց իր զօրքին, որ խնայեն Արային և ողջ-առողջ գերի բռնեն։ Պատերազմի մէջ քաջ Արան սպանուեց։ Շամիրամը որոնել տուաւ նրա դիակը և դրեց իր պալատի վերնատանը, որ աստուածները կենդանացնեն նրան։ Հայերը մի տեսակ աստուածներ ունէին, Յարէզ անունով. պատերազմում ընկած հերոսներին նրանք լիզելով առողջացնում էին։

Հայերն իրանց իշխանի մահուան վրէժը հանելու համար նորից ապստամբեցին և պատերազմի դուրս եկան։ Շամիրամն իր մարդկանցից մէկին հագցնելով Արայի շորերը, ցոյց տուաւ հայերին և հանգստացրեց, ասելով, որ աստուածները լիզեցին նրա վէրքերը և առողջացրին նրան։ Այն ինչ Արայի մարմինը հոտել էր արդէն և Շամիրամը ստիպուած էր մի փոս փորել տալ և թաղել*)։

Շամիրամը տեսնելով Հայաստանի հիանալի օդը, ա-

*) Այդ Արայի մասին եղած աւանդութիւնը պատմում է և Պլատոն յոյն փիլիսոփան, այն տարբերութեամբ, որ վիրաւոր ճակատից յետոյ, Պլատոնի ասելով, Արան առողջանում է։ Արդեօք այդ առողջացած Արան այն անձը չէ՞ր, որ կեղծիքով Արայի շորերն էլ հագել, հայերին խաբելու համար։

Արայի մասին. տես. Բազմավէպ 1897 թ. Նոյեմբեր Բասմաջեանի յօդուածը։

նուշ և սառն աղբիւրները, գեղեցիկ, ձիւնապատ լեռները, կապոյտ ու սիրուն լճերը, որոշեց ամառները անցկացնել Հայաստանում։ Դրա համար Ասորեստանից բերաւ բազմաթիւ արհեստաւորներ ու բանւորներ, շինել տուաւ մի քաղաք, և կոչեց Շամիրամակերտ, որ հիմա կոչւում է Վան։

Արայի մահից յետոյ Շամիրամը Հայաստանի իշխանութիւնը Կարդոսին յանձնեց։ Սա մեռաւ պատերազմի դաշտում, Շամիրամի հետ Նինուասի դէմ կռուելիս։

Կարդոսն ունէր մի որդի, խելացի և հանճարաւոր Անուշաւանը։ Սա նուիրուած էր Արմաւիրի մօտ գտնուած Սօսեաց անտառին, ուստի և կոչւած էր Սօս կամ Սօսանուէր։ Այս անտառի սօսաւիւնից հին հայերը գուշակութիւններ էին անում։

Հօր մահից յետոյ Անուշաւանը գերի է ընկնում ասորիների ձեռքը, բայց շահելով Նինուասի սիրտը, նախ ստանում է Հայաստանի մի մասը կառավարելու, ապա նաև ամբողջ Հայաստանը։

Սրանից յետոյ հայերը բազմաթիւ իշխաններ ունեցան, որոնք լինելով Ասորոց գերիշխանութեան տակ, չկարողացան անունի գործեր կատարել, մինչև որ եօթներորդ դարու սկզբին իշխանութեան գլուխ անցաւ Պարոյրը։

ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ ԵՒ ՀՐԱՉԵԱՅ

Ասորեստանն արդէն թուլացել էր։ Մարաց Կիաքսար Ա. և մեր Պարոյրը միացան բաբելացոց Նաբուպալասար թագաւորի հետ և յարձակուեցան Նինուէի վրայ։ Քաղաքը կործանեցին, իսկ Ասորեստանի վերջին թագաւորը թշնամու ձեռքը չընկնելու համար այրուեց իր կանանց հետ պալատի մէջ։

Այս պատերազմից յետոյ Պարոյրն ստացաւ թագ և եղաւ առաջին պսակակիր թագաւոր։ Նրանից առաջ եղած հայ իշխանները նահապետներ էին։

Պարոյրին յաջորդեց Հրաչեայ։ Սա օգնեց բաբելացոց Նաբուգոդոնոսոր արքային Հրէաստան պատերազմի գնա-

վիս։ Սրա ժամանակ հրէայ գերիներից Շամբատ անունով մի իշխան բնակութիւն հաստատեց Հայաստան, որից առաջ եկաւ Բագրատունի նախարարական տոհմը։

Հրաչեայրին յաջորդում են ուրիշ թագաւորներ, մինչև Տիգրան Ա. որոնց մասին պատմութիւնը մեզ ոչինչ չի աւանդում։

ՈՒՐԱՐՏԱՑԻՆԵՐ ԿԱՄ ԽԱԼԴԵՐ

Մինչև այստեղ ինչ որ պատմեցինք, հաղորդել է մեզ Մովսէս Խորենացի հայ պատմիչը։ Հայոց պատմութեան հնագոյն շրջանի մասին նա գրաւոր տեղեկութիւններ չէր կարող ունենալ։ Այս ամենը նա հաւաքել ու կազմել է ազգային աւանդութիւններից, երգերից, զրոյցներից և առասպելներից։

Հայկ և Արա անունով ազգային հերոսներ անկասկած եղել են, որոնց անուան շուրջը ժողովուրդը խտացրել է իր գաղափար կռիւները Ասորեստանի հետ։

Մեր պատմութեան այս մասը, որ կազմուած է միմիայն աւանդութիւններից, պէտք է կոչել առասպական։ Բուն, իրական պատմութիւնն սկսւում է այսուհետև։

Ներկայ գիտութիւնն ապացուցել է, որ հայերը պատկանում են Հնդեւրոպական ցեղին։ Թէ ուր է եղել Հնդեւրոպական ցեղի բնակութեան հին տեղը, հաստատ յայտնի չէ։ Ամենից հաւանականն և ներկայում տարածուած կարծիքն այն է, որ այդ ցեղի բնակութեան հին տեղն է հարաւային Ռուսաստանը, որտեղից նրա անդամները տարածուեցին արևմուտք, դէպի Եւրոպա և արևելք, դէպի միջին Ասիա, Հնդկաստան և Պարսկաստան։

Հայերի մասին յոյն պատմիչ Հերոդոտը պատմում է, որ գուցե են եկել Բալկանեան թերակղզուց, Թրակեացից, և անցնելով Փոքր Ասիան, եկել հաստատուել են Հայաստանում։ Հայերն ուրիշ եկուորներ են։ Ո՞վ և ինչ ազգութիւն էր բնակւում Հայաստանում հայերից առաջ։

Ներկայումս անհերքելի փաստերով ապացուցուած է, որ Քրիստոսից մօտ երկու հազար տարի առաջ Հայաստանում ապրում էր մի քաջ, պատերազմասէր և կենսակերպ ազգութիւն, որ կոչւում է Ուրարտացիներ կամ Խալդեր։ Այդ ազգի ծագումն ու լեզուն անյայտ է. դա ոչ սեմիտ էր, ոչ հնդեւրոպացի։

Դարեր շարունակ նա պատերազմում էր Ասորեստանի հետ, ունէր մեծ ու պարսպաւոր քաղաքներ, անց էր կացրել երկրի

մէջ գեղեցիկ ջրանցքներ. ունէր գիր և հաւանօրէն գրականութիւն։ Այդ գրերը նման էին սեպերի (մեխերի), դրա համար էլ դրանք կոչւում են սեպագիր արձանագրութիւններ։ Այդ արձանագրութիւններից մօտ հարիւրի չափ այսօր գտնւում են Հայաստանի զանազան մասերում, սկսած Սևանայ լճից մինչև Վան, ուր ամենից շատ կան այդպիսի գրեր։ Ինչպէս երևում է, Վանը եղել է նրանց գլխաւոր քաղաքներից մինը։ Այդ արձանագրութիւններն այսօր կարդացած են և պատմում են ուրարտացիների պատերազմական արշաւանքներն ու քաջութիւնները։ Զնայելով այդպիսի կենդանի փաստերին, այսօր Հայաստանում հետքն անգամ չի մնացել Ուրարտացիների։

Ո՞ւր կորաւ, ինչպէս անյայտացաւ մի այդպիսի քաղաքակիրթ և պատերազմասէր ազգութիւն, մնում է մինչև օրս անյայտ և անհայտ, Քրիստոսից մօտ 700 տարի առաջ, անյայտացած Ուրարտացիների տեղը մենք տեսնում ենք Արմէններին կամ Հայերին։ Մի բոլորովին նոր ժողովուրդ, որ ծագում է այլ ցեղից և խօսում է հայերէն։ Թէ ինչպէս Արմէնները կամ Հայերը Հայաստան եկան, Ուրարտացիներին յաղթեցին, մեզ անյայտ է։ Անկասկած տեղի պիտի ունեցած լինի երկարատև կռիւ, Ուրարտացիների մի մասը գերի գնացած և խառնուած հայերի հետ, միւս մասն էլ երևի տեղահան եղած և Հայաստանից գաղթած։

Այնուհետև Ուրարտացիներից Հայաստանում մնացին նրանց թողած սեպագիր արձանագրութիւնները, որ մինչև հիմա էլ կան. մէկ էլ բազմաթիւ աշխարհագրական անուններ։ Ուրարտու, նրանց երկրի անունից է, որ Մասիսի մօտ գտնուած դաշտավայրը կոչւում է Այրարատ, կամ Արարատ։ Եւրոպացիք այդ անունը սխալմամբ տալիս են Մասիս լեռան։ Հայաստանի հին տեղային անուններ. Մուշ, Հանծիթ, Վան, Տուսպ, Արածանի, Ախուրեան, Միւնիք, Արծրունիք, Ռշտունիք, Երևան, Գարնի, Ուրծ ևայլն, որոնք հայերէն չեն և հայ լեզուով չեն բացատրւում, մեծ մասամբ մընացորդ են Ուրարտերէնի։

Այս է ահա մնացել նախնի Ուրարտացիներից մեզ ժառանգութիւն։ Արմէնները եօթհարիւր տարի Քրիստոսից առաջ հաստատուելով Հայաստանում, բնաջինջ արին և հաստատեցին սեփական Հայ թագաւորութիւն։

Առաջին Հայ թագաւորը, որի մասին մեզ ստոյգ պատմական տեղեկութիւն է հասել, Երուանդեան Տիգրանն էր.

ՏԻԳՐԱՆ Ա. ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

Տիգրանը մեր ամենանշանաւոր թագաւորներից մինն էր։ Նա իմաստուն, քաջ, աշխարհակալ և ժողովրդասէր էր։ Ազգային երգիչները բամբիռ նուագելով գովում էին նրա շէկ ու գանգուր մազերը, անուշ աչքերը, բարձր հասակը, լայն թիկունքը, գեղեցիկ ոտները։

Կերակրի մէջ նա չափաւոր էր, կերուխումի մէջ օրինաւոր, իմաստուն, վեհանձն և մարդկային բոլոր արժանիքներով լի։ Արդարադատ էր նա, և ամեն բանի մէջ հաւասարասէր. ոչ լաւերին էր նախանձում և ոչ թոյլերին էր արհամարհում, այլ ամենքին առհասարակ խնամք էր տանում։

Մեր երկիրը նա բարձրացրեց, քաջերի գլուխն անցնելով, քաջութիւններ ցոյց տուաւ և բազմաթիւ ազգեր հարկատու և հպատակ դարձրեց մեզ։

Երկիրը հարստացրեց ոսկու մետալներով ու թանկագին քարերով։ Ժողովուրդն այն աստիճան հարստացաւ, որ նրա ժամանակ մարդ ու կին հագնւում էին թանկագին հագուստներ։—

Տիգրանն առանձին ուշք դարձրեց զօրքի վրայ, հետեւակները դարձրեց հեծելազօրք, պարսաւորին տուաւ նետ ու աղեղ և բոլոր մնացեալին զինեց տեգով, նիզակով և վահանով, այնպէս որ, միայն նրանց զէնքի շառաչն ու փայլը բաւական էր թշնամուն վախեցնելու և հալածելու։

Տեսնելով Տիգրանի աշողութիւնները, Պարսից թագաւոր Կիւրոսը դաշն կապեց Տիգրանի հետ, որ միասին պատերազմեն Մարաց Աժդահակ թագաւորի դէմ։—

Ըստ աւանդութեան Աժդահակը մի երազ է տեսնում և պատմում իր պալատականներին. «Հայաստանի մի ձիւնապատ լեռան վրայ, ասում է նա, տեսայ մի գեղեցիկ կին, որ յանկարծ երեք կարիճ ծնաւ. առաջինը առիւծի վրայ նստած սլացաւ դէպի արևմուտք, երկրորդը ընձէր վրայ նստած դնաց դէպի հիւսիս, իսկ երրորդը մի ամեհի վիշապ սանձելով յարձակուեց իմ տէրութեան վրայ։ Այն ժամանակ, երբ ես գոհ էի մատուցանում կուռքերին։ Նա կամեցաւ կործանել կուռքերը, ես միջամտեցի, բայց յաղթուելով սպանուեցայ»։

Պալատականները բացատրեցին, որ Տիգրանի կողմից վտանգ է սպառնում Աժդահակին և խորհուրդ տուին բարեկամութեամբ այդ վտանգի առաջն առնել։

Աժդահակը մարդ է ուղարկում Տիգրանի մօտ և նրա քրոջը, Տիգրանուհուն կին ուզում։ Տիգրանը մեծ պատուով և ընծաներով ուղարկում է Տիգրանուհուն կնութեան։ Աժդահակը Տիգրանուհու սիրտը գրաւելուց յետոյ սկսաւ նրա նախանձը շարժել և գրգռել, թէ Տիգրանն իր կին Զարուհու դրդմամբ կամենում է գրաւել Մարաց թագաւորութիւնը, որ ինքը Զարուհին լինի տիկնանց տիկին և թագուհից բարձր։

Տիգրանուհին հասկանում է իր մարդու խորամանկութիւնը և հաւատարիմ մարդու ձեռքով իմաց տալիս եղբօրը։ Երբ Տիգրանը հրաւէր ստացաւ Աժդահակից տեսութեան գալու սահմանի վրա՝ նա զօրքով ընդառաջ ելաւ Աժդահակին, և պատերազմն սկսաւ այն ժամանակ, երբ գեղեցիկ Տիգրանուհին փախչելով ազատուել էր Աժդահակի ձեռքից։ Պատերազմի մէջ Տիգրանը նիզակն այնպէս է խրում Աժդահակի կուրծքը, որ յետ քաշելիս թոքերի կէսն էլ հետն է հանում, և յաղթութեամբ վերջ է դնում կըռւին, որ երկու կողմից տևել էր բաւական երկար։

21405-60 1004 17448

Պատերազմի ժամանակ Տիգրանին դաշնակից էր պարսից Կիւրոս թագաւորը, որ և տիրեց Մարաստանին. իսկ մեր Տիգրանը 10,000 զերի բերեց Հայաստան Աժդահակի կին Անոյշի հետ՝ և բնակեցրեց Մասիսի արևելեան կողմը, որտեղից առաջացաւ Վիշապազուն կամ Մուրացան ցեղը։

ՏԻԳՐԱՆԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Տիգրանի յաջորդներից նշանաւորն էր նրա կրտսեր որդին Վահագը, որ սաստիկ քաջութեան համար Վիշա-

պաքաղ կոչուեցաւ։ Սա այնպիսի գործեր կատարեց, որ ժողովուրդը նրան աստուածների կարգը դասեց, իսկ վրացիք նրան արձան կանգնեցին և պաշտում էին։

Գողթան երգիչները նրա մարդկային ծնունդը մոռացան և այսպէս էին երգում. «ցաւի մէջ էին երկինքը, երկիրը և ծիրանի ծովը։ Մի կարմիր եղեգնիկ, որ ծիրանի ծովի մէջն էր, ծուխ ու բոց էր արձակում. այդ բոցի մէջ մի պատանեակ էր վազում, նրա մազերը հուր էին, նրա մօրուքը բոցեղէն էր և աչքերը մէկ-մէկ արեգակ»*) —Սա վահագն էր։—

Տիգրանի յաջորդներից էր և Վահէ, որ 30,000 հեծեալ և 7000 հեծելազօրով օգնութեան գնաց Դարէհ թագաւորին ընդդէմ Ագէքսանդր Մակեդոնացու։ Վահէն մեռաւ պատերազմում և 330 թուին Հայաստանն ընկաւ Մակեդոնացի աշխարհակալի ձեռը։—

ՄԱԿԵԴՈՆԱՆ—ՍԵԼԵԻԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ.

(330—150 Քր. ա.)

Ագէքսանդր Մակեդոնացին տիրեց Հայաստանի հարաւային և արևմտեան նահանգներին միայն։ Հիւսիսային Հայաստանը, կուր և Արաքս գետերի մէջ, ինչպէս երևում է, մնաց անկախ հայ իշխանների ձեռքին, որոնց պատմութիւնը մեզ չի հասել։

Հարաւարևմտեան Հայաստանն էլ շարունակ պատերազմների մէջ էր. նախ իշխեց Միհրան, ապա Չարասիրա Նէոպտղոմէոս, որին հալածելով Արդուարդ հայ իշխանը, տիրեց Հայաստանին։ Վերջը 301 թ. Հայաստանն ընկաւ Սելևկեան թագաւորների ձեռքը։ Դրանք մեր երկիրը կառավարում էին հայ իշխանների միջոցով, որոնցից նշանաւոր եղաւ Արտաշէս։ Նա պաշտպանեց և զարգացրեց արհեստները, վաճառականութիւնը և երկրագործութիւնը։

*) Կարդալ. «Գողթան երգեր». «Հայ հեղինակներ» երես 287։

Արտաշէս օգտուեց Սելևկացոց թուլութիւնից և Հայաստանը ազատեց նրանց լծի տակից, դառնալով հայոց ինքնիշխան թագաւոր։ Սրա ժամանակ էր, որ Կարթագենացի հանճարեղ զօրավար Աննիբալը փախաւ Հայաստան։ Արտաշէսը նրան սիրով ընդունեց և Արաքսի ձախ ափին նրա խորհուրդով հիմնեց Արտաշատ քաղաքը (180 թ. Ք. ա.)։

Արտաշէսին յաջորդեց Արտաւազդ։ Հայերը ձանձրանալով նրա թուլութիւնից դիմեցին պարթևներին, որ եկան և Հայաստանին տէր դարձան։—

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ԱՐՇԱԿՈՒՆԻԲ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (150 թ. Ք. ա.)

Պարթևները մի փոքրիկ ազգ էին, որ ապրում էին Կասպից ծովի հարաւարևելեան ափերի մօտ, լեռնաստանում։ Նրանք թափառական էին, բայց քաջ աղեղնաւոր ու ձիավարժ։ Սելևկացոց ժամանակ Արշակ անունով մի պարթև ապստամբեց և հետզհետէ սկսաւ իր երկիրն ընդարձակել։ Նոյն ընթացքին հետևացան և նրա յաջորդները, մինչև որ Արշակ Մեծն իր սահմանները տարածեց մինչև Հնդկաստանի Ինդոս և Հայաստանի Եփրատ գետերը։ Սրա ժամանակ էր, որ Հայերը խնդրեցին պարթևաց պաշտպանութիւնը և Արշակ Մեծն իր եղբայր Վաղարշակին ուղարկեց Հայաստան իբրև թագաւոր և Հայաստանում 150 թ. հաստատուեց Արշակունեաց հարստութիւնը, որ ամենափառաւորն եղաւ մեր պատմութեան մէջ։

Արշակը Հայաստանին միացրեց Ատրպատականն ու Միջագետքը, հիւսիսից էլ Սև ու Կասպից ծովի մէջ գտնուած երկիրները մինչև Կովկասեան լեռները և դրանով կազմեց մի ահագին Հայ-պարթև տէրութիւն, որ պիտի դիմադրէր Սելևկեանների յարձակումներին։

Արշակը Հայաստանի թագը դնելով իր եղբայր Վաղարշակի գլուխը, դարձրեց նրան մի ինքնագլուխ թագաւոր

պատուիրելով կառավարել և ընդարձակել իր երկիրները. «զի սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունի» (քաջերի սահմանը իրանց զէնքն է, որքան կտրէ, այնքան կը տիրէ)։

Սելևկեան հպատակները ոիրով չուզեցան հնազանդել Վաղարշակին, այլ միանալով, Կապադովկիայի իշխան Մորփիւլիկէսի առաջնորդութեամբ դուրս եկան Վաղարշակի դէմ պատերազմի։

Պատերազմը տեղի ունեցաւ Փոքր-Հայքում։ Մորփիւլիկէսը, որ մի քաջ մարդ էր, մի խումբ թիկնապահների հետ ճանապարհը մաքրելով հասաւ մինչև Վաղարշակի ամրացած տեղը։ Սակայն հայ իշխանները փրկեցին իրանց թագաւորի կեանքը սպանելով Մորփիւլիկէսին և հալածեցին նրա զօրքը։

ՎԱՂԱՐՇԱԿԻ ՀԱՍՏԱՏԱԾ ԿԱՐԳԵՐԸ

Վաղարշակն իր աթոռը հաստատեց Մծբին և այնուհետև ծանօթանալ ուզեց հայոց անցեալին։ Նա Հայաստանի մէջ մեր պատմութեան մասին ոչ մի տոյզ գրուածք չգտաւ։ Փիտնական Մար-Աբասին, որ ազգով ասորի էր, Վաղարշակն ուղարկեց իր եղբօր մօտ Նամակով և խնդրեց, որ Թոյլ տայ Նինուէի գրատան ձեռագիրները քննելու։ Մար-Աբասն այդտեղ մի գիրք գտաւ հայոց պատմութեան մասին, և արտագրելով, բերաւ Հայաստան։ Վաղարշակը հրամայեց այդ գիրքը պահել իր գանձատանը և նրանից զանազան կտորներ փորել տուաւ արձանների վրայ։

Ծանօթանալով հայերի անցեալին, Վաղարշակն սկսաւ կարգաւորել Հայաստանը հետևելով նրա հին սովորութիւններին և կամ շատ բան էլ փոխ առնելով աւելի կըրթուած ազգերից։

Հայաստանի սահմանների վրայ նա նշանակեց կուսակալներ, սահմանապահներ և բդեշխներ։ Քաղաքներում և աւաններում նշանակեց դատաւորներ (իրաւարար)։ Բացատ իշխանին թագաւորներին թագ դնելու և զօրքին հրամանատար լինելու իրաւունքը տուաւ, ուստի Բագրատունիք կոչուեցան «թագադիր — տսպետ»։ Աժդահակից առաջ եկած նախարարութեան, որ Մուրացան էր կոչւում, նշանակեց թագաւորի երկրորդը։ Ժորխոռունեաց յանձնեց իր անձի պաշտպանութիւնն ու թիկնապահութիւնը։

Վարաժնունեաց ցեղին տուաւ որսերի վերակացութիւնը, Արծրունիք-որսի ժամանակ արծիւները պիտի տանէին թագաւորի առաջ. Գնթունիք ստացան հանդերձ պահելու և հագցնելու պաշտօն. Վահագի ցեղին տալիս է քրմապետութեան իրաւունք։ Արմաւիր քաղաքում կանգնում է արևի, լուսնի և իր նախնիների արձանները, որոնց պաշտում էին իբրև Աստուած։

Իր անձի համար էլ Վաղարշակ նշանակեց երկու յաշաարներ, որոնք գրով պիտի յիշեցնէին նրան, մինը բարի գործերը, միւսը պատիժները։ Բարի յուշարարին նա հրամայում է յիշեցնել իրան արդարն և իրաւացին, եթէ ինքը յարկացած լինի։

Արքունի տան մէջ էլ նա մտցրեց կարգ ու կանոն. որովհետև շատ որդի ունէր, կարգադրեց, որ միայն անդրանիկը-թագաժառանգը ճոխ իր մօտ, իսկ ճնացեալները պիտի ապրէին Հաշտենից գաւառում։

Վաղարշակը մեռաւ Մծբին քաղաքում 22 տարի թագաւորելուց յետոյ։

Վաղարշակին յաջորդեց Արշակ Ա., որ թագաւորեց 13 տարի. սա խաղաղութեամբ շարունակում էր հօր գործերը, երբ ստիպուած եղաւ պատերազմի դուրս գալու Պոնտացոց դէմ։ Արշակը նրանց յաղթեց և Սև ծովի եզերքը մի քարէ արձան կանգնեց իբրև յաղթութեան նշան, որ Պոնտացիք սկսան պաշտել իբրև աստուած։

Ա Ր Տ Ա Շ Է Ս Ա.

Արշակին յաջորդեց քաջ ու պատերազմասէր Արտաշէսը։ Մինչև սրա թագաւորելը պարսից թագաւորը համարում էր առաջինը, իսկ հայոց թագաւորը նրա երկ-

ըորդը։ Արտաշէսն ստիպեց պարսից Արշական թագաւորին և խլեց նրանից առաջնութիւնը, և նրան դարձրեց իր երկրորդը։ Իր արքունիքն էլ հաստատեց Պարսկաստան և դրամ կտրել տուաւ այնտեղ, իր պատկերով։ Այս իրաւունքն էլ առաջ միայն պարթևաց թագաւորին էր յատուկ։

Նա հետզհետէ կարգաւորեց և շատացրեց իր զօրքը այնքան, որ նրանց քցած քարերից բլուրներ էին կազմ-

ԱՐՏԱՇԷՍ Ա.

ւում. նրանց արձակած նետերն արևի լոյսը խաւարեցնում էին։

Պոնտոսի թագաւոր Միհրդատին տուաւ իր աղջիկ Արտաշամն և դաշնաւորեց իր հետ։ Իր որդի Տիգրանին յանձնեց Հայաստանի թագը հէնց իր իշխանութեան ժամանակ, անցաւ մեծ զօրքով, յարձակուեց գործեց Պոնտոսի և Միջերկրականի մէջ գտնուած թագաւորութիւնների վրայ և բոլորին նուաճեց։

Այնուհետև անցաւ Թրակիա, սպառնաց Յունաստանին և բազմաթիւ ոսկի ու թանկագին արձանները ուղարկեց Հայաստան։

Հռոմէացիք այդ ժամանակ զբաղուած էին ներքին կռիւներով և պատերազմի դուրս չէկան մեր Արտաշէսի դէմ, որ նուաճել էր ամբողջ Փոքր—Ասիան։ Նրանք խոբամանկութեամբ կաշառեցին Արտաշէսի զօրավարներին, որոնք դաւաճանօրէն սպանեցին իրանց թագաւորին Փոքր—Ասիայում (89 թ.)։

ՏԻԳՐԱՆ Բ. ՄԵԾ

Տիգրան Բ-ի ժամանակ Հայաստանի փառքը հասաւ իր ամենաբարձր աստիճանին։ Հօր գահի հետ նա ժառանգել էր նրա զօրութիւնն ու փառասիրութիւնը։ Հօր մահը լսելուն պէս նա անցաւ զօրքի գլուխը և գնաց Յունաց վրայ, որոնք արդէն ոտք էին կոխել Հայաստանի սահմանները։ Նրանց յաղթելուց յետոյ Տիգրանը կապադովկիան յանձնեց իր փեսայ Միհրդատին կառավարելու։

Պարսից Արշական թագաւորը լսելով Արտաշէսի մահը, կամեցաւ իր վրէժն առնել Տիգրանից և աւագութիւնը կրկին յետ խլել։ Պատերազմը տեղի ունեցաւ Արաքսի ափերի մօտ. Արշական թագաւորն ընկաւ Տիգրանի զինուորների ձեռով և Ասիայի գերիշխանութիւնը ձգաց Տիգրանին։

Այդ ժամանակները Ասորոց թագաւոր Անտիոքոսը իր եղբօր հետ կռուի մէջ էր թագի համար. ժողովուրդը ձանձրացած այդ կռիւներից պիմեց Տիգրանին։ Սա էլ առանց պատերազմների տիրեց Ասորիքին, քշեց այնտեղից Անտիոքին և 22 տարի շարունակ կառավարեց նրա երկիրները,

Ասորիքից յետոյ Տիգրանը տիրեց Փիւնիկէին և սպա գնաց նուաճելու Պալէստինը։ Երուսաղէմի Ալէքսանդրա թագուհին մեծ ընծաներով դուրս եկաւ Տիգրանի առաջ։

Տիգրանը Հայաստան դարձաւ բազմաթիւ հրէայ գերիներով։

Տիգրանն իր գերիշխանութիւնը տարածեց ամբողջ արևմտեան Ասիայի վրայ և ամենքը նրան ճանաչեցին իբրև թագաւորների թագաւոր։

Մարք, Արաբացիք, Ատրպատականը, Վրաստանը, Աղուանք, Բաբելացիք, Կիլիկիան, Կապադովկիան և Միջագետքը հարկ էին տալիս մեր Տիգրանին։

ՏԻԳՐԱՆ Բ.

Պլուտարքը պատմում է, որ թագից զրկուած չորս արքայ ծառայում էին նրան, ուրիշ չորսն էլ թիկնապահի պաշտօն էին վարում և երբ Տիգրանը ձի էր հեծնում, երկու կողմից գնում էին ոտով։

Տիգրանի հեռոյ Միհրդատը, որ Արտաշէսի մահով բաւական թուլացել էր, Տիգրանի օգնութեամբ նորից զօրացաւ և պատերազմ հրատարակեց հռոմայեցոց դէմ։ Նա տիրեց Փոքր-Ասիայի մանր տէրութիւններին և զօրք մտցնելով Յունաստան, ամբողջ Յունաստանն ապստամբեցրեց Հռոմի դէմ։ Սակայն հռոմայեցիք նրա վրայ ուղարկեցին Սուլլա զօրավարին, որ Միհրդատից եօթ խլեց նրա նուաճած երկիրներից մեծ մասը և նրան ստիպեց մի ամօթալի հաշտութիւն կապել (86 Թ.) ստանալով պատերազմի բոլոր ծախսերը։

Սակայն, Միհրդատը նորից զօրք հաւաքեց և կրկին սպատերազմել սկսաւ հռոմայեցոց դէմ. Տիգրանն էլ նրան օգնելու համար յարձակուեցաւ Կապադովկիայի վրայ և 20,000 գերի բերաւ Հայաստան։

Հռոմայեցիք այս անգամ Միհրդատի և Տիգրանի դէմ ուղարկեցին Լուկուլլոս զօրավարին։

Մի քանի ճակատամարտից յետոյ Միհրդատը Ամիսոսի մօտ սաստիկ պարտութիւն կրեց և փախաւ Հայաստան Տիգրանի մօտ (70)։ Տիգրանը զայրացած նրա երեսն անգամ չուզեց տեսնել, այլ միայն ազատեց նրան թշնամու ձեռքից։ Լուկուլլոսի մարդիկն եկան և Տիգրանից պահանջեցին, որ Միհրդատին իրանց յանձնի։ Տիգրանը մերժեց այդ և պատրաստուեց զէնքով դուրս գալու հռոմայեցոց դէմ։

Լուկուլլոսն արդէն մտել էր Միջագետք և պաշարել էր Տիգրանակերտն, ուր պահուած էին Տիգրանի գանձերը։ Տիգրանի հրամանով 6,000 ձիաւոր Լուկուլլոսի բանակը ճեղքելով մտան Տիգրանակերտ և ազատեցին Տիգրանի հարստութեան մի մասը։

Տիգրանն ահեղ բանակով (200,000 հոգի) եկաւ և կանգնեց Լուկուլլոսի դէմ. տեսնելով նրա սակաւաթիւ զօրքը, նա ասաց.«ովքեր են սրանք, եթէ դեսպաններ են, սաստիկ շատ են, իսկ եթէ պատերազմողներ, քիչ են»։— Այսպէս հպարտացած, նա անհոգ բանակ դրաւ։ Լուկուլլոսը նկատելով Տիգրանի անհոգութիւնը, յանկարծ վրայ տուաւ հայոց և այնպիսի շփոթ գցեց բանակի մէջ, որ Տիգրանը ժամանակ չունեցաւ իր ցրուած բանակը կարգի բերելու։ Ժամանակ չկորցնելով, Լուկուլլոս պաշարեց Տիգրանակերտը և քաղաքի մէջ գտնուած յոյների մատնութեամբ քաղաքն առաւ։

Մի տարուց յետոյ պատերազմը նորոգուեց Հայաս-

տանում, Արածանու ափին, Արտաշատ մայրաքաղաքի մօտ։ Պատերազմը երկու կողմից էլ կատաղի էր և այս անգամ Լուկուլլոս ստիպուած էր յետ քաշուելու դէպի Միջագետք, ուր նա պաշարեց Մծբին քաղաքը։ Տիգրանը ժամանակ գտաւ և նորից նուաճեց իր կորցրած երկիրները։ Միհրդատն էլ մի քանի յաղթութիւններով նորից կրկին յետ խլեց իր կորցրածը։

Այդ ժամանակ Հռոմը Տիգրանի դէմ ուղարկեց Պոմպէոս զօրավարին։ Նա մի սարսափելի ջարդ տուաւ Միհրդատին Եփրատի ափերի մօտ. Միհրդատը հազիւ ազատուեց գերի ընկնելուց։ Այնուհետև նրան դաւաճանեց իր հարազատ որդին և նա ինքնասպան եղաւ։

Պոմպէոսն այնուհետև իր դէնքերն ուղղեց Տիգրանի դէմ։ Հայաստանում նրա հետ միացաւ Տիգրանի հարազատ որդին, Փոքր Տիգրանը, որ հօրը դաւաճանելով միաբանել էր պարթևաց թագաւորի հետ, ընդդէմ Տիգրան Մեծի։

Տիգրանը պաշարուած արտաքին ու ներքին թշնամիներից, սիրտը կոտրուած հարազատ որդու ամօթալի դաւաճանութեամբ, խոհեմութիւն համարեց հաշտութեամբ վերջացնել բանը և դուր արիւնհեղութեան տեղիք չտալ։ Նա անձամբ գնաց հռոմայեցոց բանակը։ Այնտեղ նրան ընդունեցին արժանաւոր պատիւներով։

Պոմպէոսի հետ կապած հաշտութեամբ Տիգրանի ձեռքից ելան Փոքր Ասիայում նուաճած երկիրները և նրանից բուն Հայաստանը Միջագետքի հետ։ Փոքր Տիգրանը, որ կամենում էր խլել թագը հարազատ հօր գլխից և դառնալ Հայաստանի թագաւոր, անբաւական մնաց այս դաշինքից։ Պոմպէոսն էլ իմանալով, որ նա գաղտնի յարաբերութիւնների մէջ է պարթևաց թագաւորի հետ, շղթայակապ պահեց նրան իր մօտ իբրև յաղթանակի գարդ։

Դաւաճան որդին հայոց թագի փոխարէն ստացաւ Հռոմի շղթաները։

Պոմպէոսի հեռանալուց յետոյ Տիգրանը մտածեց կրկին յետ դարձնել կորցրած երկիրները, ուստի դաշն կապեց պարթևաց հետ, նրանց թագաւորին վերադարձնելով

նախագահութեան պատիւը։ Այդ ժամանակ Եռապետները բաժանել էին Հռոմի նուաճած երկիրները և Ասիան ընկել էր Կրասոսին։ Պարսից և հայոց զօրքին առաջնորդում էր Սուրէն Պարթև ասպետը, որ Յառանի մօտ Կրասոսի զօրքին մի սարսափելի ջարդ տուաւ և փախցրեց կռուի դաշտից։

Երբ Կրասոսը Սուրէնի հրաւէրով գալիս էր նրա մօտ հաշտութիւն կայացնելու, ճանապարհին խռովութիւն պատահեց և պարթև պատգամաւորները սպանեցին Կրասոսին։ Հռոմայեցի զօրքը անտէր մնալով ցիր ու ցան եղաւ մեծամեծ կորուստներ տալով։ Այդ ժամանակ պարթևաց թագաւորի որդին, Բակուրն, ամուսնանում էր Տիգրանի դստեր հետ և Սուրէնը հարուստ ասպարների հետ իբրև յաղթականի ընծայ հայոց արքունիքն ուղարկեց սպանուած Կրասոսի գլուխը։ Երբ Կրասոսի գլուխն արքունիք բերին, Տիգրանի միւս որդի Արտաւազդը այդ առթիւ մի ողբերգութիւն գրեց յունարէն։

Կրասոսի տեղ շուտով Տիգրանի դէմ դուրս եկաւ Կասիոս։ Տիգրանն արդէն ծերացել էր և պարսից օգնական բանակը յանձնեց Բարզափրան Ռշտունի նախարարին։ Սա աջողութեամբ առաջ գնաց և Անտիոքի մէջ պաշարեց Կասիոսին, որն ազատուեց միայն Կիլիկիայի հիւսիսոս Ցիցերոնի օգնութեամբ։ Երկար կռիւներից յետոյ մի վերջնական պատերազմում հայ սպարապետը յաղթելով, կրկին նուաճեց Ասորիքն ու Փիւնիկէն։ Բարզափրան այնուհետև Պալէստին գնաց՝ Գնէլ Գնունի զօրավարի ձեռքով Երուսաղէմին տիրեց և բազմաթիւ գերիներով ու աւարով վերադարձաւ Հայաստան, զօրքի հրամանատարութիւնը տալով Բակուրին։

Հռոմայեցիք նորից շարունակեցին իրանց կռիւները միացեալ հայերի և պարթևների դէմ, սակայն Տիգրանը, որ այս պատերազմների կազմակերպողն ու կառավարողն էր, արդէն ուժասպառ ու ծերացած 53 տարուայ թագաւորութիւնից՝ մեռաւ (36 թ.) իր թագը թողնելով Արտաւազդ որդուն*)։

*) Կարդալ. «Հողագործութիւնը և առևտուրը Հայոց մէջ» «Հայ հեղինակներ» գ. տպ. եր. 230.

ԱՐՏԱՒԱԶԴ

Արտաւազդը ոչ հօր փառասիրութիւնն ունէր, ոչ էլ նրա քաջութիւնը, այլ զբօսասէր և որկրամոլի մէկն էր։ Հռոմէացի Անտոնիոս զօրավարին նա հաշտութիւն խօսեց և խոստացաւ օգնել նրան ընդդէմ պարթևաց։ Սակայն իր խոստումը չկատարեց և խաբէութեամբ մահ ածեց Հռոմի լեգէոնները անծանօթ ճամբաներով, մինչև որ մի յարմար րոպէին հեռացաւ Անտոնիոսից։ Արաքս գետն անցնելիս նա արդէն կորցրել էր 24,000 մարդ և հազիւ իր բանակի մնացորդով Միջագետք հասաւ, ժառանգելով վրէժը մի այլ անգամի թողնել։

Հայ զօրքի սոսկմամբ թուլամորթ Արտաւազդը կովկասեան ազգերից զօրք հաւաքեց և Միջագետքից դուրս քշեց հռոմայեցիներին։

Անտոնիոսն այս բանից աւելի ևս զայրացած Արտաւազդի վրայ եկաւ մեծ զօրքով և յաղթեց նրան։ Հայերը յետ քաշուեցան։ Անտոնիոսն ամեն հնար գործ դրեց Արտաւազդին իր բանակը բերելու, բայց հայ թագաւորը նրան չէր հաւատում։ Վերջը, երբ Անտոնիոսը մտաւ Հայաստան, Արտաւազդը խաբուած նրա խոստումներից գնաց Անտոնիոսի մօտ։ Անտոնիոս Արտաւազդին մահ ածեց հայոց բերդերը, նրանց գանձերը խլելու համար, բայց հայերը չէին խաբուում։

Անտոնիոսը Արտաւազդին ոսկի շղթաներով կապեց և տարաւ Ալէքսանդրիա, Կլէոպատրա թագուհուն որպէս պարգև։ Վերջինս գլխատել տուաւ Արտաւազդին (31 թ.)։

Արտաւազդից յետոյ, ինչպէս երևում է Հայաստանն ապստամբել է դառնում անընդհատ պատերազմների։ Մի կողմից Հռոմի լեգէոնները, միւս կողմից Պարթև զօրքերը շարունակ ասպատակում էին Հայաստանը։ Նրանցից ամեն մինն աշխատում էր իր կուսակից մարդուն յանձնել Հայաստանի թագը, իր երկրի սահմանները ընդարձակելու համար։

Այդ պատերազմներն էին երևի պատճառը, որ մի շարք թագաւորներ յիշւում են հելլէնական Հայաստանում, գլխաւորապէս արտաքին պատմիչների կողմից. մի այլ շարք էլ հարաւային Հայաստանում,—Միջագետքում, որոնց մանրամասն պատմութիւնը մեզ աւանդում են ազգային պատմիչները։

Այս վերջին թագաւորները նստում էին Մծբինում. նրանցից նշանաւոր հանդիսացաւ Աբգարը, որն ըստ աւանդութեան առաջին քրիստոնեայ թագաւորն եղաւ ինչպէս հայոց մէջ, այնպէս և ամբողջ աշխարհում։ Նա թագաւորեց Քրիստոսի 3 թուականին։

ԱԲԳԱՐ

Արշամին յաջորդեց Աբգար (3 թ. Քրիստ. առաջ)։ Սրա ժամանակ Հռոմի գործակալները Օգոստոս կայսեր պատկերը բերին և դրին հայոց մեհեաններում։ Հերովդէսը պահանջեց, որ իր պատկերն էլ կայսեր պատկերի հետ դրուի։ Աբգարը մերժեց այս պահանջը։ Հերովդէսը մի բանակ ուղարկեց նրա վրայ, որը սաստիկ պարտութիւն կրեց։ Բարեբաղդաբար Հերովդէսը մեռաւ և չկարողացաւ վրէժ առնել Աբգարից։

Հռոմում չէին մոռացել այս դէպքը և վրէժ առան Աբգարի դեսպաններին անպատուելով։

Աբգարն էլ պատրաստութիւն էր տեսնում ապստամբելու և Հռոմի լուծից ազատուելու։ Ուստի նա իր մայրաքաղաքը Մծբինից տեղափոխեց Եդեսիա և սկսեց այս քաղաքն ամրացնել։ Մահադիր լինելով պարթևաց հետ միանալու, նա գնաց Պարսկաստան և հաշտեցրեց Աքշաբէր թագաւորի որդոց, որոնք կռւում էին գահի համար, բայց ապստամբութեան գործը գլուխ չեկաւ։

Աբգարը Պարսկաստանից վերադարձաւ ծանր հիւանդ, այդ ճամբորդութիւնը կասկածի մէջ գցեց հռոմայեցոց։ Աբգարը դեսպաններ ուղարկեց Հռոմի գործակալ Մարինոսի մօտ, որը դեսպաններին ընդունեց մեծ պատուով։

Երուսաղէմից անցնելով, Աբգարի դեսպանները տեսան այն հրաշքները, որ գործում էր Յիսուս, և պատմեցին թագաւորին։

Աբգարն իր Անանէ սուրհանդակի ձեռքով նամակ ուղարկեց և խնդրեց Յիսուսին, որ գայ և իր հիւանդութիւնը բուժէ։ Յիսուս Թոմա առաքեալի ձեռքով պատասխանեց, թէ նա չի կարող գնալ Աբգարի մօտ, այլ համբառնալուց յետոյ կուղարկէ իր աշակերտներից մինին, որ կբուժէ Աբգարին։

Իրաւ Քրիստոսի Համբարձումից յետոյ Թադէոս առաքեալը եկաւ Միջագետք, բուժեց Աբգարի հիւանդութիւնը և մկրտեց նրան իր պալատականների հետ։ Այնուհետև Ադդէ պալատականին ձեռնադրեց եպիսկոպոս և թողնելով իր տեղը, գնաց Հայաստան քարոզելու Քրիստոնէութիւնը։

Այսպիսով Աբգար առաջին թագաւորն էր, որ ընդունեց քրիստոնէութիւն։ Այնուհետև նա նամակ գրեց Տիբերիոս կայսեր, պարսից թագաւոր Արտաշէսին և Ասորեստանի թագաւոր Ներսէհին, յորդորելով նրանց, որ քրիստոնեաներին չհալածեն և Քրիստոսի հաւատն ընդունեն։

Նա մեռաւ այս նամակների պատասխանը չստացած 35 թ. Քրիստ. յետոյ։

Ա Ն Ա Ն Ո Ի Ն (35 թ.)

Անանուն թագն ստանալուն պէս հալածանք սկսեց քրիստոնէութեան դէմ. մեհեանները բաց արաւ և պահանջեց Ադդէից, որ քրիստոնէութիւնը թողնէ և սկսէ առաջւայ նման թագ պատրաստել թագաւորի համար։ Երբ Ադդէն մերժեց թագաւորի պահանջը և քարոզում էր ժողովրդին, սպանուեց արքայական զինակրի ձեռքով։

Հայաստանի Շաւարշան գաւառի կառավարիչ էր Սանատրուկը, Աբգարի քրոջ որդին։ Սա աւելի կատաղի թշնամի դուրս եկաւ ընդդէմ քրիստոնէութեան, քան Անանունը։ Սանատրուկը նահատակել տուաւ Թադէոս առաքեալին և Սանդուխտ կոյսին, որ իր հարազատ դուստրն էր։ Սանատրուկը Արշամից ապստամբելով իրեն թագաւոր հրատարակեց հիւսիսային Հայաստանում և ապա զօրքով դիմեց Անանունի վրայ։ Այս վերջինն իր պալատը նորոգելիս մի սիւն ընկաւ վրան և ջախջախեց նրա ոտները։ Եղեսացիք մարդ ուղարկեցին և խոստացան Սանատրուկին յանձնել քաղաքը, միայն թէ նա ձեռ չտայ նրանց կրօնին։

Սանատրուկ խոստացաւ, բայց խոստումը չկատարեց։

Կոտորել տուաւ Աբգարի ցեղը բացի աղջիկներից և հեղինէ թագուհուց։ Վերջինս Երուսաղէմ գնաց և իր ամբողջ գանձը բաժանեց աղքատներին սովի ժամանակ։

Ե Ր Ո Ւ Ա Ն Դ

Հիւսիսային Հայաստանի կառավարութիւնը Սանատրուկ յանձնել էր Երուանդ իշխանին, որ մօր կողմից Արշակունի էր։ Երբ որսի ժամանակ Սանատրուկ պատահմամբ սպանուեց, Երուանդը գրաւեց նրա թագը, բայց Բագրատունի իշխաններից ոչ մինը յանձնառու չեղաւ նրա գլխին թագ դնելու։

Երուանդ իր թագն ապահովելու համար կոտորել տուաւ Սանատրուկի ցեղը։ Ազատուեցաւ միայն Արտաշէս մանուկը. նրան պահում էր Սմբատ Բագրատունին հովիւների մօտ, որ Երուանդի ձեռը չընկնի, մինչև որ առիթ գտաւ անցնելու պարսից սահմանը։

Պարթևաց Վարէն թագաւորը սիրով ընդունեց Արտաշէսին և պատուով պահում էր իր պալատում։

Երուանդ դեսպանների ձեռքով աշխատում էր հաւատացնել պարսից թագաւորին, որ Արտաշէսը հովուի որդի է և ոչ թէ Սանատրուկի։

Բայց նրա բոլոր փորձերը զուր անցան։ Սմբատից վրէժ առնելու համար կոտորել տուաւ նրա թողած պահապաններին և բանտարկեց նրա երկու աղջիկը։

Հռոմի հետ դաշն կապեց Երուանդ և Միջագետքը յանձնելով նրանց, մայրաքաղաքը տեղափոխեց Արմաւիր։

Որովհետև Արմաւիրն անպարիսպ էր, Երասխի ափին հիմնեց Երուանդաշատ քաղաքը, պարըսպով պատեց, շինեց ամուր միջնաբերդ, այնտեղ բնակութիւն հաստատեց.

Ա Ր Տ Ա Շ Է Ս Բ.

Սմբատ Բագրատունին հաւատարիմ ծառայութեամբ գրաւեց Դարէհ թագաւորի սիրտը այնպէս, որ երբ Արտաշէս մանուկը բաւական մեծացաւ, Դարէհը զօրք տուաւ Սմբատին, որ գնայ Արտաշէսի գահը յետ խլէ։

Երուանդը պատրաստեց և հայ ու վրացի զօրքերով դուրս եկաւ Սմբատի դէմ։ Նախարարներին էլ մեծամեծ պարգևներ տուաւ Երուանդ, որ իր կողմը պահեն, բայց իզուր, հէնց որ Սմբատն ու Արտաշէսը Հայաստան մտան, նախարարների մեծ մասն անցաւ նրա կողմը։

Հակառակորդներն իրար հանդիպեցան Ախուրեան գետի մօտ։ Որպէս զի յաղթութիւնն ապահով լինի, Արտաշէսը մարդ ուղարկեց Մ՚ուրացան նախարարի մօտ, և խոստացաւ թագաւորից յետոյ երկրորդը լինելու պատիւը նրան թողնել, եթէ նա անցնի իր կողմը։

Արգամը յանձ առաւ, և պատերազմը սկսուելուն պէս մի կողմը քաշուեցաւ, թողնելով Երուանդին մենակ։ Այս տեսնելով Երուանդին դաւաճանեցին ինացեալ հայ նախարարներն էլ։ Երուանդը մնաց միայն վրացի վարձու զօրքով, որոնք թէպէտ քաջութեամբ կռիւ մղեցին, բայց Սմբատի յարձակման դիմանալ չկարացին։ Մի քանի քաջեր Երուանդի կողմից յարձակուեցան Արտաշէսի վրայ։ Նրա կաթնեղբայրը, Գիսակ, ազատեց նրան կորցնելով իր դէմքի կէսը։

Երուանդը փախաւ և ամրացաւ Երուանդաշատ քաղաքում։ Սմբատը հետևեց նրան մինչև քաղաքի դռները։ Հետևեալ օրը հասաւ Արտաշէս գլխաւոր բանակի հետ։ Զօրքը Արտաշէսի հրամանով գոռում էր, «Մար ամատ», այսինքն «Մարն (հովիւը) եկաւ», յիշեցնելու համար Երուանդի սուրը, թէ Արտաշէսը հովուի որդի է։—Թեթև յարձակումից յետոյ քաղաքն անձնատուր եղաւ և Երուանդն ապտնուեց մի գինուորի ձեռքով։—

Արտաշէսը վեհանձն վարուեց իր թշնամու դիակի հետ, պատուով թաղել տուաւ և վրան արձան կանգնեց, իբրև Սրշակունու։

Սմբատը Երուանդի գանձատան մէջ գտնելով Սանատրուկի թագը, հանդիսաւոր կերպով դրեց Արտաշէսի գլխին (85 թ.) և պսակեց հայոց թագաւոր։

Արտաշէսը հօր գահին տիրանալով, մտածեց իր բարեկամներին վարձատրել։ Պարթև զօրքին առատ պարգևներ տալով վերադարձրեց իրանց երկիրը։ Արգամին թագաւորի երկրորդը շինելուց յետոյ, իրաւունք տուաւ երկու ականջին օղեր, մի ոսկի կարմիր կօշիկ կրելու և ոսկէ գդալ ու պատառաքաղով ճաշելու։

Սմբատին յանձնեց ամբողջ զօրքի սպարապետութիւնը և երկրի վերակացութիւնը։ Գիսակի որդուն նախարարների կարգը մացրեց և Դիմաքսեան անուանեց հօր քաջագործութեան համար։ Դարէհ թագաւորին էլ մեծամեծ ընծաներ ուղարկեց Սմբատի ձեռքով։ Արտաշէսն իրան մայրաքաղաք ընտրեց Արտաշատ քաղաքը, որ նորոգեց և բազմաթիւ շինութիւններով հարստացրեց։

Հռոմայեցիք, որ Երուանդին ոչ մի օգնութիւն չը հասցրին, նրա անկումից յետոյ Արտաշէսից պահանջեցին հարկ, որ պատերազմից խուսափելով տուաւ։ Հազիւ Հռոմի զօրքերը յետ քաշուեց Հայաստանի սահմաններից, Ալանները միացած Կովկասեան լեռնականների հետ արշաւեցին Հայաստան։ Արտաշէսը նրանց մի լաւ չարդեց, դերի առաւ նրանց թագաւորի որդուն և հալածեց մինչև Կուրի ձախ ափը։ Ալաններն առաջարկեցին մշտական դաշն կապել հայոց հետ և Հայաստանն այլևս չասպատակել եթէ իրանց թագաւորի որդուն յետ տանան։ Երբ Արտաշէս չհամաձայնեց, գետի ափը զուրս եկաւ Ալանաց թագաւորի աղջիկ Սաթենիկը, թարգմանի բերանով սկսեց խօսել Արտաշէսի հետ, համոզելով յետ տալու իր եղբօրը։

Արտաշէսը շատ հաւանեց Սաթենիկին և ինչպէս երգում էին Գողթան երգիչները, «հնծաւ իր սև ձին, և արծուի նման սլանալով գետի մէջ, առաւ ոսկէօղ շիկափոկ

պարանը և այն քցելով օվիորդի վափուկ մէջքը, փախցրեց նրան գետի այս ափը, հարսանիք սարքեց և ամուսնացաւ Սաթենիկի հետ։

Արտաշէսն իր երկարաւուն թագաւորութեան ընթացքում աշխատում էր երկիրը խաղաղ պահել և արուեստներն ու առևտուրը ծաղկեցնել։ Հայաստանի անբնակ տեղերը նա բնակեցրեց դրսից բերած գաղթականներով։ Երբ

ՍԱԹԵՆԻԿ

Սաթենիկի մայրը մեռաւ և երկրի մէջ խռովութիւն ծագեց, Արտաշէս Սմբատին զօրքով ուղարկեց Ալանաց երկիրը, որ հանդարտեցրեց և թշնամիներից շատ գերի բերեց Հայաստան։ Այդ գերիներին Արտաշէս բնակեցրեց Շաւարշան գաւառում, որ յետոյ Արտազ կոչուեցաւ գաղթականների երկրի անունով։

Կասպիական երկիրներից էլ Սմբատ բազմաթիւ գերի

բերաւ, որ նոյնպէս բնակեցրեց Հայաստանի ամայի տեղերում։

Երկրի զանազան մասերը Արտաշէս ահմաններով բաժանեց միմեանցից, սահմանների վրայ քառակուսի քարեր դնելով։

Կամուրջներ շինեց, գետերն ու ծովերը ճանապարհ դարձրեց, ամեն կերպ նպաստեց երկրի մշակելուն և արհեստներ տարածելուն։

Արտաշէսի ժամանակ հայերը ընտելացան գրի գործածութեան և օրերը, շաբաթները, ամիսներն ու տարիները հաշուելուն։

Այս ամենի համար ժողովուրդը սաստիկ սիրեց իր թագաւորին և անմահացրեց նրան իր երգերի մէջ, գովելով, որ Արտաշէսի ժամանակ մի կտոր հող անգամ անմշակ չէր մնացել Հայաստանում և պարապ ու անգործ մարդ չկար իսկի։

Անբաղդ էր Արտաշէսը միայն ընտանեկան կողմից։ Նրա աւագ որդին, չար ու նախանձոտ Արտաւազդը դադար չէր տալիս հօրը։

Նա գանգատուեց Արգամից և խլեց նրանից երկրորդական գահի իրաւունքը։

Մի անգամ Արտաշէսը ճաշի էր հրաւիրուած Արգամի մօտ, արքայորդիք աղմուկ բարձրացրին թէ նա ուզում է Արտաշէսին սպանել և ծերունի Արգամի մազերն ու մօրուքը քաշեցին։ Վրդովուած թագաւորը Մաժան որդուն ուղարկեց զօրքով Արգամի վրայ, որ նրա ցեղը չնչէ։ Արտաւազդը խլեց Արգամից Նախիջևան քաղաքը և Արաքսի հիւսիսն ընկած կալուածները։ Արգամի որդին հակառակեց և Արտաւազդ բնաջինջ արաւ Արգամի ցեղը բոլորովին, գրաւելով նրա կայքն ու կալուածները։

Արգամից յետոյ Արտաւազդի նախանձի առարկան Սմբատ բագրատունին դարձաւ, որին նա ուզում էր սպանել։ Սմբատը վհատնձնօրէն հեռացաւ Տմորիք, զօրքի սպարապետութիւնն էլ թողեց Արտաւազդին։

Որովհետև Արտաշէսի միւս որդիքը նախանձում էին

Արտաւազդին, Արտաշէսը Վրոյր որդուն արքունիքի հազա-
րապետ, իսկ Մաժանին քրմապետ կարգեց,

Բոլոր զօրքն հին սովորութեամբ չորս մասի բաժա-
նեց. արեւելեանը յանձնեց Արտաւազդին, արեւմտեանը Տի-
րանին, հիւսիսայինը Զարէհին և հարաւայինը Սմբատ
Բագրատունուն: Որովհետև Արտաշէս պայմանած հարկը
չտուաւ, պատերազմ ծագեց հռոմայեցիների հետ: Սկզբ-
բում հայերն աջողութիւն ունեցան և յաղթութիւն տա-
րան Սմբատի շնորհիւ, բայց երբ Տրայանոսը կայսր դառաւ
և եկաւ Պալեստինը նուաճեց, Արտաշէսը հաշտութիւն
խնդրեց, վճարելով պահած հարկերը ամբողջովին և այնու-
հետև շարունակ դաշնակից մնաց Հռոմին:

Ադրիանոս կայսեր առաջարկութեամբ Արտաշէս գը-
նում էր պարթևաց երկիրը դաշն կապելու, որ ճանապար-
հին հիւանդացաւ Բակուրակերտ աւանում: Մարդ ուղար-
կեցին Երիզայ աւանը, որ Անահիտ դիցուհուց կեանք և
բուժումն խնդրէ: Մինչև նրա գալուստը Արտաշէս մեռ-
նում է: Գեղեցիկ է նկարագրում նրա թաղումը Արիստոն
Փեղլացին, որ ճամբորդում էր Արտաշէսի հետ իբրև քար-
տուղար: Շատերը նրա սիրելիներից, պատմում է նա,
հարճերից և ծառաներից զրկեցին իրանց կեանքից:

Ժողովուրդը մեծ պատիւներ տուաւ սիրելի թագա-
ւորի դիակին: Դագաղը ոսկեզէն էր, գահոյկը և անկողի-
նը բեհեզ, պատմուճանը ոսկեթել, գլխին թագ էր դրած,
ոսկեպատ զէնքն առաջին, գահի չորս կողմը որդիք և ազ-
գականներն էին կանգնած և ապա զինուորական պաշտօ-
նեաները, նահապետները, նախարարները և զինուորական
վնդերը կազմ ու պատրաստ, որպէս թէ պատերազմ էին
գնում:

Առջևից պղնձեայ փողերն էին նուագում, իսկ յե-
տևից գնում էին երգող կոյսերի խումբը ևս հագած,
դրանց յետևից էլ ժողովրդի բազմութիւնը: Այսպիսի հան-
դիսով տարան ու թաղեցին սիրելի թագաւորին, որի ժա-
մանակ շատերն ինքնասպանութեամբ վերջ դրին իրանց
կեանքին (131 թ.):

Ա Ր Տ Ա Շ Ա Ի Ս Զ Դ (131 թ.)

Արտաշէսին յաջորդեց նրա փառասէր ու նախանձոտ
որդին, Արտաւազդ: Սա իր բոլոր եղբայրներին քշեց Այ-
րարատ գաւառից Աղիովիտ և Առբերան գաւառները, պա-
հելով իր մօտ միայն Տիրանին, իբրև յաջորդ:

Սա կարճ ժամանակ թագաւորելուց յետոյ որսի յե-
տևից երիվարը քշելով ընկնում է մի խորխորատ և մեռ-
նում է:

Սրա մասին է, որ գողթան երգիչները առասպելա-
բանել են, թէ հօր մահուան ժամին, երբ ժողովրդից շա-
տերն իրանց կոտորել են, Արտաւազդը գանգատուել է
ասելով.

«Դու գնացիր և ամբողջ երկիրը հետդ տարար, ես
աւերակներին ինձ թագաւորեմ».—Որի համար Արտաշէսը
նրան անիծում է. «Եթէ դու որսի գնաս ազատ Մասիսի
վրայ, քեզ թող բռնեն քաջերը, տանեն Ազատ Մասիսը,
այնտեղ մնաս, ու լոյս չտեսնես»*):

*) կարդալ. «Գողթան երգեր». Հայ-Հեղինակներ, դ. տպ.
եր. 287. և «Նաւասարդի տօները». եր. 319.

Պատմում են, որ նա մինչև այսօր պահուած է Մահի մէջ, մի այրում, երկու շները շարունակ կրծում են նրա շղթաները, որ ազատեն տիրոջ, բայց երբ ուրբաթ օրը դարբինները ծեծում են սալը մուրճով, նրա շղթաները ամրանում են.

Արտաւազդին յաջորդեցին իր եղբայրները, նախ Տիրան Ա. (131—151) ապա Տիգրան Գ. (151—193)։ Սրան էլ յաջորդեց իր որդին, Վաղարշ (193 թ.) որ հիմնեց Վաղարշապատ քաղաքը Մուրցի և Երասխի խառնուելու տեղը։ Վարդգէսի աւանն էլ պատեց ամուր պարիսպներով և անուանեց Վաղարշապատ։ Սրա ժամանակ հիւսիսային վայրենի ազգերը, Խազիրները և Բասիլները յարձակուեցին Հայաստանի վրայ. Վաղարշը քաջութեամբ հալածեց նրանց, բայց զոհ գնաց թշնամու նետին։

Հօր յաջորդեց որդի Խոսրով Ա. (213), որ զօրքի գլուխն անցնելով, անցաւ Կովկասը, յարձակուեց լեռնականների վրայ, յաղթեց նրանց, արձան կանգնեց իր նշան այդ յաղթութեան և յետ դարձաւ հետը բերելով բազմաթիւ պատանդներ։

Սրա ժամանակ էր, որ Պարսկաստանում Պարթև իշխանութիւնը թուլացաւ և թագն անցաւ Սասանեան իշխանութեանը Պարսկաստանում։ Խոսրով Ա. շատպեց իր ազգականին օգնութիւն հասցնելու, բայց արդէն ուշ էր. Արտաւան Արշակունին սպանուել էր։

Խոսրովը այնուհետև հռոմայեցոց օգնութեամբ պատերազմեց Սրատաշրի հետ, յաղթութեամբ հասաւ Տիզբոն և Սրատաշրին փախցրեց մինչև Հնդկաստան։

Արտաշիրը խորամանկութեան դիմեց։ Նրա խորհրդով Անակ Պահլաւունի իշխանը որպէս փախստական և հալածուած Արտաշրից, իր ընտանիքով ապաւինեց Խոսրովի մօտ։ Խոսրովը սիրով ընդունեց նրան որպէս իր ազգականին, Ուտի գաւառում։

Գարնանը, որի ժամանակ, Անակը մի կողմ կանչեց Խոսրովին և ժահացու վէրք տուաւ նրան։

Նախարարները հասան նրա յետևից և Արտաշատի

կամուրջի վրայ բռնելով, գետը նետեցին և նրա ցեղն էլ սրի անցրին մեռնող թագաւորի հրամանով (261)։

Ազատուեց միայն Գրիգոր անունով մի արաւ զաւակ իր սնոտուի ձեռքով։

Խոսրովի մահից յետոյ հայ նախարարները Փռիւգացի զօրքերի օգնութեամբ փորձ արին դիմադրելու Արտաշրի յարձակման, բայց պարտութեամբ ցրուեցին և Արտաշիր տիրեց Հայաստանին։ Ազատուեց Տրդատ թագաւորազօրին Արտաւազդ Մանդակունին փախցրեց Հռոմ։ Իսկ Օտա Ամատունի իշխանն ազատեց Խոսրովիդուխտ արքայազուտեր, որին արքայական գանձերի հետ պահում էր Անի ամրոցում։

Այսպիսով Հայաստանը զարձաւ պարսից մի նահանգ։

Տրդատը մեծանում և աճում էր Հռոմում, ուր նա քաջութեան և ուժի մեծ համբաւ հանեց։ Մի անգամ վայրենի ցուլի պոզերից բռնելով դուրս պոկեց և վիզը ոլորելով սպանեց։ Մի այլ անգամ հակառակորդն առաջ անցնելու համար նրան ցած նետեց կառքից. Տրդատը բարկացած այնպէս պինդ բռնեց նրա կառքի յետևից, որ ձիերին կանգնեցրեց։

Պատերազմների մէջ էլ նա մեծամեծ քաջութիւններով զարմանք էր պատճառում հռոմայեցոց։ Մինչ հռոմայեցի կատաղած զօրքը սովից յարձակուեց և սպանեց Պրոբոս կայսեր, Տրդատ մենակ կանգնած իր բարեկամ Լիկիանոսի դրան առաջ, թոյլ չտուաւ, որ նրան որևէ վնաս հասնի։

Պարսից պատերազմում երբ կայսրը յաղթուեց և լեգէոնները փախան, Տրդատը յետ մնաց, որովհետև իր ձին վիրաւորուել էր։ Եփրատին հասնելով իր հագուստն ու ձիու սարքը մէջքին՝ լող տալով անցաւ Եփրատ գետը։

Գօթաց Հռչէ թագաւորի հետ էլ մենամարտեց, և յաղթելով գերի բերաւ նրան Դիոկղետիանոս կայսեր մօտ։

Այս քաջութիւնների համար նա սիրելի էր դարձել Դիոկղետիանոս կայսեր, որ կամենալով կրկին Հայաստանը

նուաճել, զօրք առաւ Տրդատին պարսից դէմ պատերազմելու։

Փախստական նախարարներից շատերն ուրախութեամբ դիմաւորեցին Տրդատին Կեսարիա և միացան նրա հետ։ Օտա Ամատունին նրա առաջ բերեց Խոսրովիդուխտ քրոջը և թագաւորական գանձերը։ Տրդատը նրան նշանակեց տէրութեան հազարապետ, իսկ Արտաւազդ Մանդակունուն յանձնեց զօրքի սպարապետութիւնը։

Հայ և հռոմէացի զօրքերով Տրդատը չարդեց ու հալածեց պարսիկներին, կրկին տիրելով իր հայրենի թագին և մեծ ուրախութիւն պատճառելով հայ ժողովրդին։

Հետևեալ տարին նա արշաւեց Պարսկաստան և իր անձնական քաջութեամբ սարսափ ազդեց թշնամիներին։ Մի անգամ թշնամիները շրջապատեցին նրան և նետերով բազմաթիւ վէրք հասցրին ձիուն։ Ձին գետին գլորուելով, բացած քցեց արքային։ Տրդատն աներկիւղ վեր թռչելով, հեծաւ մինի ձին, հեծաւ ու սկսեց կոտորել նրանց։

Հայաստանը թշնամիներից մաքրելուց յետոյ, Տրդատը կամեցաւ ամուսնանալ և Աշխատաւ իշխանի դուստր Աշխէնին, որ գեղանի և բարձրահասակ էր Տրդատի պէս, կին ուզեց։ Նորան գրելով Արշակունի, Տրդատը նորա գրկին թագ դրեց և կարգեց հայոց թագուհի։

ՀԵԹԱՆՈՍ ՀԱՅՈՑ ԿՐՕՆԸ

Հայկազանց ժամանակ հայերը մի պարզ ու բնական կրօն ունէին. արևն էր նրանց պաշտամունքի գլխաւոր առարկան, որ համարւում էր կեանքի հիմքը, մարդու և բնութեան կեանք տուողը.—«Արևս վկայ, քու արեւ, նըրա արևը խաւարեց» մինչև այսօր պահուած ու սովորական են ժողովրդի բերանում։ Լոյսը համարում էին բաղդ ու բերկրութիւն.—«աչքդ լոյս, աչքի լուսով ըլնաս», ասում են այսօր, երբ մի ուրախալի անցք է պատահում։ Ընդհակառակը խաւարը համարւում էր անբաղդութիւն։ «Նրա

օրը խաւարեց, նրա օրը սևացաւ», անբաղդութեան նշաններ են հէնց այսօր։

—Ուրեմն լոյսը—բաղդ էր, խաւարն-անբաղդութիւն, արևը կեանք։

Հին հայերը անտառների սօսափիւնից գուշակութիւններ էին անում։ Սօսեաց անտառին էր նուիրուած Անուշաւանը, որ այդ պատճառով Սօս կոչուեցաւ։ Մի տեսակ աստուածներ էլ կային, որոնք Արլէզ էին կոչւում և լիզում էին պատերազմում ընկած վիրաւոր քաջերին և առողջացնում նրանց։

Այս պարզ ու նախնական կրօնը բաւական ճոխացաւ հարևան պարսիկների, ասորիների և ապա յոյների ազդեցութեան տակ, այնպէս որ բնութեան լուսաւորների հետ, հայերին այնուհետև տեսնում ենք երկրպագելիս և կուռքերի ու աւազանների։

Աստուածների հայրը համարւում էր «արին Արամազդը», որի արձանը գտնւում էր Անի ամրոցում։ Երիզայում գտնւում էր Անահիտ դիցուհու արձանը, որ կոչւում էր «ոսկեմայր, ոսկեածին, և համարւում էր կեանք ու կեցուցիչ հայոց աշխարհի»։ Սա Արամազդի դուստրն էր։

Արամազդի միւս դստեր անունն Աստղիկ էր, որ գեղեցկութեան աստուածուհի էր։ Սորա արձանը գտնւում էր Տարօն գաւառի Աշտիշատ աւանում։ Այստեղ էր և Վահագի արձանը։ Վահագը համարւում էր քաջութեան աստուած և կոչւում էր Վիշապաքաղ։ Սա Աստղիկի ամուսինն էր։

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Աբգարն առաջին թագաւորն էր հայոց մէջ, որ քրիստոնէութիւնն ընդունեց։ Թէև, ինչպէս տեսանք, նրա յաջորդները հալածանք բարձրացրին քրիստոնէութեան դէմ, բայց և այնպէս բազմաթիւ քրիստոնեաներ կային Հայաստանում, որոնք յայտնի կամ ծածուկ դաւանում էին երկնային Փրկչի կրօնը։ Մոսրով Ա.-ի օրով, ինչպէս և Տրդատի ժամանակ այնքան շատ էր նրանց թիւը, որ թէ հայրը և թէ որդին մահուան պատիժներով, հալածանքներով ու հրովարտակներով բռնանում և հալածում էին քրիստոնեաներին։ Այս հալածանքը տևեց մինչև Տրդատի քրիստոնեայ դառնալը Լուսաւորչի ձեռքով։

Գրիգորն Անակ իշխանի որդին էր. նա ծնուեց Վաղարշապատ 257-ին, երեք տարեկան էր, որ դաւաճան հօր ընտանիքը սրի անցրին, որից ազատուեց միայն Գրիգորը, իր տանտուի հետ, Սօֆիա անունով։ Գրիգորին տարան Կեսարիա, ուր նրան մկրտեցին և մեծացրին իբրև քրիստոնեայ։ Նա ուսաւ յոյն և ասորի դպրութիւն։ Երբ չափահաս դարձաւ, ամուսնացաւ մի յոյն աղջկայ հետ, որից երկու զաւակ ունեցաւ. Արիստակէս և Վրթանէս։ Երեք տարուց յետոյ նրանք սիրով բաժանուեցին միմիանցից, որ ծառայեն Աստծուն. Գրիգորը Արիստակէսին յանձնեց դայեակների և ինքը գնաց Տրդատ թագաւորի մօտ, որ հաւատարիմ ծառայութեամբ քաւէ իր հօր, Անակի գործած մեղքը։

Իսկ Գրիգորի կինն Մարիամն, առնելով փոքր որդուն, Վրթանէսին, մտաւ կուսանոց։

Երբ Տրդատը Հայաստան գալով զոհ էր մատուցանում Անահիտ դիցուհուն, հրամայեց, որ Գրիգորն էլ պրաակները մատուցանէ նոյն դիցուհուն։ Գրիգորն ընդդիմացաւ։ Այնուհետև ոչ Տրդատի պատուէրն ու պատիժը, ոչ տուած տանջանքն ու չարչարանքները կարողացան ստիպել Գրիգորին, որ նա թողնէ քրիստոնէութիւնը։ Այդ ժամանակ Տրդատին յայտնեցին, որ Գրիգորն Անակի որդին է։ Տրդատը բարկացած հրամայեց, որ նրան տանեն քցեն Արտաշատի Խոր-Վիրապը։ Այնտեղ Լուսաւորիչը մնաց ամբողջ 15 տարի, Գրիգորն ապատուեց շնորհիւ մի բարեպաշտ կնոջ, որ ամեն օր հաց էր քցում Գրիգորի համար և սովամահից ազատում։

Այդ ժամանակները Դիոկղետիանոս կայսեր հալածանքից փախչելով Հայաստան եկան մի խումբ քրիստոնեայ կոյսեր, որոնք ապրում էին Վաղարշապատի հնձաններում։ Նորանց մէջ էր Հռիփսիմէ անունով մի կոյս, արքայազն, որին կամենում էր կին առնել Դիոկղետիանոս։ Կոյսեր թղթի վրայ Տրդատ գտաւ այդ կոյսերին և ինքը կամեցաւ կին առնել Հռիփսիմէին։

Սակայն Հռիփսիմէն փախաւ Տրդատի ձեռքից։ Սրա վրայ բարկացած Տրդատը կոտրել տուաւ բոլոր կոյսերին թուով 37 հոգի։

Այս անմեղ կոյսերի արիւնը զուր չանցաւ։ Թագաւորի խիղճն սկսեց տանջել նրան այն աստիճան, որ նա խելագարուած գազանի նման սկսեց թափառել սար ու ձոր։

Խոսրովիդուխտը մի երազ տեսաւ, ուր նորան մի լուսեղէն հրեշտակ ասում էր, թէ միայն Գրիգորը կարող է բուժել Տրդատի հիւանդութիւնը։ Ոչ ոք չհաւատաց այդ երազին, որովհետև չէին կարծում թէ Գրիգորը կարող էր կենդանի լինել։ Երազը կրկնուեց. այն ժամանակ Օտա Սմատունին գնաց Արտաշատ և գտնելով Գրիգորին կենդանի, հանեց Խոր-Վիրապից և բերեց Վաղարշապատ։ Ձա-

նապարհին նրա առաջ դուրս եկաւ հիւանդ թագաւորն իր իշխանների հետ։ Գրիգորը ծունկ չոքած աղօթեց նրանց համար և նրանց ցաւերը թեթևացան։

Գրիգորը հաւաքեց նահատակ կոյսերի մարմինները և ամենքին էլ թաղեց իրենց նահատակութեան տեղերում։

Հետևեալ օրը քարոզելով թագաւորին եւ պալատականներին Քրիստոսի հաւատը, նրանց մկրտեց քրիստոնեայ 301 թուին։ Այսպիսով, Աբգարից յետոյ Տրդատը դարձեալ առաջինն էր բոլոր Հեթանոս թագաւորների մէջ, որ ընդունեց քրիստոնէութիւն։ Դրա համար մեր ազգը առաջին եւ ամենահին քրիստոնեայ ազգն է ամբողջ աշխարհում։ Գրիգորն էր, որ լուսաւորեց մեր ազգը քրիստոնէութեամբ, դրա համար նա կոչւում է Լուսաւորիչ։

Այնուհետև Լուսաւորիչը կոյսերի նահատակութեան տեղը եկեղեցիներ շինեց, Հռիփսիմէի, Գայանէի և Շողակաթի անուններով, որ մինչև հիմա էլ կան։

Լուսաւորիչը երազում տեսաւ, որ Փրկիչը գած եկաւ երկնքից և կռանով խփեց գետնին. այդտեղ էլ նա հիմնեց հայոց Մայր-Տաճարը (302 թ.) որ Էջմիածին կոչուեց[1]։

Մաքսիմանոս կայսեր դուր չեկաւ Տրդատի քրիստոնեայ դառնալը, ուստի պատերազմ ծագեց հայոց և հռոմայեցոց մէջ։ Բարեբաղդաբար շուտով կայսր դարձաւ Կոստանդիանոս, որ ընդունեց քրիստոնէութիւն և բարեկամացաւ մեր Տրդատի հետ։ Տրդատը Գրիգոր Լուսաւորչի, Արիստակէսի և բազմաթիւ հայ իշխանների ու զօրքի հետ այցելութեան գնաց կայսեր, մեծամեծ պատիւներով ու հանդէսներով ընդունուեց Հռոմում ինչպէս ինքը, այնպէս էլ Գրիգոր Լուսաւորիչը։

Պարսից թագաւորը օգտուելով Տրդատի բացակայութիւնից, ուզեց խռովութիւն առաջացնել Հայաստանում։ Նրա դրդմամբ Սլուկ իշխանն ապստամբեց Տրդատից և ապաստանելով իր փեսայ Օտա իշխանին, գրաւեց նրա Ողկան ամրոցը Տարօնում։ Սկիւթական ազգերն էլ Շապուհից

[1]) Կարդա. «Հայ հեղինակները».—Էջմիածին յօդուածը։

գրգռուած արշաւեցին Հայաստան։ Սակայն շուտով հասաւ Սէգն Տրդատ և Գարգարացոց գաշտում մի սարսափելի ջարդ տուաւ սկիւթացոց բանակին։ Բայց թագաւոր Գեղբեհոնը կամենում էր թոկով բռնել Տրդատին, երբ Տրդատի սուրը նրան երկու կէս արաւ, ձիու գլուխն էլ հետը կորելով։

Հայաստան դառնալիս, Տրդատը Սլուկ իշխանին էլ բռնած գտաւ Մամգունն Ճենացու ձեռքով, որին ընծայեց Տրդատը Սլկունի կալուածները Տարօն գաւառում։

Այս Մամգունուն Տրդատը նախարարութիւն տուաւ, որից առաջացաւ Մամիկոնեան ցեղը։

Երբ 325 թուին կայացաւ առաջին տիեզերական ժողովը Նիկիայում, Տրդատը և Լուսաւորիչն ուղարկեցին իրանց փոխանակ Արիստակէսին, որ այնտեղից բերեց մեր հաւատի հանգանակը։

Գրիգոր լուսաւորիչը հայրապետական աթոռը յանձնեց Արիստակէսին, իսկ ինքը մեկուսացաւ Սեպուհ լեռան Մանիայ այրի մէջ, ուր և վախճանեցաւ 332 թ.։ Հովիւները գտան նրա մարմինը և թաղեցին։

Գրիգորից յետոյ Տրդատ թագաւորն ամեն կերպ աշխատում էր քրիստոնէական վարք ու բարք մտցնել Հայաստանում։ Վերջը ծերացած ու յոգնած թողեց թագաւորութիւնը և քաշուեց Մանիա այրը ճգնելու։ Նախարարները խնդրեցին, որ յետ գայ և կրկին շարունակէ թագաւորելը, Տրդատը մերժեց։ Ապերախտ նախարարները ծածուկ թունաւորելով զրկեցին նրան կեանքից 342 թ.։ Տրդատին մեծ հանդիսով թաղեցին Թորդան գիւղում, ուր մի քանի տարուց յետոյ տեղափոխեցին և նրա սիրելի Գրիգոր Լուսաւորչի մարմինը։

ՏՐԴԱՏԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Հայերը քրիստոնեայ դառնալուց ետ կորուեց այն կապը, որ կար հեթանոս Հայաստանի և Պարսկաստանի մէջ։ Առանց այն էլ Արշակունիներին թշնամի Սասանեան տոհմը

ամեն կերպ աշխատում էր ձեռք բերել Հայաստանը և բնա-
ջինջ անել քրիստոնէութիւնը, որ կապում էր հայերին
յոյների հետ։—Տրդատի յաջորդները թոյլ ու մեղկ մար-
դիկ էին, զբաղուած որսով ու կերուխումով. դրա համար
Հայաստանն ասպարէզ դարձաւ անվերջ պատերազմների,
մի կողմից Հռոմի ու Պարսից մէջ, միւս կողմից էլ ապըս-
տամբ և անբարեացան նախարարների. դրանք կամ մի-
մեանց դէմ էին պատերազմում թուլացնելով երկրի ներ-
քին ուժերը, և կամ թագաւորի դէմ, միանալով արտաքին
թշնամիների հետ։

Այսպէս Տրդատից յետոյ մինը միւսին յաջորդեցին
Խոսրով Բ, որ գահը վոխադրեց Դուին և ապա Տիրան Բ,
(353 թ.) որին գահընկէց անելով Շապուհը, աչքերը կու-
րացրեց և աքսորեց։ Սակայն հայերի սիրտը գրաւելու հա-
մար նրա որդի Արշակ Բ.-ին կարգեց Հայաստանի վրայ
թագաւոր (364)։

Շատ խախուտ էր այս թագաւորի դրութիւնը, ինչպէս
և իր նախորդներինը. հէնց որ պարսից հետ էր բարեկա-
մանում, յունաց կայսրն էր ասպատակում սրա երկիրը,
հարկ պահանջելով սրանից, եթէ կատարում էր յունաց
կամքը, պարսից թագաւորն էր վրէժխնդիր լինում ահագին
պատերազմով։ Այս արտաքին թշնամիների վրայ աւելացան
և ներքին խռովութիւնները։ Արշակը խեղդել տուաւ իր կայ-
սր հօրը և ապանեց իր եղբօր որդուն, Գնէլին, ու խլեց նրա
կինը։

Արշակը մի քաղաք հիմնեց Մասիսի ստորոտում և ան-
ուանեց Արշակաւան։ Որպէսզի քաղաքը շուտով բազմա-
մարդ դառնայ, նա հրաման տուաւ այնտեղ անպատիժ ըն-
դունելու ամեն տեսակ յանցաւորներին։ Շուտով քաղաքը
լցուեց գողերով ու աւազակներով, որոնք նախարարների
երկիրներից փախչելով, ապաստանեցին այնտեղ։ Նախա-
րարները բողոքեցին։ Արշակն անուշադիր թողեց դրանց
բողոքը, ուստի ամենքին զայրացրեց ու թշնամացրեց։ Նա-
խարարները դիմեցին Շապուհի օգնութեան, որի զօրքերն
եկան տիրեցին Անի ամրոցին և կողոպտեցին Թագաւոր-

ների ոսկորները։ Հայ իշխանները կործանեցին Արշակա-
ւանը և բնակիչներին կոտորեցին։ Հազիւ վրայ հասաւ
Ներսէս կաթողիկոսը և ազատեց ծծկեր երեխաներին։ Ար-
շակը վերադարձաւ Վրաստանից և պատերազմով գնաց նա-
խարարների վրայ, սակայն Ներսէսի միջնորդութեամբ նա
հաշտուեց առանց պատերազմելու, թէև վերջը դրժելով
իր խոստումը, չարաչար հալածեց ու կոտորեց հակառա-
կորդ նախարարներին, բնաջինջ անելով նրանցից մի քա-
նիսի ցեղն ամբողջովին։

Շուտով նախարարների դրդմամբ եկաւ պարսից Ա-
լանոզան իշխանը և գերի տարաւ Արշակին Պարսկաստան։

Երբ Շապուհը պահանջեց, որ թագուհի Փառանձեմի հետ
բոլոր ձեացեալ նախարարների կանանց էլ պարսից Դուռը
տանեն, նախարարները միացած կոտորեցին պարսից զօր-
քին և հալածեցին։ Շապուհը բարկացած բանտարկել տուաւ
Արշակին Անյուշ բերդում, ուր նա, լսելով իր կնոջ գերի
ընկնելն ու մահը, և Հայաստանի ոտնակոխ լինելը, ինք-
նասպան եղաւ 382-ին, Անյուշ բերդում։

Արշակի մահից յետոյ Շապուհը իւր քոյր Որմզդուխ-
տին կնութեան տուաւ Մեհրուժան Արծրունի ուրացեալ
նախարարին, որ նրա ձեռքով չնչէ քրիստոնէութիւնը Հա-
յաստանում, և հայոց թագաւորութիւնը վերջացնելով,
միացնէ իր երկրին։—Մեհրուժանը բազմաթիւ չարագոր-
ծութիւններ արաւ Հայաստանում. քրիստոնեայ հոգևորա-
կաններին հալածեց և նախարարների կանանց գերի առ-
նելով, զանազան բերդերում բանդարկեց։

Ներսէս այդ ժամանակ Բիւզանդիա էր, խնդրեց Թէո-
դոս կայսրից, որ Արշակի որդուն, Պապին, թագաւորացնէ
Հայաստանի վրայ։ Կայսրը յարգեց Ներսէսի խնդիրը և
յոյն զօրքերով Պապին ուղարկեց Հայաստան, որին միա-
ցան վախճանական հայ նախարարները։

Նպատ լերան մօտ Մեհրուժանը պարսիկ զօրքով դուրս
եկաւ քրիստոնեայ զօրքի դէմ։ Լերան գլխին քրիստոնեա-
նների աղօթութեան համար բազկատարած աղօթում էր Ներ-
սէս կաթողիկոսը։ Պատերազմը կատաղի էր, բայց վերջ

ի վերջոյ յաղթութիւնը ՚ի կոյս հայոց կողմը, Մեհրուժանը փախաւ, բայց Սմբատ Բագրատունին հասնելով նրա յետոից, հովիւներից առաւ տաքացրած շամփուրը, դրեց Մեհրուժանի գլխին, իբրև թագաւորի և ասեց. «Պատկում եմ քեզ, ո՛վ Մեհրուժան, որովհետև ցանկանում էիր Հայոց թագաւոր դառնալ, և ես, իբրև թագադիր սպասեմ, կատարում եմ պաշտօնս»:

Այսպէս խայտառակ եղաւ դաւաճանի մահը, իսկ նրա օգնական վահան Մամիկոնեանին դաւաճանութեան համար սպանեց հարազատ զաւակը, Սամուէլը:

Պապի թագաւորութեան ժամանակ Ներսէսը բազմաթիւ վանքեր հիմնեց, նոյնպէս հիւանդանոցներ, որբանոցներ և այլ բազմատեսակ քրիստոնէական հիմնարկութիւններ: Պապ թագաւորը, որ անառակ կեանք էր վարում, ձանձրացած նրա խրատներից, թունաւորեց մեծ Հայրապետին:—Յոյներից էլ ձանձրացած, նա կամեցաւ պարսից կողմն անցնել, բայց յոյն զօրավար Տերինտիանոս, որ զօրքով գանւում էր Հայաստանում Պապի վրայ հսկելու համար, գերի տարաւ նրան Բուզանդիա, ուր կայսրը նրան գլխատել տուաւ (388):

Պապին յաջորդեց իր եղբայր Վարազդատը, սպա իր երկու որդիքը. Արշակ Գ. և Վաղարշակ Բ. (394), նոյն տարին մեռաւ Վաղարշակը և թագը հնաց ամբողջովին Արշակ Գ.-ին:

Այդ ժամանակ յոյներն ու պարսիկները Հայաստանն ու Միջագետքը բաժանեցին միմեանց մէջ: Հայաստանի մեծ մասն ընկաւ պարսից ձեռքը: Արշակը չկամենալով հեթանոս իշխանի երկրում հնալ, բազմաթիւ նախարարների հետ անցաւ Յունաց բաժինը: Շապուհն իր մասում թագաւոր կարգեց Խոսրով Գ. Արշակունի իշխանին, որ Արշակի մահից յետոյ թագաւորեց նաև յունաց բաժին ընկած Հայաստանին: Այս բանի վրայ կասկածելով Արտաշիրը, Խոսրովին կանչեց Տիզբոն և աքսորեց Անյուշ բերդը:

ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԸ

Խոսրովին յաջորդեց նրա եղբայրը, Վռամշապուհ (400—421), որ խելօք ու հեռատես քաղաքականութեամբ կառավարեց Հայաստանը 21 տարի շարունակ, գրաւելով թէ պարսից և թէ յունաց հաւատն ու վստահութիւնը: Այնպէս որ, երբ Միջագետքում յունաց և պարսից մէջ խռովութիւն ծագեց, Վռամշապուհ երկու կողմերի հրաւէրով գնաց Միջագետք և տեղն ու տեղը վէճերը քննեց ու կարգադրեց արդարութեամբ:

Վռամշապուհի թագաւորութեան ժամանակ էր, որ նրա քարտուղարը, Մեսրոպ-Մաշտոց, գտաւ հայոց տառերը 404 թուին: Հայերը թէպէտ քրիստոնէութիւն էին ընդունել հարիւր տարի առաջ, բայց չունենալով գիր ու դպրութիւն, աւետարանը եկեղեցիներում կարդացւում էր յունարէն կամ ասորերէն և ժամերգութիւնն էլ կատարւում էր այդ լեզուներով: Ժողովուրդը ոչինչ չէր հասկանում, ուստի հնում էր խաւար և հեթանոս սովորոյթներով:

Մեսրոպը Տարօնի (Մուշ) Հացիկ գիւղից էր, մանկութիւնից ուսաւ յունարէն, ասորերէն և պարսկերէն, աշակերտելով Ներսէս Մեծին: Վերջը նա դիւանապետ էր պալատում, որից ձանձրանալով, հրաժարուեց աշխարհից և գնաց Գողթան գաւառը ճգնելու և աւետարանը քարոզելու ժողովրդին: Այդ քարոզութիւնների ժամանակ նա տեսաւ, որ ժողովուրդը չի հասկանում աւետարանի լուրն, ուստի մտածեց հայերէն տառեր գտնել, որ Աստուածաշունչը թարգմանի հայերէն: Այս նպատակով նա դիմեց Սահակ Կաթողիկոսին և յայտնեց իր խորհուրդը: Կաթողիկոսը վաղարշապատում ժողով գումարեց այդ մասին: Ներկայ էր և Վռամշապուհ թագաւորը: Արքան ժողովում յայտնեց, որ Ասորիքում, մի Դանիէլ անունով եպիսկոպոսմօտ հայերէն տառեր է տեսել:

Մարդ ուղարկեցին և բերել տուին այդ տառերը:

Սահակն ու Մեսրոպը աշակերտներ հաւաքեցին և փորձեցին այդ տառերը սովորեցնել, բայց տեսան, որ դրանք պակասաւոր էին, և հայերէն բոլոր հնչիւնները չունէին։

Այնուհետև Մեսրոպ շատերին դիմելուց ձեռնունայն, ապաւինեցաւ աղօթքի և Աստուծոյ օգնութեամբ գտաւ հայերէն տառերը 406-ին։

Այնուհետև Սահակ ու Մեսրոպ անմիջապէս սկսեցին թարգմանել Ս. գիրքն իրանց աշակերտների օգնութեամբ։ Բազմաթիւ գպրոցներ բացուեցին Հայաստանի զանազան մասերում։

Ընդունակ և խելօք աշակերտներին ուղարկում էին աւելի լուսաւոր քաղաքները ուսում առանալու, որոնց միջից յետոյ դուրս եկան մեր եկեղեցու նշանաւոր հայրերն, հայ նշանաւոր պատմագիրները ու մատենագիրները։ Այսպէս Սահակի և Մեսրոպի աշակերտներից էին Ղևոնդ երէցը, Եղնիկ Կողբացին, Կորիւնը, որ գրեց իւր ուսուցիչ Մեսրոպի կեանքը. Մովսէս Խորենացին, որ գրեց հայոց պատմութիւնը, Դաւիթ Անյաղթ փիլիսոփան, Եղիշէն, Վարդանանց պատմութեան հեղինակը, Ղազար Փարպեցին, որ գրեց Վարդանանց և Վահանանց պատմութիւնը և այլն։

Մեսրոպի, Սահակի և նրանց աշակերտների շնորհիւ հայոց գրականութիւնն ու լեզուն այնպէս ծաղկեց ու զարգացաւ Ե. դարում, որ նա իրօք կոչուեց մեր գրականութեան ոսկէ դարը։

Շատ մեծ է Մեսրոպի նշանակութիւնը, որովհետև գտած տառերի շնորհիւ ծաղկեց ու զարգացաւ հայ գրականութիւնը և մի անգամ ձեռք բերած քրիստոնէութիւնը դարձաւ ընդմիշտ ազգային կրօն։

ՎՐԱՄՇԱՊՈՒՀԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Վռամշապուհի մահից յետոյ պարսիկները փորձեցին վերջ տալ Արշակունի թագաւորութեան, բայց աջողութիւն չունեցան, մինչև որ 4—5 տարի խառնակութիւնից

յետոյ, Վռամ, պարսից արքան, Հայաստանի թագը յանձնեց Վռամշապուհի որդուն, Արտաշէսին։

Սա իր անկարգ կեանքով տեղի եղաւ նախարարներին, որոնք միաբանած դիմեցին Սահակ կաթողիկոսին, կամենալով գահընկէց անել թագաւորին և նրա տեղը պարսիկ իշխան հրաւիրել։

«Քաւ լիցի, ասում էր ծերունի կաթողիկոսը, իմ հիւանդոտ ոչխարը առողջ գազանի հետ փոխել, որի առողջութիւնը մեզ ձեռնտակար է»։ Նախարարները չլսեցին Ս. Սահակին, այլ գնալով Վռամի մօտ, գանգատուեցին թէ թագաւորից և թէ կաթողիկոսից։ Վռամն առանց լսելու Արտաշէսին և Սահակին, կանչեց նրանց Պարսկաստան և այնտեղ պահեց, զրկելով մինին թագից, միւսին կաթողիկոսութիւնից 432-ին*)։

Այսպիսով վերջացաւ Արշակունի թագաւորութիւնը Հայաստանում, և կաթողիկոսութիւնը Լուսաւորչի ցեղից։

Այնուհետև Հայաստանը կառավարում էին պարսից մարզպանները, իրա՝ թագաւորի հրամանների համեմատ։

ԱՌԱՋԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Արշակունի հարստութիւնը վերջանալուց յետոյ, պարսիկների նպատակն էր չնչել քրիստոնէութիւնը Հայաստանում և այդ հարուստ երկիրն ընդմիշտ միացնել Պարսկաստանին։ Այդպէս էլ մտածում էր Յազկերտ Բ. բայց վախ էր զգում նախ յոյներից, որ իրրև քրիստոնեայ կարող էին օգնել հայերին, և երկրորդ՝ հայ նախարարներից, որոնք դեռ զօրեղ ու խրոխտ, կարող էին խանգարել Յազկերտի մտադրութիւնը։ Ուստի նա մտածեց առաջ իր հաշիւը վերջացնել յոյների, ապա հայ նախարարների հետ։

Յարձակուեց Յունաց Միջագետքի վրայ, աւերեց ու կոտորեց, հասաւ մինչև Մծբին և Թէոդոս կայսրին ստիպեց ընդունել իր առաջարկած պայմանները։ Այնու-

*) Կարդա «Լուսաւորչի տոհմը» Հայ-հեղինակներից էջ 111.

հետև հոնաց արշաւանքին մասնակցելու համար հրաւիրեցին հայ, վրացի և աղուանից ազգի նախարարներն ու զօրքը, որ մի կողմից երկիրն անպաշտպան մնայ, միւս կողմից թուլանայ։

Եօթը տարի տևեց հոնաց պատերազմը, ուր հայ իշխաններն ու զօրքը մեծամեծ քաջութիւններով ապահովեցին պարսից յաղթութիւնն ու աջողութիւնը։

Պատերազմի ժամանակ էլ պարսից թագաւորն աշխատում էր համոզելու, որ հայ իշխանները թողնեն իրանց կրօնը և դառնան կրակապաշտ։ Այդ անում էր նա առաջ մեղմութեամբ, ապա մինչև անգամ բռնութեամբ։ Պարսկաստան գնացող զօրքին այլևս յետ չէր թողնում հայրենիք դառնալու և պատերազմի թունդ տեղերն ուղարկելով, աշխատում էր նրանց հետզհետէ կոտորել տալ։

Մինչդեռ զօրքն ու իշխանները հեռու էին հայրենիքից, Հայաստան է գալիս Դենշապուհ իշխանը աշխարհապիր անելու։

Նա հարկի տակ դրեց վանքերն ու եկեղեցիները, որ մինչև այն ազատ էին որևէ տուրքից։ Ժողովրդին էլ ծանրը հարկերով ճնշեց ու աղքատացրեց, հոգևորականներին սկսեց հալածել և նախարարների մէջ խռովութիւն ձգեց։ —Երկրի հազարապետին, որ Վահան Ամատունին էր, պաշտօնից հեռացրեց և նրա տեղը կարգեց մի պարսիկ։ Մի մոգպետի էլ նշանակեց դատաւոր։

Երբ ժողովուրդը բաւական աղքատացած էր ու թոյլ։ Միհրներսէհ մի թուղթ ուղարկեց Հայաստան, որ պահանջում էր քրիստոնէութիւնը և գովում զրադաշտային կրօնը։ Նա պահանջում էր, որ կամ իր գրածին կէտ առ կէտ պատասխանեն և կամ ընդունեն պարսից կրօնը։

Հայ ազգի իշխաններն ու հոգևորականները անմիջապէս հաւաքուեցին Արտաշատ և Յովսէփ կաթողիկոսի նախագահութեամբ ժողով գումարելով, մի շատ խիստ ու համարձակ պատասխան գրեցին պարսից թագաւորին։

Պատասխանը վերջանում էր այսպէս. «Այս հաւատից մեզ ոչ ոք կարող է շարժել. ո՛չ մարդ, ո՛չ հուր և ո՛չ

ՎԱՐԴԱՆ

սուրը։ Մեր բոլոր հարստութիւնը քո ձեռին է, մարմինները էլ քո առաջ. արա՛, ինչ որ կամենաս. քեզանից տանջանք, մեզանից համբերութիւն, քո սուրը և մեր պարանոցը»։

Յազկերտ զարմացած ու բարկացած այս պատասխանի վրայ, նախարարներին պարսից դուռը կանչեց։ Նախարարները, որոնց մէջ էր Վասակ Սիւնի և Վարդան Մամիկոնեան, գնացին Պարսկաստան և ամենայն կերպով խիստ վատ ընդունելութիւն գտան։

Յազկերտ առանց խօսք լսելու ստիպում էր, որ ընդունեն պարսից կրօնը և տեսնելով նախարարների հակառակութիւնը, բանտարկել տուաւ նրանց։ Նախարարները երկար խորհրդակցելուց յետոյ որոշեցին երեսանց կատարել թագաւորի հրամանը, որպէսզի ազատուելով մի հնար գտնեն նրա չար մտադրութիւնը խորտակելու։

Թագաւորն անչափ ուրախացաւ լսելով նախարարների ուրանալը։ Մեծամեծ պարգևներ ու պատիւներ տուաւ նրանց և 700 մոգեր և մոգպետներ ու մի գունդ զօրք հետները դնելով, ուղարկեց Հայաստան, որ այնտեղ էլ քրիստոնէութիւնը ջնջելով տարածեն ու քարոզեն պարսից կրօնը (450)։

Ապահովութեան համար Յազկերտը պատանդ պահեց Վասակի երկու որդուցը, որ այդ ժամանակ Հայաստանի մարզպանն էր։

Երբ նախարարների ուրացութեան լուրը Հայաստան հասաւ, ամբողջ երկիրը սուգի մէջ մտաւ։

Հոգևորականները ցրուեցին երկրի զանազան կողմերը ժողովրդին պատրաստելու, որ զէնքով դիմադրեն և իրանց հաւատը կեանքի գնով պաշտպանեն։ Որոշեցին ու երդուեցին, որ հայրը որդուն պիտի չճանայէր, եղբայրը եղբօրը, որդին հօրը, կինն ամուսնուն, եթէ ուրացել էր հաւատը։

Նախարարները Հայաստանի սահմանը մտնելով, բանակ դրին Անդղ գիւղում։ Կիրակի օրը, պատարագի ժամանակ, մոգպետը զօրքերի հետ մտաւ եկեղեցին, որ ժամերգութիւնը դադարեցնէ։ Ղևոնդ երէցը, որ պատարագիչ էր, ժողովրդի գլուխն անցած, փայտերով ու քրերով ծեծեց մոգերի գլուխը և հալածեց եկեղեցուց։

Յուսահատուած մոգպետը կամենում էր Թագաւորին դրել այդ մասին։ «Եթէ իրանք աստուածներն էլ օգնութեան գան, անկարելի է մեր օրէնքը հաստատել Հայաստանում», ասում էր նա, բայց զաւաճան Վասակը համոզեց նրան մի քիչ էլ համբերել, մինչև որ խաբելով ու խարդախելով սրան կամ նրան գրաւէ իրանց կողմը։

Այդ ժամանակ ուրացեալ նախարարները Շահապիվանում ժողով գումարեցին և ամենը երդուելով աւետարանի վրայ հաստատեցին, որ կեղծ էին ուրացել, իրանց մատանիներով կնքեցին աւետարանը, ի նշան իրանց հաւատարմութեան քրիստոնեայ եկեղեցուն։ Վասակն էլ միաբանեցաւ և իր մատանիով կնքեց աւետարանը։ Դրանից յետոյ հայերը կոտորեցին մոգերին և պարսից գրաւած բերդերն առնելով, կրակատուները քարուքանդ արին։

Այդ ժամանակ գունդ եկաւ Ադուանից աշխարհից, խնդրելով օգնութեան հասնել նրանց, որովհետև պարսից զօրքը երկիրը մտնելով մոգերի հետ, աշխատում էր ջնջել քրիստոնէութիւնը։



ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ

Վարդան սպարապետը հայոց զօրքը երեք մասի բաժանեց, առաջինը տալով Ներշապուհ Արծրունուն, ուղարկեց Աւարպատական, Պարսից սահմանը. երկրորդ գունդն առնելով Վարդան, գնաց Ադուանից աշխարհին օգնութեան, իսկ երրորդ գունդն առաւ ինքը Վասակը որպէս թէ Հա-

յաստանի կենդրոնը պաշտպանելու, այն ինչ նա մարդ ուղարկեց պարսիկներին իմաց տալու, թէ տեսէք, ահա հայոց ոյժը թուլացրի, մաս-մաս բաժանելով նրանց։

Վարդանը Աղուանից երկրում, Կուրի ափին, սոսկալի ջարդ տալով հալածեց պարսիկներին, յետ առնելով նըրանց տիրած բերդերն ու աւերած հարստութիւնը, կոտրելով մոգերին և կործանելով կրակարանները, հասաւ մինչև Ճորայ դուռը և դաշն կապեց հոնաց հետ (450)։

Սակայն, գուժկան հասաւ Վարդանին Հայաստանից։ որ պատմեց Վասակի չարագործութիւնները։ Թէ ինչպէս նա շատ քաղաքներ ու գիւղեր այրեց, շատ եկեղեցիներ կործանեց և ուխտապահ նախարարների որբոց գերելով, Սիւնեաց բերդերում վաճեց.

Վարդանը ճանապարհուեց Հայաստան. ձմեռը վրայ հասաւ և երկու կողմից էլ մարդիկ զբաղուեցին իրանց կուսակիցները շատացնելով։ Գարունը բացուելուն պէս Մուշկան Նիւսալաւուրա զօրավարը ահագին զօրքով բանակ դրեց Հեր և Զարևանդ գաւառներում։ Վարդանն էլ հաւաքեց իր զօրքերը թուով 66,000 հոգի և դուրս եկաւ թշնամու դէմ, Արտազ գաւառի Աւարայր դաշտում, Տըղմուտ գետի ափին։ Բանակումն էին Յովսէփ կաթողիկոսն ու Ղևոնդ երէցը, որ մի ոգևորուած ճառով խրախուսեց զօրքին։ Հետևեալ առաւօտ վաղ, պատարագից յետոյ, սկսուեց պատերազմը նետերով։ Պարսից զօրքը երեք անգամ աւելի էր հայերից և բազմաթիւ պատերազմական փղերով շրջապատուած։

Զնայելով դրան, նրանք վախեցան գետն անցնել, հաներն էին, որ անվախ գետն անցնելով, յարձակուեցին պարսից աջ թևի վրայ, Վարդանի առաջնորդութեամբ և շփոթութիւն քցեցին նրանց զօրքի մէջ։ Սակայն, հայոց զօրքի մի մասն այդ ժամանակ թուլանալով, տեղի տուաւ և պարսիկները սիրտ առան։ Պատերազմը տևեց մի ամբողջ օր։ Պարսից զօրավարը օգտուելով հայոց քչութիւնից, պահեստի փղերը մօտ բերեց և շրջապատեց Վարդանին։ Վարդանն ընկաւ նահատակի մահով, շատ թանկ ծախելուց

յետոյ իր կեանքը պարսիկներին (451). նրա հետ ընկան բազմաթիւ այլ քաջեր հայոց բանակից, զինուորների հետ միասին 1036 հոգի, իսկ պարսիկ կողմից 3544 հոգի և ինքը զօրավար։

Վարդանանց պատերազմի յիշատակը մենք տօնում ենք բարեկենդանի վերջին հինգշաբթի օրը։

Հայերը քաշուելով իրանց լեռները և ամուր տեղերը, փոքրիկ յարձակումներով մեծամեծ վնասներ էին տալիս պարսիկներին։ Յազկերտը տեսնելով իր զօրքի կրած ահագին վնասները, զղջաց։ Վասակին կանչեց Պարսկաստան և նրա տեղը պարսիկ մարզպան նշանակեց։ Հրաման տուաւ, որ եկեղեցիները նորից բացուին և կրօնի ազատութիւն յայտարարեց։

Միայն Յովսէփ կաթողիկոսին և Ղևոնդ երէցին մի քանի այլ ազատամբ նախարարների հետ Պարսից Դուռը կանչեց, շղթայակապ*)։

ՎԱՍԱԿԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Մի հանդիսաւոր օր թագաւորը պալատ կանչեց Վասակին։ Նա հագաւ իր թանկագին շորերը, գլխին ոսկեղէն խոյր ունէր, ժէջքին մարգարտազարդ գօտի, ականջին ոսկէ օղեր, և ուսին արքայական սամոյր։ Միայն թագն էր պակաս և նա կարծում էր, որ թագաւորը նրան կտայ Հայաստանի թագը։

Պալատում էին և շղթայակապ հայ քահանաներն ու նախարարները, որոնք բաց արին Վասակի խարդախութիւնները ու դաւաճանութիւնը, որ մի կողմից հայերին էր խաբում, միւս կողմից պարսիկներին։ Վասակի ազգականներն անգամ պարսիկ մոգերի հետ հաստատեցին, որ երկրի աւերման և պատերազմի պատճառը Վասակն էր։

Թագաւորը հրամայեց զրկել Վասակին բոլոր ունեցածից և բանտարկել նրան։ Իսկոյն հանեցին նրա բոլոր

*) Կարդալ. «Ե. դարու հայ կանայք» և «Բլուրն Աւարայրի», Հայ հեղինակներ. երես 243, 326.

զարդերն ու զգեստները և մահապարտի հագուստ հագցընելով, նրա ձեռք ու ոտքը կապած նստեցրին մատակ ձիու բանդ տարան։ Այնտեղ նա երկար տանջուելուց և ծաղրի հիւանդանալուց յետոյ մեռաւ խորին աղքատութեան մէջ։ Գերեզմանի տեղ չգտաւ իր հայրենիքում այն մարդը, որ Հայաստանի թագաւոր էր ուզում դառնալ դաւաճանութեամբ։

Շղթայակապ քահանաներն էլ նահատակուեցին մի քանի տարի բանտարկուելուց յետոյ, իսկ նախարարները 12 տարի բանդ և նեղութիւն կրելուց յետոյ, կրկին ազատուեցին և վերադարձան Հայաստան։

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Վարդանանց պատերազմից յետոյ պարսիկները թէպէտ բռնութեան չէին դիմում, բայց ուրիշ ամեն միջոցներով դաւաճաններին և հաւատուրացներին առաջ էին քաշում, իսկ ազնիւ ու կարգին հայ իշխաններին հալածում։ Դժգոհութիւնը շատ մեծ էր հայոց մէջ և այս անգամ էլ դժգոհների և ապստամբների գլուխ կանգնեց Մամիկոնեան տոհմի աւագը, Վահանը, որ Վարդանի եղբօրորդին էր։ Սա չորս տարի շարունակ Հայաստանի զանազան մասերում շարունակ կռուի էր բռնում պարսիկների հետ, քաջութեամբ պատերազմում էր և նրանց կոտորում ու հալածում։ Շատ հեռատես ու խելօք էր Վահանը, ինչպէս և քաջ ու մեծահոգի։

Պարսիկները տեսան, որ պատերազմով չեն կարող Վահանին ընկճել, համաձայնեցին նրա առաջարկած պայմաններն ընդունել և հաշտութիւն կայացնել։ Այդ պայմանով քրիստոնէութիւնը ճանաչուեց օրպէս հայոց կրօն, որին ոչ ոք իրաւունք չունէր այնուհետև ձեռք տալու։ Դաւաճանները պատուի պիտի չարժանանային և ազնիւ ու հաւատարիմ մարդիկ չհալածուէին։

Պարսիկները տեսնելով Վահանի ազնուութիւնն ու խոհեմութիւնը, նրան յանձնեցին թէ երկրի կառավարութիւնը—մարզպանութիւնը և թէ սպարապետութիւնը։ Յովհան կաթողիկոսն ուրախացած մեծ հանդէս կատարեց այդ առթիւ էջմիածնում և մի գեղեցիկ ճառ (485 թ.) *)։

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

Վարդանանց և Վահանանց պատերազմներից յետոյ Հայաստանի արևելեան մասը դարձեալ մնաց պարսից իշխանութեան հպատակ մինչև Սասանեանց անկումը և արաբաց արշաւանքները։ Պարսիկներն երբ իրանց գօրաւոր էին զգում, իսկոյն մոռանում էին իրանց խոստումը, նշանակում էին պարսիկ մարզպաններ և նեղելով ու ճնշելով հայերին, կամենում էին հայերին իրանց կրօնին դարձնել։

Հայերն էլ շարունակ ապստամբում ու կոտորում էին Պարսից զօրքը կամ յունաց օգնութեամբ կամ մենակ, հա-

*) Կարդա «Վահանի մարզպանութիւնը», Հայ հեղինակների էջ 250։

ասատրիմ ձեալով իրենց կրօնին։ Այս պատերազմների մէջ մեծ անուն հանեց և նշանաւոր դեր խաղաց Վահանը, Մամիկոնեան տոհմից, որ իր անօրինակ քաջութեան համար Գայլ էր կոչւում, Երբ Միհրան պարսից զօրավարը 30,000 զօրքով յարձակուեց Տարօնի վրայ, Գայլ Վահանը խորամանկութեամբ գնաց և բարեկամ ձևացաւ Միհրանին, այն ինչ գաղտնի առանձին գնդերով 4,000 հոգի պարսից մէկ ջարդել տուաւ, 2000 մէկ, 1000 էլ մէկ. այսպէս Պարսից զօրութիւնը խորտակելուց յետոյ Միհրանն էլ սպանեց 604 թ. և Տարօնն ազատեց թշնամու ձեռքից։

Պարսից թագաւորը նորէն զօրք ուղարկեց Տարօնը պաշարելու։ Գայլ Վահանը լուռ նստած խորամանկութեամբ սպասում էր թշնամու գալուն, որոնցից 4000 հոգի մէկ ջարդեց, 5000 մէկ։ Այդ ժամանակ ծերութիւնից մեռաւ Վահանը և պարսից զօրավարը վստահացած, 10,000 զօրքով յարձակուեց նրա որդու, Սմբատի վրայ։ Սմբատը չարաչար կոտորեց պարսից զօրքը, սպանեց նրանց զօրավար Վախտանգին և նրա կնոջն ու որդուցը գերի տարաւ։ 20 տարի յետոյ պարսիկները նորէն արշաւեցին Տարօն, բայց նորէն սարսափելի ջարդ կրելով տեղի տուին։

ՀՈՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ԱՐԱԲԱՑ ԱՐՇԱԻԱՆԻՆԵՐԸ ԵՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

(640—1080)

Սահմանեան թագաւորութիւնը կործանեցին արաբները, տիրեցին Պարսկաստանին, տարածեցին այնտեղ Մահմէդի կրօնը և այնուհետև աշխատեցին տիրել Հայաստանին և տարածել հայոց մէջ մահմեդականութիւնը։ Ամբողջ յիսուն տարի կռուելով յունաց հետ, արաբները Հայաստանն արեան, աւերածի և կրակի ասպարէզ դարձրին, մինչև բոլորովին տիրելը եօթերորդ դարու վերջերին։ Առաջին անգամ Հայաստան եկաւ Աբդուրահման 18,000 զօրքով 640-ին և մտաւ Տարօն։ Գայլ Վահանի թոռնորդին, Տիրանը դուրս եկաւ նրա դէմ 8000 զօրքով։ Մնացեալ հայ իշխանները չուզեցան օգնել նրան և Սահուռ Անձևացին էլ պատերազմի ժամանակ դաւաճանեց նրան անցնելով արաբաց կողմը։ Տիրանը զոհ գնաց և արաբացիք հասան մինչև Դուին, տանելով 35,000 գերի։—Այնուհետև արաբացիք մի քանի անգամ յարձակումներ ունեցան Հայաստանի վրայ փոխ առ փոխ։ Երբ արաբացիք հեռանում էին, գալիս էին կրօնամոլ և հայատեաց յոյները. սրանց դէմ էլ իսկոյն կռուելու էին դուրս գալիս արաբները և Հայաստանը կռուախնճոր դառած տյս երկու երկիրների մէջ, արիւնաքամ էր լինում։

Երբ արաբները յետ քաշուեցին, յոյները կրկին երեւացին իրանց դերում և կեսարը Կիւրապաղատ նշանակեց նախ Վարազտիրոցին, ապա նրա որդի Սմբատ Բագրատու-

նուն։ Սպարապետութիւնն էլ յանձնեց Թէոդորոս Ռշտունի իշխանին։ Արաբաց արշաւանքի ժամանակ այս իշխանը միակն էր, որ աշխատում էր միացնել հայ նախարարներին թշնամիներին դիմադրելու համար, բայց սրա ջանքերը զուր անցան։

Արաբացիք նորէն անգին զօրութեամբ Հայաստան մտան և մի քանի գաւառների տիրեցին։ Հայերը յոյս չունենալով յունաց օգնութեան վրայ, դիմեցին ամիրապետին և հնազանդութիւն յայտնեցին նրան։ Կոստանդ կայսրը, որ օգնութիւնը ղլացել էր, կատաղութեամբ արշաւեց Հայաստան, կամենալով բնաջինջ անել բոլոր հայերին։

Ներսէս կաթողիկոս Տայեցին դուրս եկաւ նրա առաջը, ամոքեց նրա բարկութիւնը և կայսրը պահպան զօրք թողնելով հեռացաւ։ Հազիւ կայսրը հեռացել էր և ահա արաբները կրկին արշաւեցին Հայաստան, յունաց զօրքին դուրս քշեցին, երկիրը ծանր հարկերի տակ դրին և բազմաթիւ պատանդներ վերցնելով իշխանական տներից, յետ դարձան։ Տուրքն այնքան ծանր էր, որ հայ նախարարները կրկին կայսեր դիմեցին և նա էլ Համազասպ Մամիկոնեանին կարգեց կիւրապաղատ։ Հայերի այս վարմունքի համար ամիրապետն էլ կոտորել տուաւ մօտ 2000 հայ պատանդները, որոնք գանուում էին Արաբիայում։

Երբ Մաւիէ ամիրապետը պատրաստութիւն տեսաւ Հայաստան արշաւելու, հայերը կրկին հպատակութիւն յայտնեցին նրան։ Համազասպի տեղ, նրա մահից յետոյ ասիրապետը կառավարիչ կարգեց Գրիգոր Մամիկոնեանին, որ երկիրը բարեկարգեց և խաղաղութեամբ պահպանեց 25 տարի։ Գրիգորը մեռաւ Խազրաց դէմ պատերազմելիս։

Յուստինոս կայսրն անձամբ եկաւ Հայաստան, թշնամիներին հալածեց և երկիրն ամբողջովին նուաճեց։ Այնուհետև Ներսէհ Կամսարականին կարգեց պատրիկ և 30,000 զինուոր թողնելով ինքը վերադարձաւ Բիւզանդիա։ Մի տարի չանցած յունաց զօրքը բոլորովին հեռացաւ

Հայաստանից և մեր երկիրն ամբողջովին ենթաց արաբների ձեռքը, եօթերորդ դարու վերջին (693)։

Արաբացիք Հայաստանը կառավարում էին ոստիկանների կամ ամիրաների ձեռքով, որոնք ծանր հարկերով կեղեքում էին երկիրը։ Նրանք իշխաններին և մեծամեծներին կամ գերի էին տանում կամ պատանդ էին վերցնում, իսկ ժողովրդին էլ ծանր հարկի տակ էին պահում, որ չկարողանան ապստամբել։ Զնայելով այդ ճնշումներին, հայերը մի քանի անգամ ապստամբեցան և կոտորելով ոչնչացրին արաբ զօրքը։

Այսպէս Սմբատ Բիւրատեան Բագրատունին գերութիւնից փախչելով յոյներից օգնութիւն ստացաւ և Վարդանակերտի մօտ այնպիսի ջարդ տուաւ արաբաց, որ Աբդըլահ ոստիկանը հազիւ իր գլուխն ազատեց։

Հայերից վրէժ առնելու եկաւ Մոհմատ զօրավարը և անարգել հասաւ մինչև Վանանդ։ Այստեղ Սմբատ Բագրատունին և Ներսէս և Կամսարականը մի սարսափելի ջարդ տուին նրան և փախցրին։

Մոհմատ աւելի մեծ զօրք հաւաքելով, կրկին եկաւ հայոց վրայ, բայց նրա դէմ դուրս եկաւ Ծերունի Սահակ կաթողիկոսը, որ նրա բարկութիւնը մեղմէ։ Ճանապարհին կաթողիկոսը մեռաւ, բայց մեռնելուց առաջ մի թուղթ գրեց Մոհմատին, խնդրելով չկոտորել իր հօտին*)։

Աւանդութիւնը պատմում է, որ երբ Մոհմատը մօտենում է կաթողիկոսի գաւազին, հանգուցեալի ձեռքը բարձրանում է և թուղթը տալիս է ոստիկանին։ Այս թուղթը կարդալով, Մոհմատը ոչ մի վնաս չհասցրեց հայերին։

Մոհմատից յետոյ Հայաստան եկաւ կաշմ ոստիկանը. (740 թ.) որպէսզի նոր ապստամբութեան առաջն առնէ, այս արիւնարբու գազանը հայ իշխաններին հրաւիրեց Նա-

---

*) Կարդալ «Սահակ կաթուղիկոս» — Հայ Հեղինակները գ. տպ. եր. 322.

խիջևանի եկեղեցին և բոլորին միասին այրեց, իսկ նրանց երկիրները սրի և աւարի մատնեց։

Այդ ոստիկաններից բարի անուն թողեց Հայաստանում միայն Մրուանն։ Սա շատ սիրեց Աշոտ Բագրատունուն և երբ Արաբիայում խռովութիւն ծագեց, Մրուանն Հայաստանի ոստիկանութիւնը յանձնեց Աշոտին և անուանեց նրան իշխանաց-իշխան։ Ինքը գնաց Արաբիա և դարձաւ ամիրապետ։

Մրուանից յետոյ Հայաստան եկաւ Եզիդ, որ ծանր հարկերով կեղեքեց ու ճնշեց երկիրը. հայ իշխանները կամեցան ապստամբել, նրանց խորհրդին հակառակ էր Աշոտ Բագրատունին, ուստի նա կուրացաւ Մամիկոնեանների ձեռքով։

Աւելի անողոք և ճնշող էր Պէքիր և Հասան ոստիկանների կառավարութիւնը։ Հայերը կրկին ապստամբեցին և Մուշեղ Մամիկոնեանի առաջնորդութեամբ ամիրային քշեցին Դուինից։ Արաբացիք նոր զօրքով կրկին յարձակուեցին հայերի վրայ, յաղթեցին հայերին և ապանեցին Մուշեղին։ Հարուն-ալ-Ռաշիդի օրով Հայաստանը կրկին նուաճուեց Եզիդ ոստիկանի ձեռքով 786 թ.,

Հայերը կրկին ապստամբեցին արաբաց դէմ Բաբան պարսիկ իշխանի գաշնակցութեամբ։

Բագրատ Բագրատունի պատրիկը և Բաբան պարսիկը կենդրոնացան Սիւնիք։ Նրանց վրայ գնաց արաբ Ամշին զօրապետը, որի հետ միաբանել էր և Սմբատ Բագրատունին։ Բաբան յաղթուեց։ Սմբատի որդին նրան գերի բռնեց և յանձնեց ոստիկանին։ Այնուհետև Բագրատ Բագրատունու վրայ եկաւ Աբուսէթ ոստիկանը և Տարօնում նրան բռնելով, շղթայակապ ուղարկեց ամիրապետին։ Սասունցիք, լսելով իրենց սիրելի իշխանի շղթայուիլը, Ճոնան անունով մի լեռնցու հետ ցած իջան Մշու դաշտը, Աբուսէթին սպանեցին և զօրքը կոտորեցին (849*)։

*) Այս անցքն է, որ ժողովրդական վէպի նիւթ է դառել և յայտնի է «Սասունցի Դաւիթ» անունով։ Կարդալ Հայ հեղինակներից «Սասունցի Դաւիթ»։

Այս ամենից վրէժն առաւ Բուղան, որ ինչպէս մի դիշակեր գազան երկիրը մատնեց աւերի, սրածութեան, հրդեհի և կոտորածի։ Նա բազմաթիւ գերի տարաւ Արաբիա, մեծ մասամբ իշխանական տներից, որոնցից շատերը նահատակուեցին, ուրիշներն էլ հաւատուրաց եղան։

Այնուհետև հայերը նորից ապստամբեցին ու կոտորեցին և նորից նուաճուեցին ու կոտորուեցին արաբներից, մինչև որ Մեծ Հայաստանին թագաւոր դարձան Բագրատունիք։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ, ԱՇՈՏ Ա. ԹԱԳԱՒՈՐ

Աշոտ Բագրատունին իր բարի և ազնիւ, խելօք ու շինարար բնաւորութեամբ գրաւել էր թէ հայ իշխաններին և թէ արաբ ոստիկանի սիրտը։ Բուղա ոստիկանի աւերածութիւններից յետոյ անտէր ու աւերակ Հայաստանը շունչ և հոգի առաւ Աշոտի շնորհիւ, որ իր ահագին հարստութիւնը չխնայեց երկիրը վերաշինելու և թշուառ ժողովրդին օգնելու։ Նրա խնդիրքով գերի նահապետներն ազատուեցին բանտից և վերադարձան Հայաստան։

Այդ ժամանակ Ջահապ պարսիկը 80,000 զօրքով մրտաւ Հայաստան. Աշոտը նրա դէմ ուղարկեց իր Աբասեղբօրը, որ Արաքսի ափին չարաչար կոտորեց պարսիկներին։

Այս յաղթութեան և խելօք ու բարի բնոյթի շնորհիւ Աշոտն ընդհանուրին սիրելի էր եղել այն աստիճան, որ հայ իշխանները խնդրեցին ամիրապետից, որ Աշոտին կարգէ հայոց թագաւոր։ Ամիրապետը յարգեց հայոց խընդիրը և թագ ու ծիրանի ուղարկեց Աշոտին։ Գէորգ կաթուղիկոսը մեծ հանդիսով օծեց նրան թագաւոր Անի քաղաքում 885 թ.։

Նոյն տարին յունաց Վասիլ թագաւորն էլ, որ Արշակունի էր, թագ և բազմաթիւ ընծաներ ուղարկելով, շնորհաւորեց Աշոտի թագաւոր դառնալը։

Աշոտը նորոգեց Սրշակունի թագաւորութեան կարգերն ու պաշտօնները։—Աբասի և իր որդի Սմբատի ձեռքով նուաճեց ապաստամբ Վանանդն ու Գուգարքը և շրջակայ իշխանների հետ խաղաղութեան դաշն կապեց։

Աշոտը մեռաւ Շիրակում, երբ վերադառնում էր Պօլսից, Լևոն կայսեր այցելութիւնից յետոյ։

Ս Մ Բ Ա Տ Ա. (892)

Աշոտին յաջորդեց իր որդին, Սմբատ Ա. որ մեծ սուգ կատարեց հօր մահուան վրայ։ Հազիւ նա թագաւոր էր դարձել, որ ապստամբեցաւ Սմբատ ասպարապետը, բայց յաղթուելով, անձնատուր եղաւ։ Սմբատը նորոգեց իր հօր կապած դաշինքը Լևոն կայսեր հետ։ Պաշարեց Դուին քաղաքը և գերի առաւ նրա մահմեդական իշխանին։ Այս առթիւ չէր կարող դուր գալ Ափշին ատրպատականից անդին զօրքով մտաւ Հայաստան և բանակեց Դուինի առաջ։ Սմբատ թէպէտ անպատրաստ, դուս գիւղի մօտ դուրս եկաւ ոստիկանի դէմ և յաղթելով քշեց նրան Հայաստանի սահմաններից։

Ափշին ոստիկանն այնուհետև մտածեց նենգութեամբ ձեռք ձգել Սմբատին։ Նրա դրդմամբ Սմբատի դէմ ապստամբեց Աշոտ Արծրունի իշխանը, բայց բռնուեց և բանտարկուեց Գագիկ իշխանի ձեռքով։ Նոյն այդ Գագիկը դաւաճանութեամբ անցաւ թշնամու կողմը և մեծ ջնաս հասցրեց Սմբատին, երբ սա պատերազմում էր Միջագետքի Ահմատ ոստիկանի հետ, Տարօնում։ — Ափշին նորէն մի քանի անգամ եկաւ Սմբատի վրայ, բայց չկարողանալով ոչ նրան բռնել, ոչ էլ մեծ աջողութիւն ունենալ, պատանդներ առնելով հեռացաւ։ Բագրատունիք հարկն ուղարկում էին Բաղդատ, Ատրպատականի ոստիկանների ձեռքով։

Երբ Ափշինին յաջորդեց նրա եղբայր Իւսուֆը, Սմբատին աջողուեց ազատուել նրա գերիշխանութիւնից և հարկն անմիջապէս ուղարկել Բաղդատ։ Սակայն, շուտով

Իւսուֆը կրկին ձեռք բերաւ իր իրաւունքները և Սմբատից սաստիկ հարկեր պահանջեց։

Նախարարները նեղացած այդ հարկերից, ապստամբեցին, բայց Սմբատ յաղթելով խեղդեց այդ ապստամբութիւնը։

Այդ ժամանակն էր, որ Գագիկ Արծրունին թագ ստանալով Ատրպատականի ոստիկանից, թագաւորեց Վասպուրականում, միացաւ ոստիկանի հետ, եկաւ դաւաճանութեամբ տակն ու վրայ արաւ Հայաստան։ Սմբատի զօրքը չարդուեց և նրա Մուշեղ որդին գերի ընկաւ. Անպաշտպան մնացած ժողովուրդը մասամբ կոտորուեց, մասամբ ապաստանեց լեռները։ Սմբատը մի խումբ քաջերի հետ ապաւինեց կապոյտ բերդը։ Նրա քաջ զօրականները մի քանի անգամ յետ մղեցին ոստիկանի բանակը։ Բայց Սմբատ երկար պաշարումից և սովից նեղացած անձնատուր եղաւ այն պայմանով, որ իր հետ բոլոր պաշարածներին ձեռ չտան (913)։ Իւսուֆ խոստացաւ, բայց մի ամբողջ տարի բանտարկելուց յետոյ, սպանել տուաւ Սմբատին։

Ա Շ Ո Տ Ե Ր Կ Ա Թ (915—928)

Սմբատի անձնատուր լինելով գրեթէ ամբողջ Հայաստանն ընկաւ Իւսուֆի ձեռքը։ Սմբատի որդին, Աշոտը, հօր մահուան վրէժն առնելու համար իր սակաւաթիւ զօրքերով յարձակուեց Իւսուֆի զօրքերի վրայ և ամեն տեղ յաղթելով հետզհետէ յետ գրաւեց իր հօր կալուածները։ Նախարարները տեսնելով նրա աջողութիւնները, դուրս եկան իրենց բերդերից և Աշոտին թագաւոր նստեցրին (914 թ.)։

Իւսուֆը նորանոր զօրքերով ու ասպատակներով սկսեց աւերել Աշոտի երկիրները։ Նախարարները փոխադարձ կռիւներով ու դաւաճանութեամբ զբաղուած, չէին միանում թագաւորի հետ, որ ընդհանուր թշնամուն դուրս քշէին երկրից։ Երկիրը շարունակ պատերազմների և աւե-

թածուքիւնների պատճառով մեծ անմշակ, որին հետևեց մի սարսափելի սով, այն աստիճան, որ ծնողները մի պատառ հացի համար ծախում էին իրանց զաւակներին։

Յունաց կայսրը վերջապէս յիշեց իր քրիստոնէական պարտքը և Աշոտին Բիւզանդիա հրաւիրելով, նրան մի գունդ օգնական զօրք տուաւ։

Իսուփը, Աշոտի տան մէջ երկպառակութիւն քցելու համար, նրա հօրեղբօր որդուն, Աշոտ անունով, թագ տըւաւ և Հայաստանի թագաւոր կարգեց։ Պատերազմն անխուսափելի էր և երկու ազգական Աշոտներն անվերջ կռիւներով արիւնաքամ եղան, մինչև որ Յովհաննէս կաթուղիկոսի երեք-չորս միջնորդութիւնից յետոյ հաշտութիւն կայացաւ Դուինում մեծ հանդէսներով։

Գուգարաց վաճառական, Ուտէացոց Մովսէս և այլ մեծ ու փոքր իշխաններ, փորձեր արին ապստամբելու և ինքնակալուիլ թագաւոր լինելու։ Շատ չանաց մանաւանդ Թագաւորի եղբայր Աբասը, որ կամենում էր հարազատ եղբօրը սպանել, բայց բոլոր այս փորձերն և ապստամբութիւնները Աշոտը խեղդում էր հէնց բնում, արժանաւոր պատիժը տալով դաւաճաններին։ Այս անվերջ պատերազմների և անասելի արիւթեան համար Աշոտը կոչուեցաւ *Երկաթ*։

Աշոտն իր թագաւորութեան վերջին տարիները կրկին պատերազմի բռնուեց Բէշիր ոստիկանի հետ, որի զօրքը Աշոտի և Գէորգ Մարզպետունու առաջնորդութեամբ հալածուեց Հայաստանից։ Աշոտը մեռաւ 928 թ.։

ԱԲԱՍ, ԱՇՈՏ Գ. ՈՂՈՐՄԱԾ, ՍՄԲԱՏ Բ. ԳԱԳԻԿ Ա.

Աշոտը մեռաւ անժառանգ, նրան յաջորդեց իր եղբայր Աբասը (928—951), որ աշխատեց խաղաղութեամբ կառավարել երկիրը, հաշտութիւն կապեց Դուինի և Ատրպատականի ոստիկանների հետ, գերի հայերին ազատեց արաբների ձեռքից և բազմաթիւ աւեր գիւղ ու քաղաք-

ներ նորոգեց։ Երկիրն սկսաւ հանգստանալ և արհեստներն ու երկրագործութիւնն աճել ու զարգանալ։

Աբասի աթոռանիստը Կարս քաղաքն էր, ուր նա մի հոյակապ եկեղեցի հիմնեց (որ այժմ ռուսաց ձեռին մայր եկեղեցի է)։ Աբխազների Բեր թագաւորը ծաղրով իմաց տուաւ Աբասին, որ գալիս է նրա շինած եկեղեցին յոյն ծէսով օծել տալու։ Աբասը Գէորգ Մարզպետունու հետ, Գուրի ափին, չարդեց Բեր թագաւորի զօրքը և գերի վերցրեց նրան։ Աբասն իր շինած եկեղեցին ցոյց տալուց յետոյ հրամայեց կուրացնել Բեր թագաւորին։

Աբասին յաջորդեց իր որդին, Աշոտ Գ. (952—977). Նա Շիրակը թշնամիներից մաքրելուց յետոյ թագաւոր օծուեց Անի քաղաքում, որ այնուհետև դարձաւ Բագրատունեաց մայրաքաղաքը։

Աշոտը եղբայր Մուշեղը փառասիրութիւնից դրդուած իրան կարսի թագաւոր հրատարակեց (968)։ Հեռատես Աշոտը դժգոհութեան ոչ մի նշան ցոյց չտուաւ այս առթիւ, որով ազգամիջեան կռիւ առաջն առաւ։

Աշոտը մեծ ուշադրութիւն դարձրեց երկրի ամրութեան վրայ, բերդեր շինեց և զօրքի թիւը հասցրեց 20,000 հոգու։ Այս զօրքով նա գնաց Համառն զօրապետի վրայ, որ ամիրապետից ապստամբելով, սպառնում էր Հայաստանի հարաւային սահմաններին։ Աշոտը յաղթեց նրան և գերի առնելով գլխատել տուաւ։

Յունաց Զմշկիկ կայսրը արաբաց դէմ գնալիս բանակեցաւ Տարօն և սպառնում էր Հայաստանին։ Աշոտը միացեալ հայ զօրքերով դուրս եկաւ նրա դէմ։ Կայսրը տեսնելով նրա ահագին զօրքը, օգնութիւն խնդրեց Աշոտից և սուս ու փուս հեռացաւ Հայաստանից,

Այս արտաքին յաղթութիւններից աւելի Աշոտը յայտնի դարձաւ իր ներքին բարեգործութիւններով. հիմնեց շատ եկեղեցիներ ու վանքեր, բաց արաւ բազմաթիւ հիւանդանոցներ և անկելանոցներ, որոնց ապահովեց հարուստ հասոյթներով։ Նա առանց աղքատների ու տնանկ-

ների սեղան չէր նստում, ուստի կոչուեցաւ Աշոտ Ողորմած։

Աշոտ Ողորմածին յաջորդեց իր որդին՝ Սմբատ Բ., որ իր 13 տարուայ թագաւորութեան ընթացքում մի անգամ միայն պատերազմեց իր հօրեղբօր, Մուշեղ թագաւորի դէմ։ Մնացեալ ժամանակ նա խաղաղութեամբ շարունակում էր հօր շինարար գործը, մանաւանդ զարդարելով ու մեծացնելով Անին։

Սմբատին յաջորդեց իր եղբայր Գագիկ Ա.։ Բագրատունեաց տունը սրա ժամանակ հասաւ իր փառքի գագաթնակէտին։ Յոհեմ ու հմուտ, Գագիկի չանքն եղաւ հեռու մնալ պատերազմներից և նուիրուել երկրի բարեկեցութեանը։ Նա իշխեց 30 տարի առանց պատերազմի, մի բան, որ կարելի է ասել չի տեսնուած մեր պատմութեան մէջ և այդ երեսուն տարիների ընթացքում հայ ազգն հանգիստ վայելելով նուիրուեց շինարարութեան և արուեստների։

Առևտուրը զարգացաւ, երկրագործութիւնն աճեց, քաղաքները մեծացան և հարստացան, գիւղերն ու աւանները շէնացան։ Գագիկը հետևելով իր պապերին, բազմացրեց դպրոցներն ու բարեգործական հիմնարկութիւնները։

Նա մեռաւ 1020-ին։

Ա Ն Ի

Մի ժողովրդական առած կայ թէ՝ «դիւնյա եխըլսա, Անի եավրո, Անի եխըլսա, դիւնյա եաիմազ». այսինքն, աշխարհն աւերուի՝ Անին կըշինի, եթէ Անին աւերուի, աշխարհը չի շինի»։ Այնքան մեծ ու նշանաւոր է եղել մի ժամանակ Անին, որ կործանումից 500 տարի յետոյ ժողովուրդը չի մոռացել նրա փառահեղութիւնը, որ հէնց այսօր իր շինութիւնների նրբութեամբ և արուեստի զեղեցկութեամբ զարմանք է պատճառում եւրոպացի ճամբորդներին։

Անին իր փառքի զագաթնակէտին հասաւ Սմբատ



Ա Ն Ի Ի Պ Ա Ր Ի Սպ Ն Ե Ր Ը

Բ. ի և Գագիկի թագաւորութեան ժամանակ, որոնք օգտուելով երկրի խաղաղութիւնից, ամեն չանք գործ դրին շէնացնելու և զարդարելու իրանց մայրաքաղաքը։ Մինչև այսօր կանգուն են Անիի երկու կարգ գեղեցիկ և ամուր պարիսպները, և ներքին շինութիւններից Մայր տաճարը։ Ինչպէս Անիի մեծ մասը, այնպէս էլ այն տաճարի շինութիւնն սկսաւ Սմբատ և վերջացրեց կաթողիկոս Թագուհին, Գագիկի կինը։ Ամենանշանաւոր շէնքերն Անիում Տրդատ ճարտարապետի գործերն են։

Եկեղեցիները, այնքան շատ էին Անիի մէջ եկեղեցիները, որ ժողովուրդը նրանց թիւը կարծում էր հազար և մէկ։

Բագրատունիք երբ Անին գնեցին Կամսարականներից, մի փոքրիկ բերդ էր միայն։ Նա մայրաքաղաք դարձաւ Աշոտ Ողորմածի օրով 952-ին, իսկ Գագիկի մահուան տարին, 1020 թուին, արդէն պատրաստ էին նրա բոլոր գլխաւոր շէնքերը*)։

*) Կարդայ. Հայ հեղինակներ եր, 263. «Դէպի Անի»,

ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

Պրօֆեսսօր Մառի ջանքերի շնորհիւ այսօր բացուած են Գագիկի թագաւորի արձանը, նրա շինել տուած եկեղեցին, Բագրատունեաց պալատը միջնաբերդում և ուրիշ այլ նշանաւոր հնութիւններ։ Այս պեղումներից երևում է, որ ճաշակը, նրբութիւնը և հարստութիւնը անիում հասած էր բարձր աստիճանի։ Անիի նշանաւոր շէնքերի մեծ մասը դեռ հողի տակ է և ապագայ պեղումներից յետոյ միայն պիտի պարզուի այդ հրաշալի քաղաքի անցեալ կեանքի մանրամասները։

ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՍՄԲԱՏ ԵՒ ԱՇՈՏ

Գագիկ Ա-ին յաջորդեց նրա աւագ որդին, Յովհաննէս Սմբատ, որ մի թուլասիրտ և դանդաղոտ մարդ էր։ Նրա Աշոտ եղբայրը, ընդհակառակը քաջ էր և ռազմասէր։ Նա զօրք հաւաքեց, օգնութիւն ստացաւ Վասպուրականի թագաւորից և յարձակուեց իր եղբօր վրայ։ Թագաւորի զօրքը պարտութիւն կրեց։ Պետրոս կաթուղիկոսի և նախարարների միջնորդութեամբ երկու եղբայրները հաշտուեցին։ Պարսից և Վրաց սահմանները յանձնուեցին Աշոտին, իսկ Անին իր շրջակայքով ձնաց թագաւորի իշխանութեան տակ այն պայմանով, որ նրա մահից յետոյ թագաւոր պիտի դառնար Աշոտը։ Սրանից էլ անբաւական, Աշոտը մի քանի անգամ թակարդներ լարեց եղբօր դէմ նրանից թագը խլելու համար, բայց անյաջող։

Այդ ժամանակ էր, որ սկսուեցին Սելջուկեան թուրքերի յարձակումները Հայաստան, Տուղրիլ Բէգի առաջնորդութեամբ։ Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը չարաչար յաղթուելուց յետոյ անկարող էր երկրորդ անգամ դուրս գալ Տուղրիլ-Բէգի դէմ, ուստի իր բոլոր երկիրները յունաց թագաւորին տալով, փոխարէնն ստացաւ Սեբաստիա քաղաքը և տանով տեղով հաստատուեց այնտեղ (1021)։

Յունաց վասիլ կայսրը Վրաստանը նուաճելուց յետոյ 1023 թ. մօտենում էր Հայաստանի սահմաններին։ Վախկոտ և թուլամորթ Յովհաննէս-Սմբատը, որ ծածուկ օգնել էր վրաց թագաւորին, վախեցաւ յոյներից և Պետրոս Գետադարձ կաթուղիկոսի ձեռքով երդման թուղթ ուղարկեց, որ յանձն է առնում իր ժահից յետոյ Անին կայսեր թողնել։

Վասիլին շուտով յաջորդեց Կոստանդին։ Սա լինելով քաջի մարդ, մահից առաջ յանձնում է Յովհաննէս-Սմբատի նամակը հայ Կիրակոս քահանային ասելով. «Տար տուր այս նամակը քո թագաւորին և ասա, որ չեմ ուզում ուրիշի սեփականութիւնը յափշտակել»։

Դաւաճան քահանան չկատարեց կայսեր կամքը, այլ նամակը մօտը պահելով, թանգ գնով ծախեց նրա յաջորդ Միքայէլ կայսեր (1034-ին)։

Գ Ա Գ Ի Կ Բ.

Շուտով մեռան Յովհաննէս-Սմբատ և իր եղբայրն Աշոտ։ Թառանդ ձնաց Աշոտի փոքրահասակ որդին, Գագիկ։ Երկիրը ձնաց անտէր և դարձաւ նախարարների ու սրատա-

քին թշնամիների կռուի ասպարէզ։ Շուտով հասան և կայսեր դեսպանները, որոնք պահանջում էին Անին յանձնել յունաց։

Միացեալ նախարարները մերժեցին այս պահանջը։ Յոյները երեք անգամ Հայաստան մտան, առանց իրանց նպատակին հասնել կարենալու։ Չորրորդ անգամ 100,000 հոգով նրանք պաշարեցին Անին։ Դրութիւնը վտանգաւոր էր, բայց վահրամ Պահլաւունի սպարապետը 30,000 զօրքով յարձակուեց յոյների վրայ, որոնք 20,000 մեռած ու վիրաւոր թողնելով, սարսափահար յետ փախան։

Անի մայրաքաղաքում այդ ժամանակ միմեանց հետ կռուի մէջ էին երկու կուսակցութիւն. մինի գլուխն էր Վեստ-Սարգիս-Սիւնի իշխանը, որ տէրութեան խնամակալն էր և շատ բերդեր ու գանձեր գրաւելուց յետոյ, կամենում էր ինքը թագաւոր դառնալ և կամ հայոց թագը յունաց յանձնել։ Միւս կուսակցութեան գլխաւորն էր վահրամ Պահլաւունի սպարապետը, որ կամենում էր թագը յառաձնել աշոտի որդուն, իսկական թագաժառանգին։ այս յաղթութիւնից յետոյ վահրամ իշխանը բերել տուաւ Գագիկին Անի և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը օծեց նրան թագաւոր (1042)։

Վեստ Սարգիսն ամրացաւ Անիի Միջնաբերդում։ Երիտասարդ թագաւորն առանց թիկնապահի, մենակ գնաց նրա մօտ և համոզեց հեռանալու։ Ապա տեսնելով նրա չարագործութիւնները, բռնեց նրան և բանտարկեց Անիում։ Սակայն Վեստ Սարգիսը քաղցր ու կեղծաւոր լեզուով գրաւեց երիտասարդ թագաւորի սիրտը և նրա իսկական բարեկամներին հեռացրեց ու թշնամացրեց թագաւորին, միւս կողմից էլ յոյներին դրդեց, որ շարունակեն իրանց պահանջները։

Սակայն Գագիկը երկու անգամ չարաչար կոտորելով Մոնոմախոս կայսեր զօրքը, յետ դարձրեց ձեռնունայն։

Կայսրը դիմեց խորամանկութեան։ Նա Գագիկին հրաւիրեց Կ. Պոլիս մշտական դաշն կապելու համար, պետականների ներկայութեամբ խաչի ու աւետարանի վրայ երդ-

ուեց, վնաս չտալ նրան։ Գագիկ չէը վստահանում, բայց վեստ Սարգսի կուսակիցներն ու Պետրոս կաթողիկոսը համոզեցին Գագիկին երթալու և նրան ապահովելու համար երգման թուղթ գրեցին։ Գագիկը չլսելով Պահլաւունիներին և գնաց Պոլիս։ Կայսրը նրան մեծ պատուով ընդունեց, բայց երբ Գագիկը յանձն չառաւ Անին նրան տալու, Գագիկին աքսորեց Ռափորի կղզիներից մինը։

Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, որին Գագիկը յանձնել էր Անիի բանալիները, բանակցութեան մէջ մտաւ կայսեր հետ և մեծ վարձատրութիւն ստանալով, Անիի քառասուն բալանիներն ուղարկեց կայսեր։

Գագիկը յուսահատուած թուղթ ստորագրեց, որ հրաժարւում է իր թագաւորութիւնից և փոխարէն ստացաւ Կապադովկիոյ Բիզու քաղաքը (1045 թ.)։

Յոյն զօրքերն եկան Անիին տիրելու, բայց դռները փակ գտան։ Հայ զօրքը քաղաքացիների հետ միացած յարձակուեց յունաց վրայ, ջարդեց և հալածեց նրանց։ Սակայն շուտով բօթը հասաւ, որ Գագիկը հրաժարուել է թագաւորութիւնից։ Անին սուգ մտաւ և յոյները յետ կանչուեցին քաղաքին տիրելու։

Հայ իշխաններն իրանց անմիաբանութեան պտուղը չարաչար վայելեցին։ Յոյները նախ աշխատեցին ցրուել հայ զօրքը և տիրել նշանաւոր բերդերին։ Այնուհետև նրբանք ծանր հարկերով սկսան քամել ժողովրդի արիւնը։ Որպէս զի ապստամբելու առաջն առնեն, նրանք մի կողմից հալածում ու կոտորում էին հայ իշխաններին, միւս կողմից թունաւորում կամ բանտարկում։ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին էլ բռնեցին և Պոլիս ուղարկեցին։

Միւս կողմից Տուղրիլ Բէգը, տեսնելով Հայաստանի անառիկ ամրերը, զօրքով մտաւ Հայաստան, առաւ Սմբատաբերդը, և բնակիչներին սրի քաշեց։ Տիրեց Արծն քաղաքին, որ 150,000 բնակիչ ունէր և կոտորեց ու թալանեց բոլորին։ Տիրեց այնուհետև Արծկէ քաղաքին և սրի անցկացրեց բնակիչներին։ Տուղրիլի գազանութիւններից ազատ մնաց Մանազկերտը, որ պաշտպանուեց մի քահանայի և մի

ֆրանկ քիմիկոսի հնարքով, որոնք թուլացնում և այրում էին թշնամու բաբանները (պաշարման գործիքները)։

Տուղրիլի գազանութիւնները շարունակեց նրա եղբայր Ալփասլան, որ Անին առաւ շնորհիւ հայ իշխանների թուլասրտութեան և կործանեց (1064)։

Ալփասլան դեսպան ուղարկեց Կարս Գագիկ թագաւորին, որ գայ և հպատակի։ Գագիկը սուգի շորերով և ողբալով ընդունեց դեսպաններին, ասելով, որ սգում է իր բարեկամ Տուղրիլի մահը։ Այս բանը շարժեց Ալփասլանի գութը և նա անվնաս թողեց Գագիկին։ Սակայն, Գագիկն էլ միւս հայ իշխանների նման իր երկիրն յուսնաց տալով, փոխարէնն ստացաւ Փոքր Հայոց Ծմնդաւ բերդը։

Շուտով Ալփասլանը տիրեց ամբողջ Հայաստանին և սկսաւ սպառնալ Յունաստանի սահմաններին։

Այսպիսով յոյները ոչ միայն չկարողացան Հայաստանն իրանց ձեռում պահել, այլ հայերի փոխանակ, իրանց դէմն ստեղծեցին մի կատաղի և վտանգաւոր թշնամի։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ՌՈՒԲԵՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆ

Բագրատունեաց թագաւորութեան վերջին շրջանում, ԺԱ. դարու վերջերը Հայաստանում հայ ժողովրդի, ինչպէս և իշխանների կացութիւնն անտանելի էր։ Արաբներ, յոյներ, սելճուկ թուրքերի յարձակումները միաժամանակ, հայ մանր թագաւորների և նախարարների անմիաբանութիւնը, փոխադարձ նախանձն ու կռիւները այն աստիճանի հասան, որ այլևս անկարելի էր բնիկ Հայաստանում մնալը։ Ուստի, ինչպէս տեսանք, շատերը հայ իշխաններից և թագաւորներից թողնելով իրանց բնիկ երկիրները յոյներին, տեղափոխւում էին դէպի արևմուտք, Փոքր Ասիայի խորերը, որոնելով բնակութեան աւելի ապահով տեղեր։ Այդ երկիրների մէջ ամենից նպաստաւորն իր դիրքով Կիլիկիան էր, Միջերկրականի ափին տարածուող լեռնաշղթան։ Կիլիկիան բաժանւում է երկու մասի, ծովափնեայ կամ դաշտային, որ վերին աստիճանի տաք ծովային կլիմայ ունի և պտղաբեր մի երկիր է, և քարայինկամ լեռնայինն, որ բարձր ու ապահով դիրք ունի և իջնում է դաշտային Կիլիկիայի վրայ, թէպէտ ցուրտ է և անբերրի։ Այդ լեռնային Կիլիկիայում դարերից իվեր ապաստանել էին հայ գաղթականները. որոնց թիւը հետզհետէ աճելով, 10—11 դարերում գրեթէ յոյներին և ասորիներին հաւասար վանքեր ունէին։—

Ի նկատի ունենալով այդ երկրի վերին աստիճանի ապահով դիրքը, հայ իշխաններից ոմանք բնակութիւն էին հաստատել և հետզհետէ ընդարձակում էին իրանց երկիրներն ի հաշիւ յունաց։ Այդտեղ հաստատուեց Գագիկ Բ. ի ազգական Ռուբէն իշխանը, 1080-ին բարձր բերդի մօտերը, Գոռոմոզոլ գիւղի մէջ։ Շնորհիւ իր խելքի և քաջութեան՝ նրա մօտ խմբուեցին բաւականաչափ հայեր, որոնց օգնութեամբ նա տիրեց շրջակայքին և մաքրեց յոյներից։ Ռուբէնի յանքն եղաւ այնուհետև մի կողմից հայ ժողովրդով բնակեցնել իր լեռնոտ երկիրը, միւս կողմից իր դիրքը ամրացնել շրջակայ հայ իշխանների աջակցութեամբ և բարեկամութեամբ։ Կոստանդինը. (1095) Ռուբէնի որդին և յաջորդը հօր երկիրներն ընդարձակեց նոր պատերազմներով և իր աթոռն հաստատեց Վահկայ բերդում։

Սրա ժամանակ էր, որ արևմտեան քրիստոնեայ ազգերը (կրոպացիք) մեծ բազմութեամբ յարձակուեցին Եգիպտոսի մահմեդական իշխանների վրայ, նրանց ձեռից Երուսաղէմն ազատելու նպատակով։ Այդ պատերազմներն յայտնի են խաչակրաց արշաւանք անունով։ Կոստանդինը ուղղակի յարաբերութեան մէջ մտաւ նրանց հետ և ամեն

տեսակ օգնութիւն ցոյց տուաւ խաչակիրներին պաշարով ու զօրքով։ Խաչակիրներն էլ գնահատելով Կոստանդնի ծառայութիւնը, մարկիզի տիտղոսը տուին նրան։

ԹՈՐՈՍ Ա.

Կոստանդինը (1100) մեռնելով, իշխանութիւնը թողեց իր Թորոս որդուն։ Սա պատերազմի բռնուեց յունաց կայսեր հետ և Անարզաբայ քաղաքն իր գաւառով խլեց յոյներից։ Սելճուկեան թուրքմէնները երկու անգամ ահագին բազմութեամբ յարձակուեցին և թալանեցին Թորոսի տիրած երկիրները։ Գող-Վասիլ կոչուած իշխանը, Թորոսի եղբայր Լեւոնի հետ երկու անգամին էլ դուրս քշեց ասպատակներին իր երկրի սահմաններից։

Թորոսն այնուհետև սկսաւ իր սահմանները ընդարձակել գնալով դէպի հիւսիս, մինչև Կապադովկիայ Այնտեղ կիզիսարիա բերդում դեռ իշխում էին յոյն Մանդալեան եղբայրները, որ սպանել էին Բագրատունի վերջին թագաւոր Գագիկին։ Մանդալեան եղբայրներն ընծաներով դուրս եկան Թորոսին ընդառաջ, բայց Թորոսը յետ դարձրեց նրանց ընծաները և պաշարելով, տիրեց բերդին։

Երբ բերդի գանձարանից դուրս եկան Գագիկ թագաւորի սուրն ու հագուստը, հայերն ամենքը լաց եղան։ Թորոսը Մանդալեան եղբայրներից մինին սպանել տուաւ, իսկ միւսին դերի տարաւ, լուծելով սպանուած թագաւորի վրէժը։

Թորոսը մեռաւ անզաւակ, ուստի նրան յաջորդեց իր եղբայր Լեւոն Ա. 1123-ին։ Սա շարունակեց իր նախորդների նուաճումները, յոյներից խլեց Մամեստիան և տիրեց Տարսոն մայրաքաղաքին, որով գրեթէ տէր դարձաւ ամբողջ Կիլիկիային։ Լեւոնը դաշն կապելով թուրքերի հետ, գնաց Անտիոքի վրայ։ Մի քանի տարի յետոյ, Անտիոքի իշխանը, Բոհեմոնտ, խորամանկութեամբ Լեւոնին գերի բռնեց։ Գերութիւնից ազատուելու համար Լեւոն Բոհեմոնտին տուաւ Առանա և Մամեստիա քաղաքները, 60,000 դահեկան փրկանք և մի որդին իբրև պատանդ։

Սակայն, պատերազմով յետ խլեց թէ տուած քաղաքները և թէ պատանդը։

Լեւոնը շուտով պատերազմի բռնուեց Յովհաննէս Կոմնենոս կայսեր հետ, կամենալով պաշտպանել արդէն դաշնակից Անտիոքին։ Կայսրն Անտիոքը թողնելով մտաւ Կիլիկիա, հետզհետէ նուաճեց ամբողջ Կիլիկիան և պաշարեց Վահկան, Լեւոնի աթոռանիստը։ Կայսրը նրան երկու որդոցը հետ՝ Ռուբէնի և Թորոսի, շղթայակապ ուղարկեց Կ. Պոլիս։ Յոյները նախ կուրացրին Ռուբէնին, ապա սպանեցին։ Որդու այս տանջանքների վրայ սրտի ցաւից մեռաւ Լեւոնը բանդի մէջ շղթայակապ։

ԹՈՐՈՍ Բ. և ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿՐԿԻՆ ՆուաճումԸ։

Լեւոնի գերի գնալուց յետոյ Կիլիկիան ընկաւ յունաց ձեռքը, որոնք չարաչար կողոպտեցին թէ ժողովրդին և թէ նրա վանքերն ու սրբութիւնները։ Միւս կողմից թուրքերն ու լատին իշխաններն սկսան տիրել Թորոսի երկիրներին։ Կոմնենոս կայսրը կրկին արշաւեց Կիլիկիա, ուր նա սպանուեց պատերազմելիս։ Կայսեր հետ Կիլիկիա էր եկել և՝ Թորոսը, Լեւոնի որդին, որ հօր մահից յետոյ ծառայում էր կայսերական բանակում։ Օգտուելով կայսեր մահից, նա հեռացաւ բանակից և մի հայ քահանայի օգնութեամբ իր չորս կողմն սկսեց հաւաքել հայերին, որոնք սաստիկ զզուել էին յոյներից։ Շուտով Կիլիկիա եկան Թորոսի եղբայրները, Սաեփան ու Մլէհ և Թորոսի զօրքի թիւն հասաւ 10,000 հոգու (1145)։ Թորոսն ամենից առաջ տիրեց հայրենի Վահկա բերդին, ապա միւս լեռնային ամրութիւններին։ Այնուհետև իջաւ դաշտ և սկսաւ հետզհետէ գրաւել Առանա, անարզաբա, Մամեստիա և այլ նշանաւոր քաղաքներն ու ամրոցները։

Կիւմանուէլ կայսրը իր ազգական Անդրոնիկոսին ուղարկեց Թորոսի դէմ։ Սա մի քանի հայ իշխանների հետ

միասին պաշարեց Մամեստիան, ուր ամրացած էր Թորոսը։ Թորոսը հաշտութիւն խնդրեց, խոստանալով ճանաչել կայսրի գերիշխանութիւնը, սակայն Անդրոնիկոսը պահանջում էր անձնատուր լինել, որպէսզի Թորոսին կապէն իր հօր շղթաներով։ Մի մութ և անձրևային գիշեր Թորոսը պատռելով պարիսպը, անցաւ Թշնամու յետևը, սարսափելի ջարդ տուաւ և փախցրեց Թշնամուն։ Հասարակ զերիներին նա ազատ արձակեց, իսկ անուանի յոյներից մեծ փրկանք առաւ և բաժանեց իր զինուորներին։ Գերիների մէջ էր և Լամբրոն բերդի տէր հայ իշխան Օշինը, որ փրկանքի կէսը տուաւ, մէկ էլ իր Հերթում որդուն իբրև պատանդ։

Լամբրոնի իշխանները թէպէտ սկզբում օգնեցին Ռուբինեաններին, բայց վերջերը շարունակ հակառակ էին նրանց։

Թորոսը մեծացնելով Հեթումին իր պալատում, շատ սիրեց նրան և իր աղջիկը տուաւ նրան կնութեան, ապա երկուսին էլ ուղարկեց Լամբրոն։ Օշինի մեռցած պարտքն էլ նա հաշուեց իբրև օժիտ իր աղջկանը, այլևս չպահանջեց կամենալով նրան բարեկամացնել իր տան հետ։

Իսկոնիայի սուլթան Մաղսուտը երկու անգամ յարձակուեց Թորոսի վրայ Մանուէլ կայսրի դրդմամբ. բայց երկու անգամին էլ յետ դարձաւ ձեռնունայն։ Վերջին անգամը նրա զօրքերը սարսափելի ջարդ կրեցին ժանտախտից և Թորոսի եղբայր Ստեփանից Թիլ ամրոցի մօտ։ Թորոսի զօրքերն այդ բանն անպատիժ չթողնելու համար մտել և ասպատակել էին Սուլթանի երկիրները (1154)։

Մանուէլ կայսրն էլի չհանգստացաւ խարդաւանքից։ Նախ Թորոսի դէմ լարեց Անտիոքի խնամակալ Շատիլիոնին, ապա ուղարկեց իր սեփական զօրքերը, որոնք չարաչար յաղթուեցին Տարսոնի մօտ, գերի տալով իրանց զօրավարին։

Այս անաջողութիւններից յետոյ կայսրը խորամանկութեան դիմեց, լուր տարածելով թէ Թուրքերի դէմ պատերազմի է դնում, իբր. Կիլիկիա և եկաւ Տարսոնի վրայ։

Մի լատին ուխտաւոր իմաց տուաւ Թորոսին յունաց պաշտան վարմունքը և անպատրաստ Թորոսն ապաստանեց հայրենի լեռները։ Կայսրը գրաւեց երկրի նշանաւոր քաղաքները։ Այդ ժամանակ նրան այցի եկաւ Երուսաղէմի Բալտուին Գ. թագաւորը։ Սա հաշտեցրեց Թորոսին և կայսեր։ Անարզաբա և Մամեստիա քաղաքները ետացին կայսեր, իսկ Թորոսը հաստատուելով իր իշխանութեան մէջ, ստացաւ Պան-սեպաստոս տիտղոսը։

Թորոսը շարունակ օգնում էր Լերոպացի խաչակիրներին ընդդէմ մահմետական սուլթանների։ Նրա եղբայր Ստեփանէն Իկոնիայի և Սեբաստիայի սուլթաններից հող գրաւելով Սև լերան կողմը մի փոքրիկ իշխանութիւն հաստատեց։ Կայսեր յոյն տեղակալը, որ նստում էր Մամեստիա, նախանձելով, ճաշի հրաւիրեց Ստեփանէին և առացրած կաթսայի մէջ քցելով կենդանի խաշեց նրան։

Այս գազանաբարոյ վարմունքը զայրացրեց Թորոսին ու Մլեհին, որոնք վրէժ լուծելու համար 10,000 յոյն կոտորեցին։ Անդրոնիկոսը կայսրի հրամանով դարձեալ կիլիկիա եկաւ, բայց Թորոսը նրան չարդելով փախցրեց։ Նրա յաջորդ Կոստանդին Կաստամոնոս գերի ընկաւ Թորոսի ձեռքը խայտառակ պարտութիւնից յետոյ։ Այս պատերազմների շնորհիւ Կիլիկիան ընդմիշտ դուրս եկաւ կայսեր ձեռից և դարձաւ մի անկախ հայկական իշխանութիւն։

Թորոսի որդին, Ռուբէնը, դեռ անչափահաս էր. ուստի Թորոսը մահից առաջ (1168 թ.) իր աներոջ Թոմասին նշանակեց իր իշխանութեան Պայլ խնամակալ։

Մ Լ Է Հ (1170—1175)

Հօր գերութեան պատճառով Մլեհ մեծացաւ անխնամ և անկիրթ. նախ նա քաջութեամբ օգնեց իր եղբօր բարձրանալուն, ապա մոնելով տաճարական ասպետների կարգն, ընդունեց կաթոլիկութիւն, այնուհետև դառնալով ժահմեական՝ անցաւ թափառական թիւրքմէնների գլուխը և կամենում էր սպանել հարազատ եղբօրը։ Թորոսը նրան նե-

քեց և Մլէհ այնուհետև ապրում էր Նուրէդդինի մօտ։

Թորոսի մահից յետոյ Նուրէդդինի օգնութեամբ Մլէհ տիրեց Կիլիկիային և իր գաղանաբարոյ վարմունքով ահ ու սարսափ տարածեց ամեն կողմ։ Կողոպտեց իր հակառակորդներին և հոգևորականներին։

Թոմաս պայլը Ռուբէնին փախցրեց Անտիոք, այնտեղից էլ ուղարկեց Ներսէս Շնորհալու մօտ, Հռոմկլայ, ուր և մեռաւ Ռուբէնը։ Մլէհ Կիլիկիայից դուրս քշեց բոլոր տաճարականներին և նրանց կայքը գրաւեց. Երուսաղէմի թագաւորների դեսպաններին կողոպտեց, որոնք գնում էին կայսեր մօտ։ Որքան թշնամի, հակառակորդ և հալածող էր քրիստոնեայ խաչակիրներին, այնքան Մլէհ բարեկամ էր մահմեդականներին, մանաւորապէս Նուրէդդին սուլթանին։ Հայ իշխանները զզուած ու ձանձրացած նրա վարմունքից, սպանեցին նրան Սիս քաղաքում 1175-ին։

Իշխանների ցանկութեամբ Մլէհին յաջորդեց Ստեփանէի որդին, Ռուբէն Բ.։ Սա իր հեզ ու խելօք բնաւորութեամբ մոռանալ տուաւ Մլէհի չարագործութիւնները և գրաւեց ժողովրդի սէրն ու յարգանքը։

Սրա ժամանակ Լամբրոնի իշխան Հեթումը կրկին գլուխ բարձրացրեց, որ Թորոսի մահից յետոյ ատելութիւնից հեռացրել էր իր կնոջը։ Ռուբէնը պաշարեց Լամբրոնը։ Հեթումը դիմեց Անտիոքի իշխան Բոհեմոնդի օգնութեան։ Սա խաբէութեամբ հրաւիրեց Ռուբէնին Անտիոք, ձանաւարկեց նրան և ուզում էր Կիլիկիան տիրել։ Սակայն Լևոնը, Ռուբէնի եղբայրը, դուրս եկաւ նրա դէմ, Բոհեմոնդի առաջն առաւ, Հեթումին ստիպեց հաշտութիւն խնդրել և ազատել տուաւ եղբօրը գերութիւնից։ Քիչ ժամանակից Ռուբէնը վանք քաշուելով կառավարութիւնը յանձնեց իր եղբայր Լևոնին։

ԼԵՒՈՆ Բ. ԹԱԳԱՒՈՐ 1185—1219

Հազիւ կառավարութիւնն իր ձեռն էր առել Լևոնը, որ ստիպուած եղաւ Իկոնիայի Ռուստէմ սուլթանի դէմ դուրս գալու։ Լևոնը պատերազմից յաղթող դուրս եկաւ, իսկ Ռուստէմը մեռաւ։ Լևոնի վրայ եկան Հալէպի և Դամասկոսի սուլթանները միաբան, որոնց նոյնպէս ջարդեց և յետ դարձրեց Լևոնը Ձեռնունայն (1178)։

ԼԵՒՈՆ Բ.

Այս յաղթութիւններից յետոյ Լևոնն ամրացնելով երկրի սահմանները, նուիրուեց երկրի տնտեսական և բարոյական բարգաւաճումին, հիմն եց բազմաթիւ վանքեր, ուր այն ժամանակ տրուում էր ուսում ու կրթութիւն, հաստատեց որբանոցներ ու հիւանդանոցներ։ Ամեն կերպ նպաստեց առևտրին, երկրագործութեան և արուեստների զարգացմանը, որով թէ իր ժողովրդի դրութիւնը բարւոքեց և թէ օտարների առաջ պատկառելի դարձաւ։ Լևոնի երկիրներն ընդարձակ էին, հարուստ և ամեն կողմից ապահոված. մի թագաւորական թագ էր պակաս նրան, այդ էլ նա շուտով ստացաւ։

Այդ ժամանակ Եգիպտոսի սուլթան Սալահեդդինը Երուսաղէմը խլել էր խաչակիրների ձեռքից։ Գերմանացի կայսր Ֆրիդրիկոս բարբարոսան (շիկամօրուս) նոր արշա-

ւանք կազմակերպեց և եկաւ հասաւ Իսաւրիա։ Լսելով Լևոնի համբաւը, կայսրը նրանից օգնութիւն խնդրեց փոխարէնը խոստանալով թագ։ Լևոնն իր նախորդների պէս մեծ պաշար ուղարկեց կայսեր զօրքերի համար, խոստացաւ ամեն կերպ օգնել նրան և Գրիգոր կաթուղիկոսի ու Ներսէս Լամբրոնացու հետ ընդառաջ գնաց կայսեր դիմաւորելու, Սակայն կայսրը լողանալիս խեղդուեց Կալիկատնոս գետում և Լևոնի փափագը մնաց առժամանակ անկատար։ Կայսեր յաջորդը, պապի հետ միասին, մի քանի տարի յետոյ թագ և առիւծանշան դրօշ ուղարկեցին Լեւոնին։ Տարսոնում, 1198 թ. Լևոն ձեռնադրուեց թագաւոր Գրիգոր Զ. կաթողիկոսի ձեռքով։ Ամեն կողմից մեծամեծ ընծաներով շնորհաւորեցին Լևոնի թագաւոր օծելը. նոյն իսկ յունաց կայսրը թագ ուղարկեց Լևոնին, որով ճանաչեց նրա իշխանութիւնը Կիլիկիայի վրայ։

Լևոնը մայրաքաղաքը տեղափոխեց Սիս[1]) աւելի ապահովութեան համար։ Այնուհետև աշխատեց արոպական կարգ ու կանոն մտցնել ինչպէս պալատում, այնպէս և երկրի մէջ։ Հիմնեց դպրոցներ, դատարաններ. առևտուրը զարգացնելու համար վենետիկցոց ու Ջենովացոց տուաւ հրովարտակներ, որ մինչև այժմ պահուած են։ Լևոն մօտիկ յարաբերութիւն և բարեկամութիւն հաստատելով Եւրոպացոց հետ, իր երկիրն ապահովեց յոյներից։ Սակայն, Եւրոպացիք էլ աշխատում էին կաթոլիկութիւն տարածել և երկպառակել հայ ազգը։ Ոմանք հայերից յարեցան կաթոլիկութեան, բայց արևելեան հայերը կատաղի կռիւ սկսեցին դրա դէմ և հայ եկեղեցին ազատեցին կաթոլիկութեան գիրկն ընկնելուց։

*) Կարդալ. Հայ հեղինակներ «Ջրօրհնէքը Լևոնի օրով»։

Անտիոքի ժառանգութեան համար Լևոն 12 տարի պատերազմ ունեցաւ, որից դուրս եկաւ յաղթութեամբ։ Անտիոքի ժառանգն էր Լևոնի եղբօր թոռը, Ալիզա աղջկանից, Ռուբէնը։ Սակայն նրան հակառակորդ դուրս եկաւ և դաւաճանութեամբ իշխանութիւնը խլեց իր հօրեղբայրը, Բոհեմոնտ։ Լևոնն Անտիոքին տիրելով կրկին իշխան կարգեց իր ազգականին։ Կրկին նրա հօրեղբայրը հալածեց Ռուբէնին Անտիոքից և Իկոնիայի սուլթանին Լևոնի վրայ ուղարկեց։ Լևոնը սրան էլ յաղթեց և գործը խաղաղութեամբ վերջացնելու համար Հռոմի պապին յանձնեց։ Պապի կողմից գործը քննելու եկան երկու կարդինալներ, որոնցից մինը կաշառուած հակառակորդից, Լևոնի դէմ նզովք ու բանադրանք հրատարակեց։ Զայրացած Լևոնն առանց սպասելու դատի վախճանին, նորից յարձակմամբ տիրեց Անտիոքին։ Նա մեծ հանդիսով Ռուբէնին հաստատեց իր տեղում և այսպիսով վերջ տուաւ 12 տարուայ արիւնահեղութեան։

Լևոնի երկրորդ կինը Կիպրոսի իշխան Լուսինեաններից էր։ Երբ Լևոնն այցելութեան գնաց իր ազգականներին և միամիտ յետ էր դառնում, թշնամիները յարձակուեցին նրա վրայ, Լևոնն ազատուեց նրանց ձեռքից, ապա նոր պատրաստութեամբ յարձակուելով՝ նրանց նաւերը ոչնչացրեց, իսկ զօրքը կոտորել տուաւ ու ցրուեց։ Լամբրոնի տէր Հեթումն էլ օգտուելով Լևոնի բացակայութիւնից ապստամբել էր։ Լևոնը նրան էլ բռնել տուաւ և բանտարկեց։

Շատ ժամանակ չանցած Հալէպի սուլթանը Լևոնից պահանջեց հարկ և հպատակութիւն. սա առանց ժամանակ կորցնելու յարձակուեց նրա վրայ, չարդեց սուլթանի զօրքը և ստիպեց նրան իր պահանջած հարկից աւելի տուգանք վճարել։

Լևոնը թագաւորից 33 տարի Ռուբինեան փոքրիկ իշխանութիւնը դարձնելով թագաւորութիւն և հաստնելով իր փառքի գագաթնակէտին, մեռաւ 1219-ին։ Մարմինը թաղուեց Սիս մայրաքաղաքում։

ՋԱՊԷԼ ԵՒ ՓԻԼԻՊՈՍ. ՀԵԹՈՒՄ Ա. ԼԵՒՈՆ Գ.

Լևոնն արու զաւակ չունենալով ժառանգ էր նշանակել իր Զաբէլ աղջկանը Ադամ պայլի և Կոստանդինն պարոնի խնամակալութեամբ։ Ռուբէն-Հայմոնդը, Լևոնի ազգականը, կամենալով թագը խլել Զապէլից, խաչակիրների օգնութեամբ տիրեց Տարսոնին և թագաժառանգ հրատարակեց իրան։ Կոստանդին պարոնը թագաւորական զօրքով յաղթեց նրան և գերի առնելով բանտարկեց։ Հայ իշխանների խորհրդով նա Զապէլին ամուսնացրեց Անտիոքի իշխան Բոհեմոնտ Մխականի որդու Փիլիպոսի հետ այն պայմանով, որ հայ եկեղեցու կարգերն ընդունէ և պահպանէ (1222)։ Փիլիպոսը հաւատարիմ չմնաց իր խոստման և հայերին արհամարհելով միաքը դրեց, գանձերն Անտիոքը ուղարկելուց յետոյ ինքն էլ փախչել կնոջ հետ։ Կոստանդինը վրայ հասաւ, բռնեց նրան ճամբին և բանտարկեց, ուր և նա մեռաւ։

Այնուհետև Կոստանդինը կաթողիկոսի և հայ մեծամեծների համաձայնութեամբ Զապէլին ամուսնացրեց իր որդու Հեթումի հետ, որի օծումը տեղի ունեցաւ 1227-ին։ Այսպիսով Կիլիկիայի Ռուբինեան տոհմը խնամիացաւ Պապեւոնի Հեթումեանների հետ և իշխանութիւնը անցաւ այս վերջնին։

Տէրութիւնը կառավարում էր Հեթումի խելօք ու փորձառու հայրը. զօրքի գլուխը կանգնած էր Հեթումի եղբայր Սմբատը։

Հեթումի ժամանակ արդէն սկսուել էին թաթարական արշաւանքները, որոնք եկան հասան Իկոնիա և յարձակուելով Սուլթան Ղայասէդդինի վրայ, յաղթեցին նրան։ Ղայասէդդինն ապահովութեան համար իր ընտանիքն ուղարկել էր Հեթումի մօտ։

Հեթումը տեսնելով թաթարների աջողութիւնը, բաշխեց զօրավարի հետ դաշն կապեց մամլուքականների դէմ։

Դաշնագրութիւնը կայացաւ այն պայմանով, որ Հեթումը պիտի բաշխէին յանձնէր Ղայասէդդինի ընտանիքը։

Ղայասէդդինը վրէժ լուծելու համար Համբրոնի Կոստանդին իշխանի հետ յարձակուեց Հեթումի վրայ։ Հեթումը յաղթեց թշնամիներին, սուլթանն սպանուեց, իսկ Համբրոնի իշխանն ստիպուեց խոնարհուել թագաւորի առաջ։

Թաթարաց հետ կապած դաշը հաստատուն անելու համար Հեթումը Թաթարստան ուղարկեց նախ իր եղբօրը, ապա գնաց ինքն անձամբ, Մարգոյ խանին տեսութեան (1253)։ Խանը նրան մեծ պատուով ընդունեց և մշտական դաշն կապեց։ Հեթումի ճամբորդութիւնը երեք ու կէս տարի տեւեց։ Հեթումի հետ եկաւ Մանգոյ խանի եղբայր Հուլաղուն, որ գնաց ասորոց կողմերը, իսկ Հեթումը յարձակուեց Սուլթան Ազէդդինի վրայ, որը տիրել էր Հեթումի մի քանի քաղաքներին, յաղթեց նրան և Իսաւրիան գրաւեց ամբողջովին։

Այնուհետև Հեթումը 40,000 հետևակ և 12,000 հեծեալ զօրքով Հուլաղուին օգնութեան գնաց Հալէպի սուլթանի դէմ։ Քաղաքն առնելով, սուլթանին գերեցին և երկիրները բաժանեցին։

Այդ ժամանակ Հուլաղուն Մանգոյ խանի մահուան բօթն առնելով շտապեց Պարսկաստան։ Ծնորհքոտ Եգիպտոսի սուլթանն այս դէպքից օգտուելով թաթարներին յաղթեց և Հեթումից հարկ պահանջեց։ Հեթումն շտապեց թաթարստան օգնութիւն խնդրելու, իսկ զօրքը յանձնեց իր Թորոս և Լևոն որդիներին։

Թորոսը մեռաւ պատերազմում, իսկ Լևոնը գերի ընկաւ։ Եգիպտացի մամլուքները քար քարի վրայ չթողին Կիլիկիայում, մինչև անգամ թագաւորների ոսկորները հանեցին և այրեցին։ Հեթումը վերադարձին միայն սուգ ու աւերած գտաւ. մեծ վիշտ պատճառեց նրան մանաւանդ մի որդու մահը և միւսի գերութիւնը։

Որդուն գերութիւնից ազատեց տալով Հալէպը[1]. ա-

[1]) Կարդալ. Հայ Հեղինակներ «Ի Լևոն որդի Հեթմոյ». եր. 289.

պա ծերացած ու ձանձրացած աշխարհից։ Նա կառավարութիւնը յանձնեց Լևոնին և քաշուեց վանք։ Հեթումը մեռաւ 44 տարի թագաւորելուց յետոյ 1270-ին։

Լ Ե Ւ Ո Ն Գ. (1270—1289)

Հօր մահն այնքան ծանր ազդեց Լևոնի վրայ, որ նա Երեք ամիս հիւանդ պարկեց, կազդուրուելով, թագաւոր օծուեց Տարսոնում և այդ առթիւ ներում շնորհեց քաղաքական յանցաւորներին, իսկ աղքատներին առատ ողորմութիւն տուաւ։

Հայ իշխանները դաւ լարեցին Լևոնի կեանքի դէմ, բայց դաւը բացուեց և Լևոնը նրանց կալուածներն արքունիս գրաւեց։

Ֆնտըխտարը նորից Լևոնի վրայ եկաւ բազմաթիւ զօրքով։ Լևոնը չկարողացաւ դիմադրել, որովհետև իշխանները չմիաբանեցան նրա հետ և նա քաշուեցաւ իր երկրի ամուր տեղերը։ Տարսոնն անձնատուր եղաւ և աւարի ու կոտորածի մատնուեց։ Սիսը քաջութեամբ յետ մղեց թշնամու բանակը։

Թշնամու հեռանալուց յետոյ Լևոնը ջանք թափեց ամոքելու թշուառ ժողովրդի վիճակը։ Շուտով նորանոր դժբաղդութիւններ եկան թագաւորի գլխին. նախ կորցրեց երկու զաւակներին, ինքը ծանր հիւանդացաւ, յետոյ ժանտախտն ու սովը սոսկալի կոտորած պատճառեցին ժողովրդին։

Մամելուքները նորից յարձակուեցին Կիլիկիայի վրայ։ Այս անգամ Լևոնը միաբան իշխանների հետ սոսկալի ջարդ տուաւ եգիպտացոց։ Սուլթանը վիրաւոր հազիւ հասաւ Դամասկոս, ուր մեռաւ։ Լևոնի դաշնակից Աբաղա խանը դեսպանների ձեռքով շնորհաւորեց այս յաղթութիւնը և առաջարկեց Միջագետքը միացնել Կիլիկիային, բայց Լևոնը մերժեց այս առաջարկը, որովհետև մի այդպիսի ընդարձակ և հեռաւոր երկիր կառավարելու ուժ չունէր։

Շուտով Լևոնն ստիպուած էր Ասորիք գնալու իր դաշնակիցներին օգնութեան, որոնք կրկին պատերազմի էին դուրս եկել եգիպտացոց դէմ։ Մինչ Լևոնն ու Ալմաթ թաթար զօրապետը մամելուքներին յաղթելով քշեցին, թաթարաց գլխաւոր հրամանատար Մանգու-Թամուրը դաւադանութեամբ յետ մնաց և դաշնակից զօրքերի քամակը թողեց անպաշտպան։ Լևոնն ստիպուած էր յետ դառնալու մեծ կորուստներով, որովհետև զօրքը պաշար չունէր։

Աբաղա խանը միւս դաւադան զօրավարների թեւումի հարազատ եղբօրը—Մանգու-Թամուրին գլխատել տուաւ։

Իր թագաւորութեան վերջին տարիները Լևոնը նուիրուեց երկրի բարեկեցութեանն ու բարգաւաճմանը. հիմնեց իր նախորդների մնան դպրոցներ, հիւանդանոցներ և հոգ տարաւ ժողովրդի ուսման ու կրթութեանը։ Այն ժամանակ տպարան չլինելով շատ դժուար էր գիրք ձեռք բերելը. Լևոնը բազմաթիւ օրինակներով արտագրել տուաւ հին հայ ձեռագիրները և տարածեց ամեն կողմ ուսումնականների համար։ Առանց այդ խնամքին, շատերը մեր հին մատենագիրներից կարող էին մեզ համար անդարձ կորած լինել։

ՀԵԹՈՒՄ Բ. ԼԵՒՈՆ Դ. ՕՇԻՆ, ԼԵՒՈՆ Ե.

Լևոնին յաջորդեց Հեթում Բ. (1289)։ Մելիք-Աշրաֆը նրա ժամանակ արշաւեց Կիլիկիա և պաշարեց Հռոմկլան, ուր նստում էր հայոց կաթողիկոսը։ Երկար պաշարումից յետոյ Աշրաֆը տիրեց քաղաքին, կողոպտեց քաղաքն ու տաճարները և կաթողիկոսին գերի տարաւ Լուսաւորչայ աջի հետ։ Հեթումը մի քանի քաղաքներ տալով հաշտուեց Սուլթանի հետ և ազատեց թէ կաթողիկոսին և թէ Լուսաւորչի աջը։

Հեթումի քոյրերից մինը յունաց արքայորդու կինն էր, միւսը Կիպրոսի թագաւորի եղբօր։ Կամենալով նոքանց այցելութեան գնալ, նա իշխանութիւնը յանձնեց Սմբատ եղբօրը։ Սա իշխանների և կաթողիկոսի համաձայնութեամբ թագաւոր օծուեց Սիս քաղաքում և երբ

Հեթում ու Թորոս եղբայրները վերադարձան Կիլիկիա, դուրս արաւ նրանց։ Վերջը բռնել տուաւ նրանց և բանտարկեց։ Թորոսը մեռաւ, իսկ Հեթումը բանտի մէջ կուրացաւ։

Հեթումի չորրորդ եղբայր Կոստանդինն այս անօրինութիւնից զայրացած՝ գործի օգնութեամբ բանտարկել տուաւ Սմբատին, ազատեց Հեթումին և կամենում էր ինքն իշխել։ Սակայն շուտով Հեթումի աչքերը առողջացան և ժողովրդի ու տաճարական ասպետների օգնութեամբ կրկին գահ բարձրացաւ։ Քանի որ Ղազան խանը կենդանի էր, Հեթումը նրա դաշնակցութեամբ մի քանի անգամ յաղթութիւններ տարաւ թշնամիների վրայ, Բայց երբ Ղազան-խանին յաջորդեց Ղարբաղանդ և ընդունեց մահմեդականութիւն, այնուհետև հայոց և թաթարաց բարեկամութիւնը վերջացաւ և փոխուեց թշնամութեան։ Այնուհետև թաթարները, թուրքերը և մամելուքները երես առած սկսեցին ամեն կողմից նեղել ու աւերել Կիլիկիան։ Հեթումը մի անգամ աջողութեամբ ջարդեց մամելուքներից մօտ 7000 հոգի և առժամանակ երկրին պարգևեց խաղաղութիւն։

Հեթում Բ-ի ժամանակ շրջակայ մանր քրիստոնեայ տէրութիւնները արդէն կործանուել և նրանց երկիրները անցել էին մահմեդականների ձեռքը։ Եգիպտոսի մամելուքները, որ տիրել էին Աւորիքին ու Պալեստինին, ամբողջ ուժով ընկնում էին Կիլիկիայի վրայ, որ միակ քրիստոնեայ իշխանութիւնն էր մնացել։ Թաթարները, որ հայերի զօրեղ դաշնակիցն էին, ներքին կռիւներից թուլացած էին արդէն և հարկաւոր օգնութիւնը չէին կարող տալ Հեթումին. Հեթումի միակ յոյսն և ապաւէնը այնուհետև մնում էր Հռոմը։ Բայց Հռոմի սիրտը շահելու համար հարկաւոր էր նրան որոշ կրօնական զիջումներ անել։ Այդ ժամանակ Հեթումը երկրորդ անգամ հրաժարուելով, գահն յանձնել էր իր եղբօր որդի Լևոն Դ.-ին։ Սա Հեթումի համաձայնութեամբ Սիս քաղաքում մի ժողով գումարեց, ուր որոշեցին մի քանի կաթոլիկ ծէսեր

ընդունել հայ եկեղեցու մէջ։

Այդ կատարուել էր Թագաւորի ստիպմամբ։ Երբ հայ եկեղեցականները իրանց տեղերը ցըրուեցին, հակառակուեցին այդ որոշումներին և արգելք եղան նրանց ընդունելու։ Սիս քաղաքի ժողովուրդն էլ դժգոհ այդ նորմուծումներից գանգատուեց թաթար զօրավար Բիլարդուին, որը Լևոն Դ.-ին և Հեթումին հրաւիրելով իր մօտ, սպանել տուաւ Անարզաբա քաղաքում։

Կիլիկեցի ազնուական

Օ Շ Ի Ն (1308 - 1320)

Լևոն Դ.-ին յաջորդեց իր եղբայրն—Օշինն, որ Բիլարդուին դուրս քշեց Կիլիկիայից (1308)։ բազմաթիւ բերդեր և եկեղեցիներ շինել տուաւ Օշին, որոնց մէջ նշանաւոր տեղ է բռնում Տարսոնի պարիսպը։

Սրա ժամանակ արևելեան Հայաստանում սարսափելի երկրաշարժ տեղի ունեցաւ, մանաւորապէս վնասուեցին Այրարատ գաւառը և Անին։ Ուստի Անի քաղաքից բազմաթիւ գաղթականներ հեռանալով գնացին Սրիմ, Լեհաստան, Պարսկաստան և Թաթարստան։

Օշինին յաջորդեց Լևոն Ե. Պայլ Օշինի խնամակալութեամբ։ Սրա ժամանակ մամելուքները, թաթարներն

ու թուրքմէնները միացած մինը միւսի յետևից յարձակեցին Կիլիկիայի վրայ և երկիրը տակն ու վրայ արին աւարի ու սրի մատնելով։

Կիլիկիան, որ ներքին կռիւների և հայ ու լատին կուսակցութիւնների ձեռին ուժասպառ էր եղել, անկարող էր մենակ այս անհամար թշնամիների դէմ դուրս գալ։ Հայ երիտասարդները միայն, մի կողմ թողնելով կրօնական վէճերը, միացան և մի քանի խումբ կազմելով դարանամուտ եղան երկրի ամուր տեղերը և մի քանի անգամ թշնամուն սոսկալի վնաս հասցրին։ Եգիպտոսի սուլթան Մէլիք-Նազարն ստիպուած էր հաշտուել և 15 տարուայ զինադադար տալ։

Հազիւ թշնամին հեռացել էր երկրից, որ կրկին ծագեցան ներքին խռովոյթներ։ Լևոնը հայ իշխաններին հեռացրեց պաշտօնից և նրանց կալուածները խլելով տուաւ իր լատին ազգականներին։ Հայերի կողմն էր տէրութեան խնամակալ Օշին Պայլը։

Թագաւորը նրան զրկեց խնամակալութիւնից և սպանել տուաւ իր աղջկայ հետ, որ թագուհի էր։ Դրանից յետոյ Լևոնը կրկին ամուսնացաւ։ Այս վարմունքի պատճառով Լևոնն իր դէմ գրգռեց ժողովրդին և անպաշտպան երկիրը կրկին աւարի մատնուեց եգիպտացոց կողմից։ Լևոն դիմեց Եւրոպայի օգնութեանը։ Ֆրանսիայի թագաւոր Փիլիպպոս Զ. խոստացաւ նորից խաչակրաց արշաւանք կազմել, բայց իր խոստումը չկարողացաւ ի կատար ածել։ Այս բանից կատաղած Մէլիք-Նազար-Մահմուտ, Եգիպտոսի սուլթանը, որոշեց բնաջինջ անել Կիլիկիան։ Լևոնը փախաւ լեռները, և ստիպուած էր խաչի ու աւետարանի վրայ երդուել, որ այլևս եւրոպացիների օգնութեանը չի դիմի և նրանց հետ յարաբերութիւն չի ունենայ։

Լևոնը մեռաւ 1341-ին, անզաւակ։ Նրանով վերջացաւ Ռուբինեան ցեղը Կիլիկիայում։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

Լևոնի մահից յետոյ Կիլիկիայի գահը բարձրացաւ Կոստանդին Գ. Լուսինեանը։ Սա ծագում էր Կիպրոսի իշխաններից, որ խնամիացած ու ազգական էին Հեթում Թագաւորի հետ։ Կոստանդինը մոռանալով Լևոնի երդումը դարձեալ սկսաւ յարաբերութիւն ունենալ Հռոմի հետ։ Կաթոլիկ Ունիթորները նրա ժամանակ սկսան զօրանալ ու նախատել Լուսաւորչականներին։ Հայերը ապստամբեցին և Կոստանդինի եղբայր Գուիդոնը բարձրացաւ գահ։ Սա էլ հետևեց իր եղբօր ընթացքին։ Առաջ էր քաշում լատինանել ին և հալածում հայ իշխաններին։ Եգիպտացիք կրկին արշաւեցին Կիլիկիա, աւերեցին և մի տարի յետոյ կրկին նորոգեցին արշաւանքը։

Կիլիկիեցի կին

Այս անգամ Պապն օգնեց Գուիդոնին, ուղարկելով 1000 ձիաւոր և 1000 դահեկան փող։

Երբ Գուիդոնը չլսելով հայ իշխաններին, նրանց կալուածները խլելով տուաւ լատիններին, հայերը միացան և ապստեղին նրան 1345-ին։

Գուիդոնին յաջորդեց Կոստանդին Դ.։ Սա աշխատեց կրօնական բաժանումների և կռիւների առաջն առ-

նել և նուիրուել երկրի ապահովութեանը։ Եգիպտոսի սուլթանը նորէն արշաւեց Կիլիկիա, բայց Կոստանդինը մի երկու դաշնակիցների հետ աջողութեամբ յետ մղեց մամելուքներին։ Երբ Կոստանդինը դեսպան ուղարկեց Եւրոպայից օգնութիւն խնդրելու, Պապը հաղորդեց, որ հայերն օգնութիւն կստանան այն ժամանակ, երբ կաթոլիկութիւնը կընդունեն։ Մենակ մնացած թագաւորը չյուսահատուեց, այլ մամելուքների ձեռից խլեց Ալէքսանդրէտա նաւահանգիստը։ խաղաղութիւնը վերականգնեց։ որ տևեց մինչև նրա մահը (1362)։

Լ Ե Ւ Ո Ն Զ.

Կոստանդին մեռաւ անժառանգ, այդ պատճառով հազիւ երկու տարուց յետոյ թագաւոր նստաւ Լևոն Զ. Լուսինեան իշխանը։ Եգիպտացիք կրկին արշաւեցին Կիլիկիա. Լևոն չնայելով իր քաջութեանը, յաղթուեց թշնամուց, որ թուով անհամեմատ շատ էր։ 1371-ին եգիպտացիք նորոգեցին արշաւանքը. Լևոնը վերաւորուած ծածուկ փախաւ լեռները։

Թագուհին կարծելով որ Լևոնը մեռել է, այս մասին լսաց տուաւ իր հրոպացի ազգականներին, որոնք կամենում էին նրան ամուսնացնել մի գերմանացի իշխանի հետ։ Բայց Լևոնը յանկարծ երևաց և այս մտադրութիւնը ձախ անկատար։

Եգիպտոսի սուլթանը մի երրորդ ու վերջին հարուածով կամեցաւ ոչնչացնել Կիլիկիայի հայ իշխանութիւնը և նրա երկիրներին տիրանալ։ Յարձակումն սկսուեց 1373-ին. Լևոնի խնդիրքը, օգնութեան գալու, եւրոպացի իշխաններից թողին անկատար։

Մամելուքները հետզհետէ տիրեցին դաշտային և ապա լեռնային Կիլիկիայի քաղաքներին ու աւաններին, սրի ու կրակի մատնելով ամեն ինչ։ Նրանք որոշել էին բնաջինջ անել հայերին, ուստի մեծերին կոտորում էին անասելի անգթութեամբ, և կամ բռնի մահմեդական դարձնում, իսկ

մանուկներին կամ գերում էին կամ վաճառում։ Լևոնն ամրացել էր Կապան բերդում. ինն ամիս դիմադրելուց յետոյ սովն ստիպեց նրան անձնատուր լինելու։ Թշնամին, իր խոստման հակառակ, Լևոնին շղթայեց և թագաւորի հարստութիւնը կողոպտեց։ Նրան իր կնոջ և դստեր հետ բանտարկեց Կայիրէում։

Մէլիք-Աշրաֆ Սուլթանը խոստացաւ Լևոնին ընտանիքի հետ բանտից ազատել, եթէ նրանք հաւատան ուրանան, բայց նրանք յանձն չառան։

Լևոնը իր ընտանիքի հետ բանտից ազատուեց Իսպանիայի Յովհաննէս և Արագոնի Պետրոս թագաւորների միջնորդութեամբ 1382-ին։

Լևոնն այնուհետև անցաւ Հռոմ, Պապին այցելելու և յորդորելու, որ մի նոր խաչակրաց արշաւանք կազմեն Երուսաղէմը մահմեդականներից ազատելու համար։ Ապա գնաց Իսպանիա, շնորհակալութիւն յայտնելու իր ազատչին։ Յովհաննէս թագաւորը նրան մինչև մահ թոշակ նշանակեց և նրան յանձնեց երեք քաղաքների իշխանութիւնը. երեք տարուց յետոյ Լևոնը եկաւ Ֆրանսիա, ուր մեծ պատուով ընդունեց։ Նա աշխատեց հաշտեցնել Ֆրանսիան Անգլիայի հետ, որոնք այդ ժամանակ շարունակ պատերազմում էին, որպէս զի յետոյ նրանց օգնութեամբ իր գահը յետ խլէ մամելուքներից։ Կարճ ժամանակից յետոյ այդ երկու ազգերը դարձեալ շարունակեցին իրանց պատերազմը և Լևոնը յուսահատուելով քաշուեց վանք, ուր և մեռաւ 1393-ին Փարիզում։ Մինչև այսօր պահուած է այդ անբաժդ թագաւորի շիրիմը Սէն-Դընի թագաւորական գերեզմանատանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԱՆԿՈՒՄԻՑ ՑԵՏՈՅ

Բագրատունեաց կործանումից յետոյ, ինչպէս տեսանք, յոյները թէպէտ տիրեցին Հայաստանին, բայց պահպանել չկարողացան և շուտով Հայաստանի տէր դարձան

Տուղրիլ և Ալփասլան։ Հայ ժողովուրդը մի քիչ հանգիստ առաւ միայն Ալփասլանի որդի Մելիք շահի ժամանակ, որ խաղաղ և բարի մարդ էր։ Այնուհետև Հայաստանը պատառ-պատառ է լինում բազմաթիւ հայ և օտարազգի իշխանների մէջ, որոնք շարունակ պատերազմ ունենալով միմեանց հետ, ժողովրդին դադար չէին տալիս։

Թշնամիների յարձակումներին անընդհատ ենթակայ էր մանաւանդ Անին, որ նշանաւոր էր իր հարստութեամբ և բնակիչների բազմութեամբ։

Մահմետական իշխաններից ազատուելու համար անեցիք դիմեցին վրաց Դաւիթ թագաւորին, որ եկաւ, հայոց օգնութեամբ պարսիկներին հալածեց և հիւսիսային Հայաստանի հետ Անի քաղաքին էլ տիրեց (1124)։

Վրաց իշխանութիւնը Հայաստանում ընդարձակուեց և զօրացաւ Թամար թագուհու ժամանակ, որ հայկական նահանգները կառավարում էր երկու եղբայր, Զաքարէ Սպասալար և Իւանէ Աթաբէգի ձեռքով, Սրանք ազգով հայ էին և նրանց մեծագործութեան հետքերը, նշանաւոր վանքեր ու եկեղեցիներ, մինչև այսօր էլ դեռ կանգուն են։ Այդ շէնքերից նշանաւոր են մանաւանդ Հաղբատ և Սանահին վանքերը Լոռում։

ԹԱԹԱՐԱՑ ԱՐՇԱԻԱՆԳ

Թաթարաց պետութեան հիմքը դրեց Չինգիզ-խանը։ Սա միացրեց Սիբիրի և Չինաստանի սահմաններում ապրող ռազմասէր և աւազակաբարոյ թաթարներին, տիրեց Չինաստանին, Միջին Ասիային, Հնդկաստանին և հաստատեց մի լայնածաւալ պետութիւն։ Նորազմի թագաւորի որդին, Միջին Ասիայից, Զալալէդդէն, թաթարներից յաղթուելով, իր զօրքի հետ փախաւ Հայաստան և սկսաւ տակն ու վրայ անել երկիրը։ Գառնի աւանի մօտ նրա դէմ դուրս եկաւ Իւանէ Աթաբէկը, հայ և վրացի զօրքերով, բայց յաղթուեց։ Զալալէդդինն այնուհետև անցաւ հարաւային Հայաստան և ապա Փոքր Հայք, ուր հասաւ մինչև

Կիլիկիայի և Իկոնիոյ սահմանները։ Այստեղ նրա դէմ դուրս եկաւ մեր Հեթում թագաւորը հարևան իշխանների դաշնակցութեամբ և չարդելով փախցրեց Քրդստան, ուր մեռաւ Զալալէդինը։

1236-ին էր, որ թաթարները մեծ բազմութեամբ արշաւեցին Հայաստան։ Նրանց առաջնորդում էր Չարմաղան խանը—արիւնարբու գազան։ Հիւսիսային Հայաստանին տիրելուց յետոյ Չարմաղանը մարդ ուղարկեց և պահանջեց, որ Անին անձնատուր լինի։ Այդ ժամանակ Անի էին հաւաքուած նաև շրջակայքի բնակիչները։ Անեցիք սպանեցին Չարմաղանի դեսպաններին, բայց չարաչար տուժեցին, որովհետև Անիին տիրելուց յետոյ նրա հարստութիւնը կողոպտուեց, բնակիչների մեծ մասը սրի մատնուեց, իսկ մանուկները գերի տարուեցին։ Նոյն վիճակին ենթարկուեց նաև Կարսը, թէպէտ անձնատուր էր եղել կաժովին (1239)։

Թաթարներն առհասարակ խոր չէին դնում ո՛չ հաւակի, ո՛չ դիրքի և ո՛չ էլ աստիճանի մէջ, այլ գերում ու կոտորում էին բոլորին բացի ջահել աղջիկներից, որոնց յափշտակում էին։

Բերդերը կամ քաղաքներն առնելուց յետոյ թաթարները կոտորում էին բնակիչներին, կողոպտում հարստութիւններն ու եկեղեցիները և կենդանի մնացածներին ծառայը հարկերի տակ դնում։

Չարմաղանից յետոյ Հայաստանի մնացեալ մասին նոյն անգթութեամբ ու կոտորածներով տիրեց Բաչու զօրավարը։ 1254-ին արդէն ամբողջ Հայաստանը գտնւում էր թաթարների ձեռին և Հուլաղուն եկաւ երկիրը աշխարհագիր անելու։

Այնուհետև կոտորածները թէպէտ դադար առան, բայց հարկերն այն աստիճան ծանր էին, որ շատերից հարկի տեղ որդոցն էին վերցնում իբրև ստրկանք, իսկ հարկերից փախչողներին բռնում և սպանում էին։

Թաթարաց իշխանութիւնը Հայաստանում տևեց մօտ

հարիւր տարի և բացի աւերածից ու կործանումից ոչ մի օգուտ չտուաւ երկրին։

Անին, Բագրատունեաց գեղեցիկ, հարուստ և պայծառաշէն քաղաքն աւերակ դարձաւ. բնակիչները ցան ու ցիր եղան դիմելով Յրիմ, Լեհաստան ու Մոլդաւիա։

Երբ Թաթարաց իշխանութիւնը թուլացաւ, Հայաստանն էլ բաժին դարձաւ զանազան աշխարհակալների։ Հարաւին տիրեցին քրդերը, արևմուտքն ընկաւ օսմանցիների ձեռքը, իսկ արևելեան Հայաստանը հպատակուեց Պարսկաստանին, մինչև որ այս ամենին կատրեր Լէնկթէմուրը։

ԼԷՆԿԹԷՄՈՒՐ

Լէնկթէմուրը նախ նուաճեց Հնդկաստանը և սպանած մարդկանց գլուխներից բլուրներ կազմել տուաւ, որ այսպիսով սարսափ ազդէ ժողովուրդներին ու ազգերին։ Պարսկաստանն ու Միջագետքը արեան հեղեղ դարձնելուց յետոյ այս հրէշը մտաւ Հայաստան (1387)։ Շատերը նրա գալուց առաջ արդէն թողել փախել էին։ Հայաստանի մահմետական իշխանները քոլորն էլ հպատակեցան Լէնկթէմուրին, ոմանք կամովին, ուրիշները զէնքի զօրով։ Լէնկթէմուրի զօրքերը չէին խնայում ոչխարի, ոչ ծերի և ոչ մանուկի։ Վան քաղաքին տիրելուց յետոյ, երիտասարդներին գերի տարաւ, իսկ ծնացեալ բազմութիւնը պարիսպներից ցած գլորել տուաւ։ Բազմութիւնն այնքան շատ էր, որ նրանց դիակները մինչև պարիսպները հասան։ Լէնկթէմուրի զօրքերի ձեռքը չընկնելու համար մի հայ կին սպանեց իր եօթամեայ որդուն և ապա ինքն էլ ժայռից ներքև ընկնելով մեռաւ։

Լէնկթէմուրի արշաւանքին յաջորդեց մի սոսկալի և չտեսնուած սով, որովհետև երկիրը ծնացել էր անմշակ։ Ականատես պատմիչների ասելով, երբ բոլոր կենդանիները յետոյ շներն ու կատուներն էլ մորթուեցին, այնու-

հետև մայրը որդուն, եղբայրը քրոջը և մարդը կնոջը խորովելով կերան (1393)։

Սեբաստիա քաղաքին տիրելուց յետոյ, այս գազանը կողոպտել տուաւ քաղաքը, իշխաններին կոտորեց, կանանց ձիաների պոչին կապելով բաց թողեց դաշտը, փոքրիկ մանուկներին ձիերի ոտների տակ կոխոտել տալով ջարդեց և չորս հազար հայ զինուոր ողջ-ողջ թաղել տուաւ։ Լէնկթէմուրի մահից յետոյ (1405) նրա տէրութիւնը կործանուեց։ Հայաստանի հարաւին տիրեց Ղարա-Իւսուֆ քուրդ իշխանը, նրան յաջորդեց իր որդին Իսկէնդէրը, որ Լէնկթէմուրի որդու դէմ երկար ժամանակ պատերազմեց Հայաստանի տիրապետութեան համար և կոչուեց Շահի-Արմէն։ Այս պատերազմների պատճառով Հայաստանի քաղաքները կործանուեցին, իսկ երկիրն անմշակ ձնալով կրկին մի սարսափելի սով ընկաւ և թշնամու պակաս թողածը լրացրեց։

ՕՍՄԱՆՅԻՔ ԵՒ ՊԱՐՍԻԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Օսմանցիք մոնգոլ ծագում ունին. նրանք Հայաստան եկան Թաթարաց արշաւանքների ժամանակ և բնակութիւն հաստատեցին Փոքր-Ասիայում։ Երբ Սելջուկեանների տէրութիւնը կործանուեց, Օսմանն իրան յայտարարեց թագաւոր և իր աթոռանիստ մայրաքաղաք դարձրեց Ենիշէհիրը (1300 թ.)։ Սրա անունով ահա այդ փոքրիկ իշխանութիւնը կոչուեց Օսմանեան պետութիւն։ Օսմանի յաջորդները հետզհետէ սկսեցին ընդարձակել իրենց երկրի սահմանները, մինչև որ Մահամմէդ Բ. 1453-ին տիրեց Կոստանդնուպոլսին և դարձրեց Օսմանեանների մայրաքաղաք։ Բիւզանդական կայսրութիւնն ընկաւ և նրա տեղ բռնեց Օսմանեանը։

Օսմանցոց արևմտեան սահմաններն ընկնում էին Հայաստանում։ Այդ սահմանները ընդարձակելու համար նրանք երկար ու դարաւոր կռիւներ մղեցին պարսիկնե-

րի հետ, որը վերջապէս ուժասպառ արաւ և կործանեց հայ ժողովրդին։

Առաջին անգամ օսմանցոց վրայ յարձակուեց Ուզուն-Հասանը, որ չարաչար յաղթուեց Դերջանի մօտերը։

Ուզուն-Հասանի արշաւանքները շարունակել կամեցաւ Շահ-Իսմայիլը (1500 թ.)։ Նրա դէմ դուրս եկաւ Սուլթան-Սէլիմը և Յոյն մօտ յաղթելով Իսմայիլին հասաւ և տիրեց Թաւրիզին։ Այսպիսով Հայաստանի հարաւ-արևմտեան մասն ամբողջովին ընկաւ Օսմանցոց ձեռը (1514)։

Սրանից անմիջապէս յետոյ կրկին ու կրկին նորոգուեց արշաւանքը մէկ պարսից կողմից, մէկել օսմանցոց։ Նրանցից ամեն մինը սուր, կրակ և աւերած էր թողնում իր յետևից։

Սուլթան Սուլէյմանն այս անգամ մտաւ հիւսիսային Հայաստան, աւերեց Նախիջևանն ու Երևանը, մտաւ Ղարաբաղ և ամեն ինչ հողի հաւասարեցրեց։ Դրա վրէժն առնելու համար Թահմաս շահը աւերեց ու ասպատակեց հարաւային Հայաստանը։

Երբ Թահմաս մեռաւ, Սուլթան Մուրադը կրկին յարձակուեց պարսից վրայ և նորէն Հայաստանն ասպարէզ դարձաւ աւերմունքի ու սրածուլթեան։ Այս պատերազմները տևեցին մի քանի տարի։ Պատերազմի մէջ մեռաւ Համզա, պարսից արքայորդին. նրան յաջորդեց Շահ-Աբաս, որ հաշտութիւն խնդրեց օսմանցիներին թողնելով ամբողջ Հայաստանը, Վրաստանը, Ատրպատականը և Բաղդատը (1585 թ.)։

ՇԱՀ-ԱԲԱՍԻ ԱՐՇԱԻԱՆՔՆԵՐԸ

Օսմանցիք Հայաստանին տիրելուց յետոյ սկսեցին սաստիկ հարստահարել ժողովրդին, ուստի առաջ եկաւ գաղթ։ Հայ իշխաններից շատերը Մելիքսեդէկ կաթուղիկոսի հետ անցան պարսից սահմանը։ Շահ-Աբաս նրանց բոլորին սիրով ընդունեց, որոնցից մանրամասն տեղեկութիւններ առաւ Օսմանցոց մասին։ Օսմանցիներից դժգոհ էին և

քիւրդ բէկերը, որոնք նոյնպէս Շահ-Աբաս կոսիդին անցան, երբ նա 1603-ին արշաւեց դէպի Հայաստան։ Տիրեց նախ Ատրպատականին, ապա առաւ Նախիջևանը, Երևանը և հասաւ մինչև Կարս։ Այդտեղ Շահն իմացաւ, որ Սինան փաշան իր դէմն է գալիս մեծ զօրքով։

Որովհետև յոյս չունէր թէ օսմանցիներին պատերազմով կարող է յաղթել, Շահ-Աբասը դիմեց մի սաստիկ և տմարդի միջոցի. որոշեց ամբողջ արևելեան Հայաստանը դարձնել անմարդաբնակ, որպէս զի թշնամին պաշար և օգնութիւն չգտնի, միւս կողմից նա ցանկանում էր գերի տարած հայերին բնակեցնել Պարսկաստան, որոնց միջոցով նա ուզում էր ծաղկեցնել իր երկրի առևտուրն ու արուեստները։

Ամիրգունա խանը պիտի գլուխ բերէր Շահի այս հրամանը. նրա հրամանով ժողովուրդն սկսեց տուն ու տեղ թողած հաւաքուել Արարատեան դաշտը։ Ով հակառակուում էր, կոտորում էին. լեռներն ու այրերն ապաստանածներն անգամ բռնի տարուում էին կամ սպանուում։ Բնակութիւնները, գիւղ, քաղաք, աւան, իրենց պահեստներով կրակի էին մատնուում։

Այսպէս հաւաքուած ժողովուրդը կազմեց մի ահագին քանակ, որին առաջ քշելով գալիս էր պարսից բանակը դէպի Ատրպատական, իսկ պարսից բանակին հետևում էր օսմանականը։

Ժողովուրդը հասաւ Արաքսի ափը, բայց այդ ահագին բազմութեանն անցնելու հնար չկար։ Փայտից տօփեր ու նաւակները բերին, որոնք խիստ սակաւ էին։ Շահը վախենում էր, որ օսմանցիք կարող են վրայ հասնել և գերիներին խլել, ուստի հրամայեց բոլորին գետը թափել, որ լողալով անցնեն։ Գետը սրնթաց էր ու խորը և ահա չորս կողմը բռնեց մի սարսափելի սուգ ու վայնասուն. ծերը, պառաւ, կին, երեխայ թափուեցին գետը. հայրն իր աչքով էր տեսնում որդու խեղդուիլը, կինը մարդուն, մարդը կնոջը, հարազատը հարազատին անկարող էր օգնել, որովհետև մի կողմից պարսից սուրն էր սպառնում,

միեն կողմից Արաքսի կատաղի ջուրը։ Գետը ծածկուեց դիակներով, փոքր երեխաների և մանուկների մեծ մասը խեղդուեց։

Ժողովրդի փոքր մասը միայն ազատուեց, այն էլ դժուար ճանապարհներով քշեցին Պարսկաստան։ Քաղաքացոց տեղաւորեցին Սպահան քաղաքում, իսկ գիւղացոց շրջակայ գիւղերում։ Այդ գերիների մէջ էին և Զուղայեցիք, հարուստ ու վաճառաշահ ազանից, որոնք առևտուր ունէին հեռաւոր Եւրոպայի և Հոլլանդիայի հետ։ Շահ-Աբասը նրանց տեղաւորեց Սպահանի մօտ, անուանելով Նոր-Զուղայ, որի բնակիչները շուտով ձեռք առան Հնդկաստանի և Պարսկաստանի առևտուրը Եւրոպայի հետ և հասան մեծ հարստութեան ու պայծառութեան։

Հայերի կրած անասելի զրկանքներն ու վշասները Շահ-Աբասն աշխատում էր ամոքել քաղցր վարմունքով և զանազան արտօնութիւններով։ Կրօնի լիակատար ազատութիւն տուաւ և շատ անգամ ինքը ներկայ էր լինում հայ եկեղեցու հանդէսներին։ Հայ և պարսիկի մէջ դատ պատահած դէպքում աշխատում էր միշտ հայերի կողմը բռնել, ասելով, որ հայերի կեանքը շատ թանդ է նստել Շահի վրայ, մինչև րերել հասցրել է Պարսկաստան, կամենալով հայերին ընդմիշտ կապել Պարսկաստանի հետ, Շահ-Աբասը մտածեց Էջմիածինը քանդել և մի նոր Էջմիածին շինել Նոր-Զուղայում, սակայն հայերի խնդիրքով յետ կանգնեց այս մտադրութիւնից։

Օսմանեան Հայաստանն այդ ժամանակ շարունակ խռովութեան մէջ էր, որովհետև երկրի կուսակալներն ապստամբելով սուլթանների դէմ, ասպատակում էին երկիրը, որի հետևանքը մի մեծ սով եղաւ։

Հայերից շատերը թողին ու գաղթեցին օտար երկիրներ։

Այդ խռովութիւններից օգտուելով Շահ-Աբասը կըրկին ու կրկին արշաւեց Հայաստան, որովհետև բաղդի փոփոխակի աջողութեամբ սա մէկ պարսից ձեռն էր ընկնում, մէկ օսմանցոց։ Վերջապէս (1639 թ.) մի հաշտութեամբ Կուրի և Արաքսի մէջ գտնուած երկիրները Պարսից պարսից ձեռքը։ Այս հաշտութիւնը երկարատև և բարերար եղաւ Հայաստանի համար, որովհետև տևեց ութսուն տարի։

ԷՋՄԻԱԾԻՆԸ ՎԵՐՍՏԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՆՈՑ

Կիլիկիայում հայոց թագաւորութիւնը թէպէտ վերջացել էր, բայց կաթողիկոսները դեռ շարունակում էին ծնալ Սիս քաղաքում, ուր նրանք ենթակայ էին սարսափելի հալածանքների։ Հայաստանից հեռու լինելով, հայրապետական ընտրութիւն չէր կատարւում և եկեղեցու մէջ էլ մտել էին կաթոլիկ ոգով զանազան ծէսեր։

Այս ամենին վերջ տալու համար 1441-ին Էջմիածնում մի ժողով գումարուեց, ուր կաթողիկոս ընտրեցին Կիրակոս Վիրապեցուն։ Սակ կաթողիկոսը չէր մանակցել այս ժողովին, ուստի հայերն այնուհետև ունեցան երեք կաթողիկոս, որ նստում են Էջմիածին, Սիս և Աղթամար։ Ընդհանուր հայոց կաթողիկոս ճանաչուած է Էջմիածին նստող հայրապետը, որին ընտրում է ամբողջ ազգը, իսկ միւսները մասնաւոր տեղական կաթողիկոսներ են և ճանաչում են Էջմիածնի գերիշխանութիւնը։

Էջմիածնում հայրապետի վերատին հաստատուելը հայ եկեղեցուն չփրկեց հալածանքներից։ Անվերջ պատերազմներն ու աւերածութիւնը Էջմիածնին բցել էին ծանր պարտքերի տակ. կաթողիկոսները շատ անգամ շղթայակիր թափառում էին հեռաւոր հայերի գաղթավայրերում փող հաւաքելու, որ պարտքերը վճարել կարողանան։ Շատ անգամ էլ մի քանի կաթողիկոս էին նստում միաժամանակ, որ պարտքն իրանց մէջ բաժանելով թեթևացնեն։ Այս վիճակը շարունակուեց մինչև Մովսէս Գ. կաթուղիկոսը, որ մեծ չանքերով Էջմիածինն ազատուեց պարտքերից և հարկատուութիւնից։ Սրան յաջորդեց Փիլիպպոս Աղբակեցի (1633—1655) շինարար հայրապետը,

Սա նորոգեց Էջմիածինը և շինել տուաւ գեղեցիկ



Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

զանգակատուն, որ հիմա էլ կանգուն է և հիմնեց Էջմիածնում ուսումնարան, որտեղից դուրս պիտի գային ուսեալ հեղևորականներ: Այնուհետև գնալով Երուսաղէմ, մի ժողով կազմեց, ուր կարգաւորեց Սսի և Էջմիածնի յարաբերությունները: Վերադարձին նա Կ.-Պոլսում նոր պատրիարք ընտրել տալով հանգստացրեց ժողովրդին, որ խռովութեան մէջ էր պատրիարքների ընտրութեան առթիւ:

Փիլիպպոս կաթողիկոսի շնորհիւ Էջմիածինը վերստին պայծառացաւ ու վերականգնեց իր նախնի հեղինակութիւնն ու կապը ցրուեալ հայերի վրայ:

ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵԼԻՔՆԵՐԸ ԵՒ ԴԱՒԻԹ ԲԷԳ

Սիւնեաց լեռնոտ երկիրը պարսից խաների իշխանութեան տակ դեռ պահպանել էր մի փոքր ինքնուրոյնութիւն: Հայ տանուտէրերը կային, որոնք կոչւում էին Մելիքներ. դրանք աւանդական իշխաններ էին, որոնց իշխանութիւնն անցնում էր հօրից որդի. նրանք կառավա-

րում էին իրանց ժողովուրդն աւանդական սովորոյթով. հարկը հաւաքում և տալիս էին պարսիկ խաներին. ունէին իրանց բերդերն ու ամրոցները և հարկ եղած դէպքում կարող էին հանել փոքրաթիւ զօրք: Ազատութեան ոգին այս լեռնականների մէջ դեռ իսպառ չէր մարած և 17-րդ դարու վերջերին նրանք միաբան ուղարկեցին իրանց հայրենակից Օրիին եւրոպական արքունիքները, խնդրելով, որ իրանց օգնութեան գան և միասին պատերազմելով ազատեն մահմեդական լծից:

Տասն և ութերորդ դարու սկզբին օգտուելով Պարսկաստանում տիրող խռովոյթից, կովկասեան լեռնականները յարձակուեցին հիւսիսային Հայաստանի վրայ և աւարի տալով հասան մինչև Սևան: Հայերը ուտիացի իշխան Յովհաննէսի առաջնորդութեամբ լեռնականներին դուրս քշեցին Հայաստանից:

Այս արշաւանքից յետոյ երկիրը տակն ու վրայ եղաւ. հայ մելիքները կամենալով իրանց երկիրն ապահովել աւերածից, վրաստանից հրաւիրեցին Դաւիթ Բէգին: Դա ծնունդով զարաբաղցի էր, մեծ անուն էր հանել վրաստանում և հասել զօրապետի աստիճանի: Դաւիթ բէգն անցաւ շարժման գլուխը և 1721-ին 400 հոգով մի քանի յաղթութիւններ տարաւ թուրք հովիւ գիւղերի վրայ:

Շուտով Դաւթին միացան Տէր-Աւետիք քաջ քահանան, Մխիթար սպարապետը, Զաքնդուրի Թորոս իշխանը. Գիհնուազի Մահիփանոս Շահումեան իշխանը և Դաւիթ բէգի զօրքերի թիւն հասաւ 7000 հոգու: Դաւիթը երկիրը մաքրելով թշնամիներից մի ամուր բերդ շինեց Հալիձորում և ամրացաւ այնտեղ:

Դաւթի մարդկանց պատերազմներից անաջող անցան միայն Թորոս իշխանի կռիւը Փաթալի խանի հետ, որովհետև Թորոսին դաւաճանեց Երիցվանից Մելիք-Փրանգիւլը: Սակայն հայերը դրա վրէժն առան Մեղրիի մօտ, ուր կոտորեցին մօտ 10,000 թուրք:

Ծանր էին Դաւթի կռիւները օսմանցոց հետ, երբ Հայլի-Մուստաֆա զօրավարը մեծ զօրքով Սիւնիք եկաւ, հայերից շատերը դաւաճանութեամբ անցան թշնամու կողմը՝ Դաւիթը 450 զօրքով պաշարուեց Հալիձորում: Սակայն

Մխիթար և Տէր-Աւետիք զօրավարները գիշերով դուրս եկան բերդից և սաստիկ կոտորածով փախցրին Թշնամուն գերի առնելով 148 դրօշակ։ Մուստաֆան նոր զօրքով կըրկին պաշարեց Հալիձորը։ Դաւիթն այս անգամ մի երամակ էգ ձի բաց թողեց Թշնամու բանակը. բանակի ձիաները կատաղած սկսեցին այս ու այն կողմը վազել. Դաւիթն էլ այդ ժամանակ յարձակուելով Թշնամու վրայ մեծ կոտորածով հալածեց երկրից։

Պարսից Թահմազ շահը լսելով Դաւթի քաջ գործերը, ընծաներով իշխանաց իշխանի տիտղոսը տուաւ նրան և հաստատեց որպէս Սիւնեաց տէր։ Սակայն կարճատև եղաւ այդ իշխանութիւնը, որովհետև Դաւիթ բէգը մեռաւ 1728 թ. վեց տարի իշխելուց յետոյ։ Զօրքի և իշխանների ցանկութեամբ Դաւթին յաջորդեց Մխիթարը։ Օսմանցիք կրկին յարձակուեցին Հալիձորի վրայ։ Պաշարածները դաւաճանօրէն անձնատուր եղան և կոտորուեցին։

Մխիթարը փախչելով բերդից նորից մի քանի աւանների տիրեց, բայց հայերը խնձորեսք բերդում դաւով գլխատեցին իրանց զօրավարին։ Երբ գլուխը Թաւրիզի փաշային տարան, թուրք փաշան ցաւելով քաջի մահուան վրայ, գլխատել տուաւ դաւաճաններին։

Այսպիսով ամբողջ Հայաստանը նորից ընկաւ օսմանցոց ձեռքը։

Երբ Թահմազ Շահը զօրացաւ և հալածեց Թշնամիներին, կրկին պատերազմ հրատարակեց Թուրքաց, բայց կրկին ամօթալի պարտութեամբ ետ դարձաւ։ Նադր Ալին, Թահմազի քաջ զօրավարներից մինը, այս առթիւ հեռացրեց գահից իր թագաւորին և նորից պատերազմ հրատարակելով, սաստիկ ջարդ տուէց օսմանցիներին։ Ղարաբաղի մելիքներն էլ օգտուելով այդ հանգամանքից, դիշերով ոչնչացրին իրանց երկրի օսմանցիներին։

Յաջորդ տարին գլխաւոր ճակատամարտը տեղի ունեցաւ Արփաչայի (Ախուրեան) ափերին, ուր Նադր-Ալին գրեթէ ոչնչացրեց օսմանեան բանակը 1736-ին։ Այս յաղ-

թութիւնից յետոյ Նադր-Ալին իրան հրատարակեց պարսից շահ։ Դա տեղի ունեցաւ Մուղանի անապատում, Արաքսի ափին։

Այդ հանդիսին հրաւիրուած էին նաև Աբրահամ Կրետացի կաթողիկոսն ու հայ մելիքները։ Շահը մելիքներին հաստատեց իրանց ժառանգական իշխանութեան մէջ և իրաւունք տուաւ իրանց երկիրները կառավարել անկախօրէն, վճարելով մի որոշեալ տուրք պարսից շահին։ Աբրահամ կաթողիկոսը նորահաստատ թագաւորի սուրն օրհնելով կապեց նրա մէջքին։ Նա այնքան գրաւեց շահի սիրտը, որ էջմիածինն ազատել տուաւ հարկերից և ետ ստացաւ իր կալուածները։

Նադր-շահը դարձեալ մի երկու պատերազմ ունեցաւ օսմանցիների հետ, մինչև որ շահի մի փառաւոր յաղթութիւնից յետոյ, 1746-ին երկու տէրութիւնները հաշտուեցին. Արևելեան Հայաստանը Երևանի ու Նախիջևանի հետ մնաց պարսից, իսկ արևմտեան և հարաւային Հայաստանը մնաց օսմանցոց։

ՀԱՑԵՐԻ ԳԱՂԹԸ

Թաթարաց արշաւանքներից յետոյ երկու հարիւր-ամեայ պատերազմները օսմանցիների և պարսից մէջ Հայաստանը հասցրին վերջին ծայր աղքատութեան. երկիրը դարձել էր գրեթէ անապատ. շէն ու հոյակապ քաղաքները կործանուած, աւերակ դաշտերը խոպան, գիւղերն ու աւանները աւերակ, բնակիչների մի մասը կոտորուած, միւսը գաղթած օտար երկիրներ. իսկ մնացեալը աղքատ ու թշուառ, ուժասպառ էր եղած հիւծուվին։ Այլևս հնար չկար հայրենի օջախը վառ պահելու, պէտք էր թողնել տուն, տեղ, հայրենիք և օտար աշխարհներում, օտար երկնի տակ ապաստան որոնել, ուստի սկսւում են մի շարք գաղթեր, կամ բռնի և կամ ինքնակամ։

Որովհետև օտարութեան մէջ հեշտ չէր հող ձեռք բերել և երկրագործութեամբ ապրել, ապրուստի միակ դիւ-

րին միջոցը առևտուրն էր և ահա հայերն իրանց նուիրում են առևտրի, հանդիսանում են ճարպիկ միջնորդները արևելքի և արևմուտքի մէջ։

Գաղթն Հայաստանից սկսւում է շատ վաղ ժամանակներից. դեռ Սասանեան արքաները հայերին գաղթեցնում էին Միջին Ասիա, երկու նպատակներով. նախ մի զօրեղ պատուար կազմելու համար իրանց թշնամիների դէմ և երկրորդը հայերի ուժը հայրենիքում թուլացնելու համար։ Նոյն պօլիտիկային էին հետևում և արաբները ու յոյները։ Բիւզանդիան (Պօլիսը) միշտ ահագին թուով հայ բնակիչներ է ունեցել, որոնցից շատերը յայտնի են եղել պատմութեան մէջ որպէս խոշոր պետական անձեր։

Բիւզանդական կայսրների մէջ մի տասնեակից աւելի թագակիրները հայ էին ծագմամբ և կառավարեցին երկիրը 200 տարի շարունակ։ Այդ կայսրների իշխանութիւնը կործանիչ էր հայերի համար, որովհետև նրանք բազմաթիւ հայեր գաղթեցրին Բալկանեան թերակղզին կամ թշնամու դէմ կռուելու և կամ անմարդի տեղերը բնակելի դարձնելու համար։

Գաղթային մի մեծ հոսանք էլ սկսուեց Կիլիկիայից Ռուբինեան թագաւորութեան վերջնալուց յետոյ. հայերը նախ անցան մօտակայ Կիպրոս, Հռոդոս և Կրետէ կղզիները, իսկ այնտեղից դէպի Իտալիայի շահաստան քաղաքները. Պիզա, Ջենովա, Վենետիկ և այլ տեղեր. խիստ բազմամարդ և հարուստ էին հայերը Վենետկում. կաթոլիկ հոգևորականների հալածանքից նրանք բոլորը խառնուեցան և կորան իտալացոց մէջ։

Գաղթային մի խոշոր հոսանք էլ կասպից ծովի վրայով անցաւ դէպի Թաթարստան (Ղազան և Աշտարխան) Վոլգայի ափերը. հայերը թաթարաց բանակում առևտրականներ էին զէնքը ձեռին. պատերազմի ժամանակ նրանք զինուած օգնում էին թաթարներին, իսկ խաղաղ ժամանակ զբաղուած էին առևտրով։ Կիսաբարբարոս թաթարների բռնութիւններից դժգոհ հայերը դաշն կապեցին Ջենովացիների հետ, որոնց ձեռին էր գտնւում

այդ ժամանակ Ղրիմը։ Հայերը զէնքով ճանապարհ բացարին իրանց համար և եկան հաստատուեցին Ղրիմի թերակղզում, ուր շուտով բազմացան ու հարստացան։ Այնուհետև Ղրիմի թերակղզին փախստական հայերի սիրած գաղթավայրերից մինը դարձաւ։ Սակայն հայերի աստղը շուտով թեքուեց, երբ մի կողմից թաթարները, միւս կողմից օսմանցիք սկսեցին սպառնալ և տիրել Ղրիմին։

Այնուհետև 100,000 հայերից մի մասն ստիպուած գաղթեց Լեհաստան, միւս մասը կոտորուեց, երրորդ մասն էլ անցաւ Մօլդովալաքիա (Ռումինիա)։ Ղրիմում հայերի թիւն այսօր հազիւ 10,000 հոգու է հասնում. ոռնց մի մասը հայ կաթոլիկ է։ Ռումինիայի հայերի թիւը մօտ 14,000 է, որոնք խիստ հարուստ և բարեկեցիկ կեանք ունին, պարապում են մեծ մասամբ գիւղատնտեսական զանազան ճիւղերով և մեծ կալուածատէրեր են։

Մօլդաւիայից հայերն անցան Տրանսիլվանիա և հիմնեցին Հայաքաղաք, Գերլա և Պաշպալով քաղաքները։ Նրանք իրաւունք ստացան ներքին ինքնավարութեան և քաղաքի բոլոր գործերը, դատավարութիւն և ոստիկանութիւն կառավարում էր հայ ծերակոյտի ձեռքով։ Սրանք բոլորը կաթոլիկ են և լեզուն մոռացած, միայն եկեղեցական ծէսը կատարում է հայերէն։ Սրանք բոլորն էլ հարուստեն ու մեծափարթամ, ոմանք նշանաւոր դիրքի և աստիճանի հասած՝ ազդեցութիւն ունին նոյն իսկ ունգարական պարլամենտում։

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Հայերը Լեհաստան գաղթեցին Բագրատունեաց անկումից յետոյ, Ալփասլանի ժամանակ և Ղրիմից, երբ նրանն տիրեցին օսմանցիք։ Մի ժամանակ հայ գաղթականների թիւն հասաւ 200,000 հոգու Լեհաստանում։ Հայերի բնակութեան գլխաւոր վայրերն էին Իլվով կամ Լեմբերգ և Կամենից։ Հիմա զուտ հայ բնակչութեամբ միացել է

Կուտի քաղաքը, ուր ապրում են մօտ 4000 հայ և դեռ խօսում են հայերէն*)։

Լեհ թագաւորները կամենալով ծաղկեցնել առևտուրն իրանց երկրում, սիրով էին ընդունում հայերին և արտօնութիւններ տուին նրանց։

Կամենեցի և Իլվովի հայերն իրաւունք ստացան ներքին ինքնավարութեան, որ կոչւում էր Վօյթ։ Վօյթը բաղկանում էր 12 հայերից, որոնք ընտրովի էին և կառավարում էր հայոց գործերը ազգային սովորոյթով և Մխիթար-գօշի Դատաստանագրքով։ Դատավարութիւնը հայերէն էր Անիի բարբառով, սակայն երբ Թէթարատանի հայերն եկան Լեհաստան, գործերն սկսեցին վարել նաև թաթարերէն, որովհետև նրանք մայրենի լեզուն մոռացել էին։ Շուտով հայերն իրանց ձեռն առնելով երկրի հարստութիւնը, հասան բարձր դիրքի և ազդեցութեան. հիմնեցին մեծամեծ եկեղեցիներ ու վանքեր. մինչև անգամ տպարան։ Սակայն հայերի հանգիստը շուտով վրդովուեց։ Պարսից հալածանքներից փախչելով, Լեհաստան էր եկել Մելքիսեդեկ կաթողիկոսը։ Սա հակառակ ժողովրդի ցանկութեան ծածուկ Նիկոլ Թորոսովիչ անունով մի անբարոյական մարդու ձեռնադրեց եպիսկոպոս և հրամայեց ժողովրդին, որ հնազանդեն Նիկոլին իբրև առաջնորդի։ Այս առաջնորդը անպատուելով դուրս արաւ եկեղեցուց կաթուղիկոսի նուիրակներին. ժողովուրդը գայթակղած ուզեց դատի կանչել Նիկոլին, իսկ սա կառավարութեան առաջ յայտարարեց, որ կաթուղիկոսի նուիրակը մի թուրք լրտես է և եկել է Լեհաստանը լրտեսելու։ Այսպիսով Նիկոլն ազատուեց դատից և այնուհետև իր հարազատ ժողովրդին հալածելու համար դիմեց եզուիտների օգնութեան, որոնք այն ժամանակ մեծ դեր էին խաղում Լեհաստանում։ Նիկոլը եզուիտներին խոստացաւ ուրանալ իր հաւատը և ճանաչել պապի իշխանութիւնը։ Այնուհետև եզուիտները պահանջեցին, որ եկեղեցին բաց անեն և

*) Կարդա. «Այց Լեմբերգի հայերին». «Հայ-հեղինակներ», երես 254.

յանձնեն Նիկոլին. երբ հայերը մերժեցին, նրանք զինուորների միջոցով կոտրեցին եկեղեցու դռները և եկեղեցին յանձնեցին Նիկոլին։

Նիկոլը գրաւեց և հայոց մեծ եկեղեցիներն ու նրանց կալուածները. փակեց բոլորը և ժողովրդին միանգամայն զրկեց հոգևոր պետոյքից։ Հայերը դիմեցին կաթուղիկոսին. սրա միջնորդութեամբ Վլադիսլաւ թագաւորը և Իլվովի կաթոլիկ եպիսկոպոսը խոստացին հայերին և հրամայեցին, որ Նիկոլը եկեղեցիները ժողովրդին տայ։ Երբ եզուիտները մերժեցին այս հրամանը, թագաւորը ինքը գնաց եկեղեցի, որ ժողովրդին յանձնէ։ Խորամանկ Նիկոլը եզուիտների խորհրդով դուրս եկաւ թագաւորի դիմաց եկեղեցական զգեստով և հաղորդութեան սկիհը ձեռին։ Թագաւորը չհամարձակուեց նրան ձեռ տալ։ Յուսահատ հայերը դիմեցին Հռոմ, բայց այնտեղ էլ եզուիտների միջոցով յաղթութիւն տարաւ Նիկոլը։

Կուին ստացել էր խիստ ծանր կերպարանք։ Նորածին մանուկները ճնացել էին անկնունք, հարսներն անպսակ, մեռելներն անթաղ։

Շատերն իրանց հոգևոր պէտքերը լրացնելու համար գնում էին ուրիշ քաղաք. երբ վերադառնում էին, Նիկոլը նրանց ենթարկում էր տուգանքի։ Մի բան էր պահանջում հաւատուրացը. «ուրացէք հայրենի կրօնը»։

Այս հալածանքի պատճառով Լեմբերգի 50,000 հայերի մեծ մասը գաղթելով ցրուեցին զանազան տեղեր և տեղում հազիւ մնաց 5,000 հոգի։

Երբ այսպէս կործանեց ու ոչնչացրեց իր հօտը, նոր խելքի եկաւ անօրէնը և կամեցաւ բանը հաշտութեամբ վերջացնել։ Դիմեց Փիլիպոս կաթուղիկոսին, որ այդ ժամանակ Պօլիս էր գնում և մեղայ եկաւ. կաթուղիկոսը նրան ներեց և գրաւոր խոստում առաւ, որ իր հօտը էջմիածնից չի բաժանի և հայ ծէսը կմնայ։ Իլվովցիք չընդհատացին Նիկոլին, բայց դիմելով կաթուղիկոսի նուիրակին, հաշտուեցին Նիկոլի հետ։ Վերջինս մեծերից յոյ-

սը կարելով, աշխատեց մանուկ սերունդը կրթել կաթոլիկ հոգով և Իլվովում բաց արաւ մի դպրոց։

Նիկոլի սկսածը շարունակեց և իր նպատակին հասցրեց նրա աշակերտ Վարդան Յունանեան կրօնաւորը։ Նա Իլվովի հայ ժողովրդին խոպառ բաժանեց մայրենի եկեղեցուց և միութիւն հրատարակեց Հռոմի հետ (1689 թ.)։

Այդ օրուանից Լեհաստանի հարուստ ու փառահեղ գաղթականութիւնն հետզհետէ նուազելով, այսօր հազիւ 5000 հայ են մնացել։

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Հայերն Հնդկաստան անցան Պարսկաստանից, գլխաւորապէս Նոր-Ջուղայից և այստեղ էլ տեղական իշխաններից մեծամեծ արտօնութիւններ ստանալով, մեծ հարստութիւն դիզեցին և սկսեցին դեր խաղալ որպէս զինուորական ու քաղաքական խոշոր պաշտօնեաներ։ Հնդկաստանում հայոց թիւը 10,000-ից աւելի չէ եղել, այն էլ ցրուած այդ ահագին թերակղզու զանազան քաղաքներում՝ Սուրատ, Մադրաս, Կալկաթա, Զիչա և Բօմբէյ։

Երբ անգլիացիք աչք դրին ձեռք ձգելու Հնդկաստանը, հայերը պատուաւոր միջնորդի դեր կատարեցին։ Արևելեան Հնդկաստանի ընկերութեան անդամներից էին և մի քանի նշանաւոր ու ազդեցիկ հայեր։

Հայ գաղթականների մէջ Հնդկաստանի հայերը բռնում են առաջին տեղը նրանով, որ իրանք մեծ հոգ տարան ուսումն ու կրթութիւնը տարածելու թէ իրանց մէջ և թէ բնիկ հայրենիքում։

Նրանք իրանց առասպելական հարստութեան հետ մի քանի անգամ ծրագիրներ յղացան Հայաստանը փողով ազատելու և դրա համար գրագրութեան մէջ մտան Ռուսաց կայսրների հետ։

Քաղաքական այդ ծրագիրները թէպէտ վիժեցին, բայց մեր ժառաւոր կեանքում նրանք պատուաւոր տեղ են բռնում։ Առաջին հայ թերթը լոյսը տեսաւ Մադրաս քաղաքում 1793 թ. «Ազդարար» անունով։ Ամենահին քրիստոնեայ եկեղեցին Հնդկաստանում, Զիչրայի հայոց եկեղեցին է, հիմնուած 1695-ին։

Նշանաւոր է և Կալկաթայի հայոց եկեղեցին իր գեղեցիկ զանգակատնով և «հայոց հիւրանոցով», ուր ամեն մի պանդուխտ հայ իրաւունք ունի 3 ամիս ձրի ապրելու։

Կալկաթայում 1840 թուականներից սկսաւ իր գործունէութիւնը «Արարատեան ընկերութիւնը», որ հիմնեց «Մարդասիրական ճեմարան», մամուլ և տպարան։ Այդ ընկերութեան աջակցութեամբ և Մեսրոպ Թաղիադեանի խմբագրութեամբ երկար ժամանակ լոյս էր տեսնում «Ազգասէր» լրագիրը։ Դա անդրանիկ լրագիրն էր, որ գործ էր ածում մեր արևելեան աշխարհաբար լեզուն։ Կալկաթայի պէս հայերն ունէին եկեղեցի, դպրոց, հիւրանոց ու տպարան նաև Մադրասում։

Մադրասայի հարուստ Սամուէլ Մուրատը մի մեծ գումար թողեց Մխիթարեաններին, որով բացուեց Մուրատեան դպրոցը։ Մի ուրիշ մեծահարուստ, Ռափայէլ Ղարամանեան, նոյնպէս բաց արաւ Վենետիկում Ռափայէլեան դպրոցը. 1870-ին այս երկու դպրոցները միացան Մուրադ-Ռափայէլեան անունով և գոյութիւն ունեն ցարդ Վենետիկում Մխիթարեանների հսկողութեան տակ։

Նոյն Հնդկաստանի հայերն էին, որ մի քանի հարուստ կտակ թողին Նոր-Նախիջևանի հայոց անունով դպրոց բանալու [2])։

Անգլիացոց տիրապետելուց յետոյ Հնդկաստանի հայերը չդիմանալով մրցման, կորցրին իրանց նշանակութիւնը և ցրուեցին Հնդիկ արխիպելագոսի զանազան կղզիները, գլխաւորապէս Ջաւա, այնտեղից էլ անցան մինչև Զինաստանի ափերը։

---

[1]) Կարդա «Մխիթարեաններ յօդուածը». Հայ Հեղինակներ. Դ. տպ. էջ 310։

[2]) Կարդա, Հայ Հեղինակներ. Միքայէլ Նալբանդեանի կենսագրութիւնը, երես 60. «Հնդկաստանի հայերը». եր. 267. և Թաղիադեանի կենսագրութիւնը էջ 5։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

1659-ին Պարսկաստանի հայ առևտրական մի ընկերություն կամենալով Ռուսաստանում առևտրի արտօնություն ստանալ, մի թանկագին ընծայ ուղարկեց Ալէքսէյ Միխայիլովիչ թագաւորին։ Դա թանկագին մի գահ էր, զարդարուած ակնեղէններով, որ շինել էին հայ արհեստաւորները։ Կազմուեց մի առևտրական դաշինք, որով Հնդկաստանի և Պարսկաստանի ապրանքները Կասպից ծովով հայերը տանում էին Ռուսաստան, իսկ այնտեղից գուրս էին տանում թանկագին մորթիներ ու մետաղներ։

Պետրոս Մեծն էլ ի նկատի ունենալով իր երկրի բարգաւաճումը, ամեն կերպ աշխատում էր հայերին գրաւել Ռուսաստան։ Առաջին թղթենին անկողը և մետաքսի առաջին գործարան հիմնողը Ռուսաստանում հայերն էին։

Պետրոս Մեծի հետ էր, որ Ղարաբաղի հայ մելիքներն ակսեցին իրանց քաղաքական յարաբերութիւնները։

Տասնութերորդ դարում Ղարաբաղը բաժանուած էր հինգ մելիքութիւնների, որոնք կոչւում էին Խամսայի մելիքներ (հինգ մելիքներ). Ջրաբերդ, Դիւլիստան, Վարանդա, Խաչէն և Տիզակ։ Բնակիչների թիւը մօտ 300,000 էր, որոնց երկու երրորդը հայ, մի երրորդը մահմեդական էր։

Այդ ժամանակները Եւրոպայից Ղարաբաղ, իր հայրենիքը, վերադարձաւ Իսրայէլ Օրին, նա երկար ժամանակ ապրելով Ֆրանսիայում և Բաւարիայում, համոզել էր պինուորական արուեստին, գրաւել էր Պֆալցի իշխանի սիրտը և նրա հաւանութիւնն առնելով, կամենում էր բազարական զօրքերի և Ղարաբաղի մելիքների օգնութեամբ ազատել արևելեան Հայաստանը։ 1699 թ. մելիքները գաղտնի ժողով կազմեցին Օրիի գեկավարութեամբ և ազգասական թղթեր ուղարկեցին Պետրոս Մեծին, Բաւարիայի իշխանին և Հռոմի պապին։

Այդ թղթերն յանձնուեցին Օրիին և Մինաս վարդապետ Տիգրանեանին։—

Պետրոս Մեծը հանճարեղ հեռատեսութեամբ հասկացաւ այս պատգամաւորութեան նշանակութիւնը և անմիջապէս Օրիին դեսպանութեամբ ուղարկեց Պարսկաստան, որի նպատակն էր լրտեսել Թշնամու երկիրը և ոտքի կանգնեցնել հայերին։ Օրին աջողութեամբ կատարելով դեսպանութիւնը, յայտնեց կայսրին, որ հայերն ամեն րոպէ պատրաստ են կայսրին օգնելու։

Երբ Պետրոս-Մեծը տիրեց Դերբենդին ու Բագուին, հայ մելիքները վրաց Վախթանգ թագաւորի հետ զօրքով ընդ առաջ գնացին դէպի Կասպից ծովը, բայց ռուսները յանկարծ Թողին գրաւած երկիրները և հեռացան։ Հայերի այս վարմունքը զայրացրեց Օսմանցիներին, որոնք յարձակուեցին և գրաւեցին Ղարաբաղը. այդ ժամանակ էր ահա, որ տեղի ունեցան Դաւիթ բէգի կռիւները։ Վերջ-ի վերջոյ մելիքները Ռուսաստանից յուսախաբ դառնալով, ճանաչեցին Նադիր Շահի գերիշխանութիւնը։

Այնուհետև Խամսայի մելիքութեան մէջ ակսուեցին երկպառակութիւն կռիւ։ Մելիք Շահնազարն սպանելով իր աւագ եղբօրը, խլեց նրանից Վարանդայի իշխանութիւնը։ Նրա այս վարմունքը պատժել կամեցան Ջրաբերդի Մելիք Ադամը և Գիւլիստանի Մելիք Ուսուփը։ Մելիք Շահնազարն իր աղջիկն ու Շուշու բերդը տալով Փանահ խանին, դուրս եկաւ հայ մելիքների դէմ։ Տասներկու տարուայ անընդհատ կռիւներից յետոյ Մելիք Ադամն ու Մելիք Ուսուփը յաղթուած՝ փախան Վրաստան և նրանց երկիրներին տիրեց Փանա-խանը. նրանք կրկին տէր դարձան իրանց երկիրներին Փանահի իշխանութիւնը ճանաչելուց յետոյ։

Հայոց յարաբերութիւնները Ռուս-արքունիքի հետ վերստին նորոգուեցին Եկատերինէ Բ կայսրուհու օրով։ Այժմ հայոց գործերը վարողը Յովսէփ եպիսկոպոս Արղութեան երկայնաբազուկն էր, որ վերջն ընտրուեց կաթողիկոս։

Պարսկաստանի խառովութիւններից օգտուելով ռուս

զօրքերը գրաւեցին Կասպից ծովափնեայ քաղաքները և հասան ու տիրեցին Շամախի քաղաքին։ Մելիք Ադամի և Ուսուփի որդիքը, Մէլլում և Աբով, մելիք Բախտամի հետ (Տիզակի մելիք) կրկին հաւատարմութեան թուղթ տուին ռուսներին։ Այս թուղթը խիստ թանկ նստեց հայերին, որովհետև Փանա-խանի որդին Իբրահիմը տակն ու վրայ արաւ մելիքների երկիրը և ժողովրդից մի ահագին հատուած ստիպուած գաղթեց Վրաստան, Ղզլար և Աժտարխան։

Իբրահիմ խանը չէր ուզում ճանաչել Մամադ խանի գերիշխանութիւնը, ուստի 1895-ին Աղա-Մամադ խանը յարձակուեց Ղարաբաղի վրայ և պաշարեց Շուշին, Իբրահիմի հետ այս անգամ միացել էին և հայ մելիքները, բացի մելիք Մէլլումից։ Շուշին չառած շահն ուղևորուեց Վրաստան և թեթև պաշարումից յետոյ տիրեց Թիֆլիզին։

Աւերն ու կոտորածը Թիֆլիսում տևեց երեք օր ու գիշեր, 12,000 հայ և 4,000 վրացի մանուկ և աղջիկ գերի տարուեցին։ Յաջորդ տարին Շուշին արդէն առնուած էր, բայց մելիքներն ազատուեցին. պատժից, որովհետև Շահի սենեկապետը սպանեց իր իշխանաւորին քնած ժամանակ և պարսից զօրքերը հեռացան Շուշուց (1797)։ Շուտով Ղարաբաղին տիրեց Պօտեօմկին զօրավարը։

ՊԱՐՍԻՑ ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ

Ֆաթհալի շահի որդին՝ Աբաս Միրզան կամենալով նորէն եւս առնել ռուսաց գրաւած երկիրները՝ կրկին պատերազմ հրատարակեց։ Կռիւը տևեց մի քանի տարի, ռուսները սակաւաթիւ էին, բայց նրանց մեծ օգնութիւն էին հասցնում հայերը զէնքով, կամաւոր զօրքով և պաշարով, մինչև որ Աբաս Միրզան ստիպուեց հաշտութիւն խնդրել։ Գիւլիստանի դաշինքով 1813-ին Ղարաբաղը մնաց ռուսներին։

1826-ին Աբաս Միրզան կրկին անցաւ սահմանը և 80,000 զօրքով Շուշին պաշարեց։ Չնայելով որ ռուս զօրքի թիւը խիստ քիչ էր բերդում և պաշարը սակաւ, բայց

հայ բնակիչների անձնուէր քաջութեամբ պաշարեալներն աջողութեամբ դիմադրում էին թշնամուն։ Աբաս Միրզայի առաջն առնելու դուրս եկաւ իշխան Մատաթեանը, Թիֆլիզից։ Շամքորի մօտ նա ջարդեց պարսից առաջապահ գունդը և խլելով նրանց ռազմամթերքը շտապեց դէպի Գանձակ, ուր տեղի ունեցաւ գլխաւոր ճակատամարտը. Աբաս Միրզան յաղթուեց ու հալածուեց։

Այնուհետև Մատաթեան անցաւ պարսից սահմանը, մտաւ Ղարադաղ և տիրեց Անար քաղաքին։

Միւս կողմից դէպի պարսից սահմաններն առաջացաւ գլխաւոր հրամանատար Պասկևիչը. նրան ընկերացած էր Ներսէս եպիսկոպոսը, որ առաջնորդում էր հայկամաւորների խմբին։ Շուտով առնուեց Էջմիածինը, Սարդարաբադը, Նախիջևանը, Երևանը և ամբողջ Պարսկահայաստանն անցաւ ռուսաց ձեռը։

Այնուհետև ռուսները մտան բուն Պարսկաստան, տիրեցին Ատրպատականին, Ուրմիային և հասան մինչև Թաւրիզ։ Այստեղ պարսիկները հաշտութիւն խօսեցին և թուրքմէնչայի դաշնագրութեամբ Արաքսը ճանաչուեց սահմանագիծ երկու տէրութիւնների։

Այս հաշտութիւնից յետոյ ռուսաց առաջնորդութեամբ 40,000 հայ թողին իրանց տունն ու տեղը և գաղթեցին դէպի Ռուսա-հայաստան։

Նոյն տարին Պասկևիչն ստիպուած էր իր զէնքն ուղղել տաճկաց դէմ։ Նա շտապով տիրեց Կարսին, առնուեց Ախալցխան ու Արտահանը և զօրքը հետզհետէ կենդրոնացաւ Երզրումի մօտերը, ուր երկու ճակատամարտում օսմանցիք չարաչար յաղթուեցին։

Երզրումը, չընայելով իր ռազմական ամրութիւններին, շուտով անձնատուր եղաւ։ Ռուսաց բանակը հասել էր մինչև Ադրիանոպոլիս։ Այստեղ էլ կայացաւ հաշտութիւնը, որով Ռուսաստանին միաց Ախալցխան, Ախալքալաքը, Անապան և Փոթին։ Այդ պատերազմի ժամանակ էլ մօտ 90,000 հայ Կարապետ եպիսկոպոսի առաջնորդու-

թեամբ Տաճկաստանից գաղթեցին դէպի ռուսաց սահմանները և հաստատուեցին Ալէքսանդրօպոլի, Ախալքալաքի և Ախալցխայի գաւառներում։

ՊՕԼՕԺԵՆԻԷ, ԴՊՐՈՑՆԵՐ, ՄԱՄՈՒԼ

Էջմիածնին տիրելով, Ռուսաստանը տէր դառաւ գրեթէ ամբողջ հայութեան սրտին։ Հարկաւոր էր որոշել Էջմիածնում նստող կաթողիկոսների իրաւասութեան սահմանը և ահա 1836 թ. Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսի օրով կազմուեց մի կանոնադրութիւն, որ կոչւում է պօլօժենիէ։ Այս օրէնքով հայ եկեղեցու գլուխ և պետ ճանաչւում է հայ-ընդհանրական կաթողիկոսը։ Նրա ընտրութեան մասնակցում են համայն հայերն Էջմիածնի տաճարում, իրանց պատգամաւորների միջոցով։ Ընտրուածը հաստատւում է ռուսաց կայսեր ձեռքով։

Կաթողիկոսին օգնում է Սինոդը, որ ունի ութ անդամներ։ Անդամներին ընտրում է կաթողիկոսը և հաստատում կայսրը։ Սինոդի առենապետը վեհափառ հայրապետն է։ Սինոդի հսկողութեան տակ են գտնւում ռուս-հայոց գրեթէ բոլոր հոգևոր գործերը։ Սինոդի իրաւասութիւնը արտասահմանի հայութեան վրայ չի տարածւում։

Սինոդը գտնւում է Ներքին գործոց նախարարութեան հսկողութեան տակ։ Տէրութեան կողմից սինոդում շարունակ մասնակցում է մի պաշտօնեայ, որ կոչւում է պրօկուրօր։

Նա հսկում է, որ պետական օրէնքներին հակառակ որևէ գործ չկատարուի Սինոդում։

Ռուսաստանի հայութիւնը բաժանւում է վեց թեմերի՝ Երևանի, Թիֆլիզի կամ Վրաստանի, և Իմերեթիի, Շուշու, Շամախի, Բեսարաբիայի և Աստրախանի։ Թեմերը կառավարւում են առաջնորդներն իրանց ատրադրեալ կոնսիստորիաներով և հոգևոր ատեաններով։ Սրանք բոլորը ենթակայ են սինոդին։ Հոգևոր պիտոյքներին բաւարարու-

թիւն տալու և կրթուած հոգևորականներ պատրաստելու համար ամեն մի թեմում օրէնքով պիտի լինի մի մի հոգևոր միջնակարգ դպրոց։

Այդպիսի դպրոցներից ամենահինն ու յայտնին Ներսիսեան դպրոցն է Թիֆլիզում, որ հիմնեց Ներսէս եպիսկոպոսը (ապա կաթուղիկոս) 1825 թ.։ Այս դպրոցի դերը ռուսահայ լուսաւորութեան գործում շատ մեծ ու նշանաւոր է։ Սա առաջինն էր, որ տարէց տարի ստուար բազմաթիւ կրթուած սերունդներ տուաւ Կովկասեան հայութեան, որոնք կեանքի ամեն ասպարիզում սկսան մեծ դեր խաղալ։ Այս դպրոցում հիմնուեց ու զարգացաւ ներկայ աշխարհաբար լեզուն, սրա սաներն ու ուսուցիչներն էին առաջին հայ թերթի և հայ թատրոնի հիմնողները Կովկասում։ Առաջին տպագրական մամուլը Թիֆլիզում, նոյնպէս այս դպրոցին էր պատկանում։ Մայրենի լեզուն մոռացած հայութեան մէջ հայերէն նորից տարածողը այս դպրոցի սաներն եղան։ Գաւառական դպրոցների ուսուցիչների ստուար բազմութիւնը միշտ եղել են այս դպրոցի սաները, ինչպէս նաև քիչ թէ շատ կրթուած քահանաներն ու վարդապետներն ամբողջ Կովկասում։

Հայերի լուսաւորութեան գործին նպաստեց նաև Լազարեան ճեմարանը Մոսկուայում, որ հիմնել էր Յովակիմ Լազարեանը 1815 թ.։ Այդ դպրոցից էլ դուրս եկան նշանաւոր հայ ուսեալներ ու հեղինակներ և այդ դպրոցի շուրջն էին խմբուած մի ժամանակ հայ մամուլի ներկայացուցիչները։

Լազարեան տոհմը բացի այդ դպրոցից երկու դարշարունակ անգին ծառայութիւններ է մատուցել հայ ազգին իր հեռատես գործունէութեամբ։

Լազարեանները Հին Ջուղայից էին, որոնք Շահ-Աբասի ստիպմամբ գաղթեցին և հաստատուեցին Սպահան, այն տեղ նրանք հայոց ազգապետ էին ճանաչուած և պարոհից գանձարանի տեսուչ էին։

Պարսկաստանի խռովոյթների ժամանակ նրանք գաղթեցին Ռուսաստան և բնակութիւն հաստատեցին Մոս-

կուա։ Այնտեղ նրանք հիմնեցին մեսրոպի գործարան, որով արժանացան ընկատելինել կայսրուհու ուշադրութեանը և ստացան ազնուականութիւն։

Հազարեաններն այնուհետև մօտիկ յարաբերութեան մէջ էին ռուս արքունիքի հետ և շարունակ բարեխօս ու միջնորդ էին հայ-ազգի և ռուս արքունիքի յարաբերութիւնների ժամանակ։

Նրանք իրանց ծախքով կառուցին Մոսկուայի և Պետերբուրգի հայ եկեղեցիները և առատ ու հաստատուն եկամուտներով ապահովեցին։ Նրանց շնորհիւ Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի և Նոր-Նախիջևանի հայերը բաւական խոշոր արտօնութիւններ և ազատութիւն ստացան կառավարութիւնից։

Ռուսաց տիրապետութեան և Հին-Հայաստանի սահմանները կրկին գաղթեցրած հայերի շնորհիւ Կովկասը մի նոր կեանք առաւ, երկու կողմի համար էլ շահաւէտ։ Հայերը ռուսաց հովանաւորութեան տակ վերջապէս հասան իրանց դարերով կորցրած ու որոնած նպատակին. կեանքի, գոյքի, կրօնի ու լեզուի ազատութեան և այնուհետև նուիրուեցին իրանց սովորական պարապմունքներին երկրագործութեան, արհեստների, ուսման և առևտրի։ Ռուսաց համար էլ դա շահաւէտ էր, որովհետև նոր տիրած կիսաւեր ու վայրենացած երկրում նրանք ի դէմս հայերի գտան մի ժիր, հաւատարիմ, ընդունակ ու աշխատասէր ժողովուրդ, շինարար և լաւ հարկատու, որ գիտէր երկիրը մշակել և արդիւնաբերութիւնը ծաղկեցնել։ Կեանքի և գոյքի ապահովութիւնը բարւոքեց հայերի տնտեսական դրութիւնը. նրանք այնուհետև մտածեցին նաև ուսման և կրթութեան մասին, մի մասը մտաւ պետական դպրոցները, միւս մասը հայ ծխական կամ միջնակարգ դպրոցները, որոնք հետզհետէ սկսան աճել ու տարածուել։

Սկսան դպրոցներ բացուել նաև աղջկանց համար, որոնցից անուն հանեցին մանաւանդ Գայիանեան և Յովնանեան ուսումնարանները Թիֆլիզում։

Պարբերական մամուլն էլ առաջինն սկսուեց Թիֆլիզում.

Կովկաս թերթն էր, որ հրատարակուել սկսուեց փոխարքայ Վօրօնցովի նախաձեռնութեամբ ռուսերէն և հայերէն 1847 թ.։ Դրա խմբագիրները Ներսիսեան դպրոցի ուսուցիչներն էին։ Կովկասը դադարելուց յետոյ 1850 ին ըսկսուեց «Արարատ» աշխարհաբար թերթը Գաբրիէլ քահ. Պատկանեանի խմբագրութեամբ։ Պարբերական մամուլի մէջ ամենից մեծ դեր կատարողն ու մեծ ազդեցութիւն ծողնողը եղաւ «Ինսխատիայլ» ամսաթերթը, որ հիմնուեց Մոսկուայում 1858-ին Ս. Նազարեանի խմբագրութեամբ և Միքայէլ Նալբանդեանի աշխատակցութեամբ։ Այնուհետև հայ մամուլն աճեց ու բարգաւաճեց գլխաւորապէս Թիֆլիզում զարկ տալով հայ կեանքի բազմակողմանի քննադատութեան և զարգացման։ Այդ կողմից առաջնութեան և տևականութեան գափնին պատկանում է Գ. Արծրունու հիմնած «Մշակ» լրագրին։

Միայն պարբերական մամուլը չէր բարգաւաճողը, առաջ եկան տաղանդաւոր ու բեղմնաւոր գիտնականներ, քանաստեղծներ, վիպասաններ, թատերգուներ, դերասաններ, երաժիշտներ, նկարիչներ, ու ճարտարապետներ։ Հայ ազգը ցոյց տուաւ, որ ընդունակ է ըմբռնելու եւրոպական կուլտուրայի բազմազան ճիւղերը, իւրացնելու այն և պատուաստելու իր մանուկ սերնդին։

Աբովեանը, Գամառ-Քաթիպան, Պռօշեանը, *) Բաֆֆին, Սունդուկեանը, դերասան Ամերիկեանն ու Ջմշկեանը, Միքայէլ Նալբանդեանն ու Շահ-Ազիզը ցոյց տուին, որ Մօրենացիների և Եղիշէների տաղանդը դեռ մեռած չէ հայ ազգի մէջ։

Հիմնուեցին այնուհետև մարդասիրական և բարեգործական ընկերութիւններ կրթական կամ բարեգործական նպատակներով։ Թիֆլիզում հիմնուեց գրքեր հրատարակելու մի ընկերութիւն։ Գաւառներում ծխական դպրոցների կողքին բաց արին էժանագին գրադարաններ ու

*) Սրանց բոլորի մասին կարդա Հայ-Հեղինակներ։

ընթերցարաններ, ուր հայերէնի հաւասար երբեմն նաեւ աւելի ստացւում ու կարդացւում էին ռուսերէն թերթեր ու գրքեր։

ՀԱՅԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Ոչ մի ազգի տիրապետութիւնը հայերի համար այնքան ծանր, երկարատեւ ու կորստաբեր չէ եղել, ինչպէս թուրքերինը։ Թուրքերի քաղաքականութիւնն էր ջնջել տիրած ազգի ազնուական ցեղերին, որոնք այս կամ այն կերպ դեռ կարող էին ձգտում ունենալ ազատութեան։ Թուրքերի հակազդեցութեամբ հպատակը ռայա-ստրուկ էր, որի ինչքը և գոյքը պատկանում է Սուլթանին։ Նրանք սովորութիւն ունէին ժողովելու հպատակ ազգերի մանուկներին, թլպատում էին և մեծացնում իբրև մահմեդականներ։ Դրանցից էր կազմւում ենիչերի կոչուած արիւնարբու զօրքը։ Հարկը հաւաքում էին կապալառուների միջոցով, ուստի հարկահանութիւնը կատարւում էր ծայրայեղ անխիղճ կերպով։ Այս ամենը պիտի կրէր օսմանեան հպատակ հայը, դրա համար էլ Հայաստանի աւերածութիւնն ու աղքատութիւնը, ժողովրդի տգիտութիւնն ու կուլտուրական անկումը հասաւ ծայր-աստիճանի։ Հայը իրաւունք չունէր զէնք կրելու և հագնելու այն հագուստը, որ որոշուած էր մահմեդականի համար։

Այսպիսի ճնշումների տակ աղքատացած ժողովուրդն ստիպուած էր պանդխտելու ծովափնեայ քաղաքներն ու Պօլիս, ուր նա սկսում էր պարապել արհեստներով և առևտրով։ Որովհետև քաղաքներում, Եւրոպայի ազդեցութեան տակ, քիչ թէ շատ կեանքի ապահովութիւն կար, հայերը վաճառականութեան և արհեստների շնորհիւ ձեռք բերին բաւական մեծ հարստութիւն և իրանց ձեռը կենդրոնացրին առևտրի խոշոր ճիւղերը։ Հարստութեան մի այլ աղբիւր էլ տէրութեան կապալներն էին, որ վերցնում էին հայ վաճառականները։

Այսպէս հարստացած հայերից մեծամեծները կոչւում

էին ամիրա և շնորհիւ իրանց վայելած դիրքի կառավարութեան առաջ, մեծ ազդեցութիւն ունէին հայերի ներքին գործերի վրայ։

Օսմանեան կառավարութիւնը հայոց ներքին կեանքին շատ չէր խառնւում, թողնելով կառավարութիւնը գլխաւորապէս հայ հոգևորականներին, որոնց գլուխ ճանաչուած է հայոց պատրիարքը Կ. Պօլսում։ Առաջինը Յովակիմ եպիսկոպոս Բրուսայի առաջնորդն էր, որ 1461-ին հաստատուեց հայոց պատրիարք և նրան յանձնուեց աշխարհիկ և հոգևոր գործերի վարումը։

Պատրիարքներն ընտրւում և տապալւում էին մեծ մասամբ նշանաւոր ամիրաների կամքով. նրանց խորհրդով էլ պատրիարքը կառավարում էր հայ ազգի գործերը։ Պատրիարքն իր հաստատութեան համար տէրութեան մի որոշ տուրք պիտի տար, սա մի չարիք դարձաւ և անարժան հոգևորականներն այս տուրքը բարձրացնելով միմեանց ձեռից խլում էին իշխանութիւնը և ապա աշխատում նոյնը կրկնակի հանել ժողովրդից։ Այս ամենին վերջ տուաւ Յովհաննէս Կոլոտ բաղիշեցին, որ 26 տարի պատրիարք մնալով, բարձրացրեց պատրիարքի դիրքն ու պատիւը։ Երուսաղէմի պատրիարքութիւնը նա յանձնեց իր ընկեր Գրիգոր վարդապետին։ Այս երկուսը միասին աշխատեցին և պայծառացրին Երուսաղէմի վանքը։ Գրիգոր պատրիարքը ութ տարի վիզը ղրթայ քցած շրջեց, փող հաւաքեց և պարտքից ազատեց Երուսաղէմի հայոց վանքը, դրա համար էլ կոչուեց ղրթայակիր։

ԿԱԹՈԼԻԿ ՀԱՅԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Մինչդեռ հայ պատրիարքները կաշառներով աշխատում էին իշխանութեան գլուխ անցնել և մինը միւսին տապալել, կաթոլիկ հոգևորականները, մանաւորապէս եզուիտները բուն էին դրել Կարին, Դերջան, Կարս, Կ. Պօլիս և սկսել էին քիչ-քիչ իրանց որոգայթների մէջ քցել հայերին։

կաթոլիկ հայերը բացարձակ չոկնուել և առանձին եկեղեցի հիմնել անկարող էին, որովհետև թուրք կառավարութիւնը վախենալով եւրոպական միջամտութիւնից, այդ թոյլ չէր տալիս և բոլոր հայերի համար պատասխանատու էր ճանաչում միայն հայ պատրիարքին։

Երբ թուրք կառավարութիւնը տեղեկացաւ, որ հայ կաթոլիկները կան, առաջարկեց Պօղոս պատրիարքին, որ բաժանմանը վերջ տայ։ Հրամանը յայտնուեց հայ կաթոլիկներին և գործը խաղաղութեամբ վերջացնելու համար որոշեցին ժողով գումարել և փոխադարձ համաձայնութեան գալ։ Ժողովի համաձայնութեան թուղթը կարդացուեց մայր եկեղեցում և ստորագրուեց երկու կողմից։

Ժողովրդի մէջ, սակայն, դժգոհներ կային. դժգոհ էին մանաւանդ լատին հոգևորականները։ Նրանց դրդմամբ մի հայ կաթոլիկ լուսաւորչականի շորեր հագած սկսեց դրգռել արհեստաւոր հայերին, թէ պատրիարքը ուրացել է Լուսաւորչին և Պապին է ճանաչում եկեղեցու գլուխ։ Գրգռուած ժողովուրդը հաւաքուեց մայր եկեղեցի և սկսաւ պատրիարքից բացատրութիւն պահանջել։ Պատրիարքն ապաստանեց մի թուրքի տուն։ Ժողովուրդը ջարդելով պատրիարքարանի դռները ոչնչի չդուաւ այնտեղ։

Հարկ եղաւ գործի միջամտութեան. շատերին ձերբակալեցին և բանտարկեցին ու մի քանիսին էլ կախեցին։

Այս խռովութեան վերջ տալու համար Պեզճեան Յարութիւն ամիրայի խորհրդով որոշեցին մի կաթոլիկ վարդապետ ճանաչել հայ կաթոլիկների գլուխ և պատրիարքի փոխանորդ ու նրա միջոցով աերութեան կարգադրութիւնները յայտնել կաթոլիկ հայերին։

Այս հանգամանքից կաթոլիկները օգտուելով մատնութեամբ կամեցան բաժանուել հայերից և ունենալ անկախ պատրիարք։ Սակայն սուլթանը բաւականացաւ հայ պատրիարքի երաշխաւորութեամբ։ Այդ ժամանակ սկսել էր յունական ապստամբութիւնը և Նաւարինի առաջ միացեալ եւրոպացիների ձեռքով այրուեց օսմանեան նաւատորմը։ Օսմանեան կառավարութիւնը կասկածելով հայ

կաթոլիկների վրայ, որ յարաբերութիւն ունին եւրոպացոց հետ, անասելի բռնութեամբ աքսորել տուաւ Պօլսից մօտ 12,000 հոգի. ձմեռուայ ցրտի ու քաղցի պատճառով բազմաթիւ երեխաներ կոտորուեցին։

Պատերազմը վերջանալուց յետոյ աքսորուած հայ-կաթոլիկները վերադարձան և իրաւունք ստացան անկախ եկեղեցական համայնք կազմելու սեփական պատրիարքի իշխանութեան տակ։

Այս անցքերի մէջ մեծ դեր խաղացողը Յարութիւն ամիրա Պեզճեանն էր, հասարակ ծնողների զաւակ, անսահման բարի, առատաձեռն և պետական մեծ տաղանդի տէր, նա բարձրացաւ իր տաղանդի շնորհիւ և դարձաւ արքունի դրամահատութեան գլխաւոր։

Նա վայելում էր սուլթանի անսահման հաւատը և իր դիրքն ու ազդեցութիւնը գործ էր դնում անխոնջ բոլոր ազգերի բարեկեցութեանը նպաստելու։

Նա իր ծախսով շինել տուաւ հայոց և յունաց եկեղեցիներ, հիմնեց ուսումնարաններ։ Շինեց Ս. Փրկչի վանքը և հիմնեց ազգային հիւանդանոցը։ Հիմնեց մոմարան և իրաւունք ստացաւ մոմավաճառութեան, որից մինչև այն ժամանակ զուրկ էին քրիստոնեաները։ Պեզճեանը մեռաւ 1833-ին, բոլորն առանց ազգի և կրօնի խորութեան ողբացին նրա մահը։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Հայ կաթոլիկների հարցը նոր էր վերջացել, որ առաջ եկաւ հայ-բողոքականների խնդիրը։ 1830 թուականներից ամերիկացի բողոքական միսիոնարները հաստատուելով Իզմիր, Պօլիս, բաց արին դպրոցներ, ուր հայ աղքատ երեխաներին սովորեցնում էին ձրի, կերակրում և միևնոյն ժամանակ կրթում աւետարանական ոգով։ Մեծերի համար էլ բաց էին արել կիրակնօրեայ դպրոցներ։ Նրանք ս. Գիրքը թարգմանեցին աշխարհաբար և սկսեցին ձրի տարածել ժողովրդի մէջ։ Հիմնեցին նոյնպէս աշխար-

աբար լրագիր և այսպիսով գրաւեցին բաւականաչափ հեռուորներ։ Յակոբ պատրիարքն սկսեց եռանդով ընդդիմանալ բողոքականներին և շատերին աքսորել տուաւ Փոքր-Ասիա։ Տեսնելով որ դրանով բանն առաջ չի գնում, սկսաւ ուշ դարձնել ուսման և կրթութեան վրայ, որի մի ջոգով միայն կարելի էր կռուել միսիոնարների հետ։ Ուսման գլխաւոր կենդրոնը Իսկիւտարի ճեմարանն էր՝ հիմնուած 1838-ին, որ դրամական մեծ նեղութեան մէջ էր։

Պատրիարքի խորհրդով որոշուեց ժողովրդից որոշ տուրք առնել ազգային հիմնարկութիւններն ապահովելու համար։ Այդ տուրքի գանձելը յանձնուեց ժողովրդից ընտրուած 24 հոգու, սակայն տարաձայնութիւն առաջ եկաւ, որովհետև ամիրաներն իրանց կողմից այդ ժողովին չուզեցին մասնակցել, անպատուութիւն համարելով հասարակ ժողովրդի հետ գործելը։ Ժողովրդի ընտրեալները չկարողացան առանց ամիրաների աջակցութեան գործը վարել. նրանք հարկաւոր դրամը չգտան և հրաժարուեցին գործից։ Դպրոցն սկսեց կազալ։ Վերջը երկար կռիւներից յետոյ կառավարութիւնը լսեց ժողովրդի ձայնը և իրաւունք տուաւ ազգային գործերը վարելու 27 հոգուց բաղկացած մի մարմնի, որը պատրիարքից և ամիրաներից անկախ էր (1841 թ.). ամիրաներն ու ժողովուրդը հաշտուելով միաբան սկսան գործել այն ժամանակ, երբ պատրիարք ընտրուեց Մաթէոսը։

Ռուս թուրքական պատերազմների պատճառով տաճկահայոց կապը կորուել էր Էջմիածնից և կառավարութեան հրամանով տաճկահայ եկեղեցիներում հայ կաթուղիկոսի անունը չէր յիշւում։ Մաթէոս պատրիարքը վերջապէս հաստատեց այդ կապը և որոշեց այնուհետև Պոլսի պատրիարքին ճանաչել կաթուղիկոսի փոխանորդ, ուստի պատրիարքն էլ անպատճառ պիտի լինէր Էջմիածնում ձեռնադրուած եպիսկոպոս։ Մաթէոս պատրիարքի օրով տաճկահայերն էլ պատգամաւորի միջոցով մասնակցեցին Ներսէս Ե-ի ընտրութեան (1843 թ.).

Ազգային սահմանադրութիւն

Մաթէոսի օրով հայոց մտաւոր կեանքը մեծ զարկ ստացաւ Պոլսում, հիմնուեցին բազմաթիւ թաղական դպրոցներ, բացուեցին ընթերցարաններ. ինքը պատրիարքը հիմնեց «Հայաստան» անունով մի լրագիր։ Նա ազգային գործերը վարում էր ժողովրդի աջակցութեամբ։ Այս բանն ամիրաներին դուր չէր գալիս։

Պատրիարքի ինքնիշխանութիւնը սահմանափակելու համար ամիրաները մի հրովարտակ ձեռք բերին, որի զօրութեամբ պատրիարքարանում երկու ժողով պիտի գումարուէր. կրօնական և քաղաքական։ Այդ ժողովներին պիտի նախագահէր պատրիարքը և առանց ժողովների որոշմանը ոչ մի գործ պիտի չկատարէր (1847)։

Կրօնական ժողովը բաղկանում էր 14 հոգուց և իրաւունք ունէր կառավարելու ազգի հոգևոր գործերը, հոգալ ժողովրդի պիտոյքը, պաշտպանել նրան փաշաների և այլազգիների ճնշումներից, առաջնորդներ նշանակել և վէճերը քննել։

Քաղաքական կամ գերագոյն ժողովը բաղկանում էր 20 աշխարհիկ անձերից, դրա պարտականութիւնն էր հոգալ ուսման, հիւանդանոցների, որբանոցների և այլ այս տեսակ հիմնարկութիւնների կարիքը։ Այդ ժողովների անդամները փոխւում էին երկու տարին մի անգամ ընտրութեամբ։ Այսպիսով ամիրաներն իրանց ձեռքով հիմք դրին ժողովրդական և ընտրական սկզբունքին տաճկահայոց մէջ։

Մի տասր տարի անցնելուց յետոյ այս ժողովները կեանք ու կենդանութիւն ստացան մի խումբ երիտասարդների շնորհիւ, որոնք Պարիզում կրթուած և ֆրանսական ազատութիւնը վայելած, ուզեցան նոյն կարգերը մտցնել և Պոլսի հայոց մէջ։ Որոշեցին մշակել մի մանրամասն կանոնադրութիւն, որով ժողովրդի իր ւաւունքները լայնացան և ընտրական սկզբունքը հիմք դարձաւ վարչական

գործերի։ Այսպիսով 1860-ին հաստատուեց «Ազգային Սահմանադրութիւնը», որի գլխաւոր կազմակերպողներն էին Պալեան Նիկողայոս, Գրիգոր Օտեան, Ռուսինեան և ուրիշները։

Ազգային սահմանադրութեամբ հաստատւում էր մի երնստիխանական ժողով, ընտրուած ազգից։ Սրա անդամների թիւը 140 էր, որից 20-ը եկեղեցական, 40-ը գաւառից ընտրուած աշխարհականներ էին, մնացեալ 80-ը Պօլսի թաղերից էին ընտրւում։ Սա կոչւում էր Ազգային ընդհանուր ժողով, որը և վարում էր ազգի ընդհանուր գործերը։

Այս ազգային ժողովին էին ենթարկւում կրօնական և քաղաքական ժողովները, առաջինը բաղկանում է 14 հոգևորականներից, երկրորդը 20 աշխարհականներից, որոնք և վարում էին ազգի սովորական գործերը։

Նոյն տեսակ ժողովներ կային և գաւառներում, որոնք վարում էին գաւառական գործերը առաջնորդի նախագահութեամբ։

Սահմանադրութիւնն իր դէմ գինեց խաւար ուժերին և առիթ դարձաւ կուսակցական կռիւների։ Տէրութիւնը միջամտեց և սահմանադրութիւնն առժամանակ դադարեց։ Վերջը, ժողովրդի տրտունջին ու բողոքներին բաւականութիւն տալով՝ կառավարութիւնը նորից հաստատեց սահմանադրութիւնը 1869 թ. որի շնորհիւ պատրիարք ընտրուեց ժողովրդից խիստ սիրուած Խրիմեան Հայրիկը։

Սա էր որ առաջին անգամ ապարան հիմնեց Հայաստանում, Վարագայ վանքում, բաց արաւ գիշերօթիկ դըպրոց և սկսաւ հրատարակել «Արծիւ Վասպուրականի» թերթը։

Սրա օրով Ազգային ժողովն առանձին ուշ դարձրեց գաւառական հրատարակութիւնների վրայ, որին ենթակայ էր ժողովուրդը հայ վաշխառուների և մանաւանդ քուրդ աւազակների կողմից։ Կազմուեց մի ընդարձակ եւ բանիերուն զեկուցագիր եւ ժատուցուեց կառավարութեան։ Կառավարութիւնը խոստացաւ բարւոքել հայերի դրութիւնը՝

Այս զեկուցագրով իսկապէս հիմք էր դրւում հայոց խընդրին Տաճկաստանում, որի հետևանքները մենք յետոյ կտեսնենք։

Խրիմեանը հրաժարուեց 1873-ին և յաջորդ տարին պատրիարք ընտրուեց Ներսէս Վարժապետեանը։

1840 թուականներից կաթոլիկ հայերից կրթուածներն սկսան հետզհետէ մօտենալ իրանց լուսաւորչական եղբայրներին և կազմեցին Համազգեայ անունով մի ընկերութիւն, որի նպատակն էր դպրոցներ բանալ և կրթութիւնը տարածել ժողովրդի մէջ։ Այդ կաթոլիկներից ոմանք վերջը անցան մայրենի եկեղեցու գիրկը։

Հայոց հարցը

Ծանր հարկերից ճնշուած քրիստոնեաները Բալկանեան թերակղզում ապստամբեցան Թուրքաց դէմ, նրանց օգնութեան հասան Ջերնօգօրեան և Սերբեան։ Եւրոպական պետութիւններն առաջարկեցին Աբդուլ Համիտ Բ.-ին բարենորոգումներ մտցնել Բալկանեան քրիստոնեաների համար։

Սուլթանը դրան պատասխանեց մերժումով և կոտրածով։ Այն ժամանակ Ռուսաստանը Բալկանեան սլաւոնների համար զէնք վեր առաւ և 1877-ին սկսուեց պատերազմը երկու կողմից. Բալկանեան թերակղզում և Կովկասում։ Չնայելով օսմանեան զօրքի քաջ դիմադրութեան, ռուսները մեծ կորուստներ տալով յաղթեցին և առաջ գնացին, մի կողմից հասնելով կ, Պօլսին, միւս կողմից առնելով Բաթումը, Կարսը և Էրզերումը։

Տան ամսից յետոյ ռուսաց գլխաւոր բանակը կանգ առաւ Պօլսի մօտ, Այա Ստեփանօ գիւղում և կնքուեցաւ դաշինք։ Ներսէս պատրիարքի խնդրանօք Մեծ իշխան Նիկողայոսը այդ դաշինքի մէջ մտցնել տուաւ 16-երորդ յօդուածը, հետևեալ բովանդակութեամբ. «Որովհետև ռուսաց

զօրքերը Հայաստանի մէջ գրաւած երկիրներից հեռանալուց յետոյ յիշեալ տեղերում կարող են անկարգութիւններ տեղի ունենալ, որոնք երկու պետութիւնների լաւ յարաբերութիւնները կարող են խանգարել. Բարձր Դուռը յանձն է առնում անյապաղ իրացնել այն բարւոքումները ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական պիտոյքները հայոց բնակած նահանգներում, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քրդերի ու չերքէզների դէմ»:

Այս դաշնագրութեան պայմանները խանգարելու համար Անգլիան գլուխ բերեց մի նոր վեհաժողով: Այդ ժողովը կայացաւ Բերլինում, 1878-ին, վեց մեծ պետութիւնների ներկայացուցիչից և մի նոր դաշինք մշակեց, որով Ռուսաստանն ստացաւ պատերազմական տուգանք և գրաւած երկիրներից կարսի ու Բաթումի շրջանը. Բալկանեան մանր իշխանութիւնների անկախ լինելը ճանաչուեց և Բուլգարիան դարձաւ օսմանեան վասալ իշխանութիւն:

Տաճկահայոց համար Բերլին բարեխօսելու գնացին Երզնկայ եպիսկոպոս. Մկրտիչ Խրիմեանը և Խորէն Նարպէյ, որոնք անցնելով եւրոպական արքունիքները՝ միացան Բերլինում և մի յիշատակագիր ներկայացրին վեհաժողովին, հայերի համար խնդրելով նրանցից ինքնավարութիւն քրիստոնեայ պաշտօնեաներով:

Վեհաժողովը հայերին նուիրեց 61-երորդ յօդուածը որ հետևեալն է: «Բարձր Դուռը յանձն է առնում անյապաղ գիւրացնել այն բարւոքումները ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական պիտոյքները հայոց բնակած նահանգների մէջ, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը չերքէզների և քրդերի դէմ: Բ. Դուռը այս նպատակի համար ձեռք առնուած միջոցները պարբերապէս պիտի ծանօթացնէ պետութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործադրութեան վրայ»:

Հայաստանն իր անկախութիւնը կորցնելուց յետոյ այս առաջին անգամն է, որ միջազգային դաշնագրի նիւթ էր դառնում: Այս վերջին յօդուածով հայերի վիճակի բարւոքումը

նորէն դառնում էին լուսաւորեալ Եւրոպայի վեց մեծ պետութիւնները, այն ինչ առաջին յօդուածով միայն Ռուսաստանն էր պահանջում հայոց վիճակի բարւոքումը:

Այս յօդուածը ցնցեց ամբողջ հայութիւնը, ամենքը կարծում էին, որ բազմաչարչար հայ ժողովուրդը վերջապէս հանգիստ պիտի գտնի Եւրոպայի հովանաւորութեամբ:

Յայտնի է սակայն, որ երկու ծծմայր ունեցող որբը միշտ սոված է մնում, նոյնը պատահեց և հայերին, որոնք մէկի փոխարէն վեց ծծմայր ստացան: Ռուսաստանը, որ հայոց հարցի ստեղծողն էր, Բերլինի դաշինքից յետոյ յայտնապէս սկսաւ թշնամանալ հայերի հետ. Գերմանիան կամենալով շահել Թիւրքիայի, նոյնպէս հակառակորդ էր հայոց հարցին: Այսպիսով երկու մեծ և զօրեղ տէրութիւններ ներքուստ հակառակ էին մեր հարցին: Անգլիան բարեկամ էր ձևանում մեզ, որպէսզի հայերին կանգնացնի ռուսաց դէմ: Տարաբախտաբար Կիպրոսի դաշինքով հայոց հարցի պաշտպանը դարձաւ Անգլիան, որով աւելի գրգռեց ռուսներին մեր դէմ:

Թուրքիան 61-րդ յօդուածը չիրագործելու համար հին հայ վելայէթներն այնպէս բաժանեց, որ ոչ մի վիլայէթում հայերը մեծամասնութիւն չէին կազմում. քիւրդերին զինելով կազմակերպեց համիդէի զօրքը, որով նրանք աւելի վտանգաւոր և սպառնալի դարձան հայերի համար: Հարստահարութիւնները շատացան. հարկերը աւելի բարձրացին և ժողովրդի դրութիւնը, որ պատերազմի ժամանակ վտանգուած էր աւերմունքից ու սովից, աւելի անտանելի դարձաւ:

Սուլթան Համիդը որոշել էր հայոց հարցը ջնջել հայերին ոչնչացնելով: Քաղաքականութեան անծանօթ, բայց հայրենասէր ու ազատասէր հայ երիտասարդութիւնը քընած չէր: Տեսնելով Բալկանեան ազգերի ազատութիւնը և ինկատի ունենալով Եւրոպայի երաշխիքը 61-րդ յօդուածով հայ երիտասարդութիւնն սկսաւ աշխատել խօսքով ու գործով: Կովկասեան հայերն իրանց ներքին բարւոքումները թողած, մտածում էին միայն տաճկահայոց ազա-

թուրքեան մասին։ Այդ զգացումներն ու մտածումներն առաջ բերին մի ամբողջ գրականութիւն, Րաֆֆին իր վառվռուն և ազդու վէպերով սկսաւ նկարագրել տաճկահայի անտանելի դրութիւնը և ծրագիրներ մշակել նրա ազատութեան։ Մանուկ սերունդը հիպնօզած էր այդ վէպերով ու ծրագիրներով. մի առիթ էր պէտք, որ նա զինավառ օգնութեան հասնէր իր եղբայրներին։

Բնիկ երկրում այս ամենն զգացւում էր աւելի խիտ ու խիստ գոյներով։

Այնտեղ միայն Րաֆֆու գրքերից չէին սովորում ճանաչել իրանց կեանքի դառնութիւնը, այլ քար և սարսափելի իրականութիւնից։ Եւ ահա, Փորթուգալեանը Մարսելում հիմնում է առաջին յեղափոխական թերթը «Արմենիա» անունով։

Կովկասից սկսւում են փոքրիկ, խմբական խուժումները դէպի Տաճկա-հայաստան։

Ռուսաստանի վերաբերմունքը դէպի հպատակ ազգերը և մանաւորապէս դէպի հայերը փոխուել էր Ալէքսանդր III-ի թագաւորելուց յետոյ 1881-ից։ Դրա օրով իշխում էր յետադէմ ռուս կուսակցութիւնը, որի նշանաբանն էր. «Ռուսաստանը ռուսների համար», ուստի սկսւում է մի սարսափելի հալածանք օտարազգիների դէմ, որոնց առաջին շարքերում ճանաչուած էին լեհերը, հայերը, հրէաները և ֆիններն։ 1884-ին փակուեցին հայոց դպրոցները, բայց նորէն բացուեցին, երբ կաթուղիկոս ընտրուեց Մակարը։ Սա խորհեմ և հեռատես քաղաքականութեամբ դրաւել էր կառավարութեան համակրանքը, թէպէտ ժողովուրդը նրան չէր սիրում. Սրա ժամանակ սկսուեց հայ գինուորագրութիւնը Կովկասում։

Մակարի ժամից յետոյ միաձայն կաթողիկոս ընտրուեց Երիմեան հայրիկը և Կովկաս մտաւ չտեսնուած թափորներով։

Շատ չանցած Կովկասեան կառավարիչ նշանակուեց իշխան Գօլիցին և ինչպէս Տաճկա-Հայաստանում, այնպէս էլ Կովկասում սիրեց միատեսակ քաղաքականութիւն.

ջնջել ու ոչնչացնել հայութիւնը սահմանների երկու կողմում միաժամանակ և գրեթէ միատեսակ։ Հայաստանի կառավարիչ Զէքի փաշան և Գօլիցինը կարծես մի խնճոր լինէին երկու կէս արած։

ՍԱՍՈՒՆԻ ՋԱՐԴԸ ԵՒ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Սասունը լեռնոտ և կիսով չափ անկախ մի գաւառակ է. 1890 թուականներից Սասնոյ լեռներում բուն էր դրել մի յեղափոխական խմբակ. 1894-ին երբ քուրդ աշիրէթները ներս են խուժում Սասունը կողոպտելու, տեղացի հայերը նրանց յաղթելով ետ են մղում։ Կառավարութիւնն հայերի այդ յանդգնութիւնը պատժեց կանոնաւոր զօրքերով, ուր 600-ից աւելի հայեր կոտորուեցին և Սասնի գիւղերն այրուեցին ու հիմնայատակ եղան։ Անգլիայի, Ռուսիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներից մի յանձնաժողով կազմուեց, որ ներկայ պիտի լինէր այս չարդի քննութեանը։

Քննութիւնից երևաց, որ հայերն ապստամբ չեն, այլ ինքնապաշտպանութեան համար էին զէնք վեր առել։ Այս քննութեան առթիւ, Անգլիայի ձեռներէցութեամբ կազմուեց բարենորոգումների ծրագիր հայոց բնակած վեց նահանգների համար. (Վան, Բիթլիզ, Սվազ, Խարբերդ, Տիարպեքիր և Էրզրում) և 1885-ին ներկայացուեց սուլթան Համիդին։ Այս ծրագրի իրագործման թէպէտ միացել էր Ռուսիան, բայց ներքուստ հակառակ էր որևէ ճնշում գործ դնելու թուրքաց վրայ։ Սուլթանն էլ լաւ հասկանալով իրերի դրութիւնն սկսեց ձգձգել համաձայնութիւն տալը։ Հայերը ձանձրացած երկար սպասելուց, Պօլսում կազմակերպեցին Պապը-Ալիի ցոյցը և (1895 թ. հոկտեմբերին) կառավարութիւնից խուսափելով փակուեցին եկեղեցիներում։ Վերջապէս հոկտ. 16-ին Սուլթանն ընդունեց բարենորոգումների ծրագիրը։ Սակայն ծրագրի ոչ մի կէտը չկատարուած սկսուեց ի կատար ածուել մի այլ դժոխային ծրագիր. սկսուեցին կանոնաւոր և կազմակեր-

պուած Ջարդերն ամեն հայաբնակ տեղերում: Մի տարուայ ընթացքում այդ Ջարդերին զոհ գնացին մօտ 150 հազար հոգի, մեծ մասամբ տղամարդիկ:

Այս կոտորածների շնորհիւ բազմաթիւ հայեր դուրս գալով երկրից, գաղթեցին Կովկաս, Պարսկաստան, հարաւային Ռուսաստան, Բոլգարիա, Եգիպտոս, Եւրոպա և Ամերիկա: Երկիրն սկսուեց աւերուիլ և կոտորածներին յաջորդող սովը, աղքատութիւնը և հիւանդութիւնները, որ տևում են մինչև այսօր, լրացնում են պակասը:

Այս ամենի վրայ Եւրոպայի ուշադրութիւնը դարձնելու համար մի խումբ դաշնակցական երիտասարդներ կազմակերպեցին բանկ Օտտօմանի առումը 1896-ի. օգոստոսին: Ռումբի պայթումին զոհ գնաց նրանց առաջնորդ Բարգէնը. ճնացեալներն ազատուեցին ռուսաց դեսպանատան միջնորդութեամբ, իսկ Պօլսում այդ առթիւ կոտորուեցին 10,000 հայ. մեծ մասամբ գաւառացի մշակներ: Այսպիսով 61-րդ յօդուածը և 1895-ի բարենորոգման ծրագիրը, մշակուած դեսպանների ձեռքով, փոխանակ բարիքի, հիմք դարձան հայ ազգի կրած ամենասոսկալի կոտորածներին:

ՋԷՅԹՈՒՆԻ ԱՆՑՔԵՐԸ

Ռուբինեան թագաւորութեան անկումից յետոյ էլ Կիլիկիայի անառիկ լեռներում դեռ ճնացել էին տեղեր, հայերը քաջութեամբ դիմադրելով թշնամիներին պահպանել էին կէս անկախ մի դիրք: Այսպիսի տեղերից էին Ջէյթունն ու Հաճինը, որ բաղկացած է 10 գիւղերից, վեցը զուտ հայաբնակ, իսկ չորսը խառը թուրքմէնների հետ: Այս ժողովուրդը կառավարւում է չորս հայ իշխաններով: Սրանք իրանց ներքին գործերի մէջ անկախ, մի փոքրիկ հարկ են վճարում միայն թուրք կառավարութեան: 1862-ին կռիւ ծագեց Ջէյթունում Ալաբաշ հայ գիւղի և թըրքաբնակ Ճէթման գիւղի մէջ: Այս առթիւ Մարաշի Ազիզ փաշան 30,000 զօրքով յարձակուեց հայերի վրայ, կամե-

նալով նուաճել Ջէյթունը, Ալաբաշն առան և հիմնայատակ արին: Թուրքերը յետոյ գնացին Ջէյթունի վրայ, բայց Ջէյթունցիք յաղթութիւնը տարան և մեծ աւար խլեցին թշնամուց: Կառավարութիւնը պահանջեց, որ չորս հայ իշխանները Մարաշ գան: Հայերը հասկանալով նրանց միտքը. մերժեցին և անմիջապէս պատգամաւորներ ուղարկեցին Պարիզ Նապոլէօն Գ. կայսեր միջնորդութիւնը խնդրելու: Ֆրանսիայի միջնորդութեամբ Ջէյթունցի բանտարկուած հայերն ազատուեցին և սուլթանի հրովարտակով Ջէյթունի վարչութիւնը, դատավարութիւնը և ոստիկանութիւնը յանձնուեց տեղացիներին:—

Նշանաւոր էր և մեծ տպաւորութիւն թողեց Եւրոպայում Ջէյթունի ընդհարումը 1895-ին. մինչդեռ ամբողջ Տաճկահայաստանում հայերը կոտորւում էին առանց ընդդիմութեան, Ջէյթունցիք գերի վերցրին գայմագամին իր սպաներով և 600 զինուորներով: Ջէյթունի վրայ գնաց Րէմզի փաշան 10,000 զօրքով և պարտութիւն կրեց: Հաշտութիւնը կայացաւ Եւրոպայի դեսպանների միջնորդութեամբ, փոխադարձ զիջումներով: Այնուհետև Ջէյթունի գայմագամը քրիստոնեայ է նշանակւում:

Հայոց թիւը եւ պարապմունքը Ներկայումս

Բնիկ երկրում, Հայաստանում, հայերը պարապում են ըստ մեծի մասին հողագործութեամբ և անասնապահութեամբ: Քաղաքներում նրանք մեծ մասամբ զբաղուած են արհեստներով և վաճառականութեամբ: Հեռու գաղթավայրերում միայն նրանց պարապմունքի առարկան է գլխաւորապէս առևտուրը:

Ուր էլ գնան, հայերը քիչ թէ շատ ապահովուելուց յետոյ ձեռք են գարնում կուլտուրական գործերի: Ամեն մի գաղթավայրում հայ ապարանն ու մամուլը անպակաս է, սկսուած հեռաւոր Ամերիկայից մինչև Եգիպտոս, Բուլղարիա և Շվէյցարիա: Ցաւալի է, որ որակը համապատասխան չէ այդ մամուլի մէջ քանակի շատութեան: Ներ-

կայում հայերը բնակուած են գլխաւորապէս իրանց նախ-
ըի երկրում. Տաճկահայաստանում նրանց թիւը հասնում
է մօտ 600,000 հոգու։ Ծագեալ Ասիական Թուրքիայում
նոյնպէս 600,000 հոգի, Եւրոպական Թուրքիա. 200,000։
Տաճկա-հայաստանում հայերն ամենից խիտ բնակուած են
Մշոյ գաւառում և Վանայ նահանգում, ուր կազմում են
ազգաբնակութեան մօտ 30%-ը։

Կովկասում հայոց թիւը հասնում է 1,200,000 հոգու։
Հայերը Կովկասում կենդրոնացած են գլխաւորապէս Ե-
րևանի նահանգում, ուր հայերը բնակութեան կէսից ա-
ւելի են, Գանձակի նահանգում, ուր կազմում են բնակու-
թեան մէկ երրորդը։

Ռուսաստանում հայերի թիւը հասնում է մօտ 100,000
հոգու, որոնք բնակուած են Բեսարաբիա, Ղրիմ, Նոր-
Նախիջևան, Հիւսիսային Կովկաս և Աստրախան։ Գաղթային
մի մեծ հոսանք էլ այժմ նկատելի է դէպի Անդրկասպեան
երկիրները, ուր հայոց թիւը հասնում է մօտ 10,000 հոգու։

Ամերիկայում հայոց թիւը	30,000 է.
Աֆրիկա, Եգիպտոս	15,000
Աւստրիա, Բուլղարիա և Ռումանիա . .	20,000
Պարսկաստան	50,000
Բոլոր հայոց թիւն է ուրեմն մօտ՝	3,000,000

ՄԱՄՈՒԼԻ ԿԵՐԹԻՔԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Արեւելահայ լեզուի

Լեզուաբանականին հաւասար տեղ կը բռնէ՝ վանցեա-
նի երկին մէջ՝ պատմական բաժինը, ըլլալով նոյնքան
խնամուած և օգտաշահ։

Այս երկը, հայրենասիրական զգացումով ոգեվառ,
ոչ միայն իբրև շարժանկարի (սինեմատոգրաֆ) տե-
սարանները կանցնէ ընթերցողի առջևէն Կովկասահայ մաքի
յաղթանակները՝ այլ Պ. Վանցեան միանգամայն իբրև ա-
նաչառ դատաւոր՝ համեմատութեան դնելով Պօլսահայ և
Կովկասահայ մատենագրութիւնը, չի վարանիր յափշտակ-
ուած նայուածք մ'ուղղել առաջնոյն և վերջնոյն ստորնու-
թիւնը խոստովանուիլ,—եթէ ոչ ամեն մասի՝ գէթ ճաշակի
մէջ։

Այս յայտնի է, իրաւցնէ, որ Կովկասահայք չունեցան
մինչև մեր օրերը՝ գրեթէ լեզուին այն անոյշ ձևերը,
դարձուածքները, փափկութիւնները և նրբութիւնները, ո-
րով պօլսահայ բարբառը այնքան հրապոյր ու շնորք կը
գտնու.

*«Մի ուրիշ տարօրինակութիւնն արևելեան
բարբառների այն է, որ ձևափոխուելու և զար-
գանալու յայտնի ձգտումների հետ՝ զուրկ են
նրբութեան և կոկութեան զգացումներից»։*

Որոշ է դարձեալ որ գրաբարի ցանկապատէն դուրս
ստորոդները առաջին անգամ Տաճկահայք եղան, որոնք ան-

միջաղէս շփուելով լատին ազգերու հետ, առին անոնցմէ գրական ճաշակը, գաղափարներու շնորհաձև արդ ու զարդերը, վերջապէս ձեռնին աշխարհաբարը անոնց կաղապարի վրայ։

Ընդհակառակն Կովկասահայք, աւելի ուշ լմացան «որ ժամանակ է թօթափելու գրաբարի ծանր ու կաշկանդիչ կապերը» և ապա շփուելով գերման ցեղին հետ, ինչպէս դիտուած է յաճախ, առացան անոնցմէ աշխատանքի տոկունութիւնը։ Բայց գերման լեզուն նշանաւոր չէ փափկութեամբ, ինչպէս իր գրագէտները՝ ճաշակով։ Ռուսահայք ալ զրկուեցան անոնցմէ շատ տարիներ։

«Ի նկատի ունենալով նուագայնութեան օրէնքը, մեր արևմտեան լեզուն մի փափուկ, ցածր և համեմատաբար արագ խօսելու, հետևաբար սաղօնի լեզու է։ Մինչև արևելեանը բարձր և կոպիտ խօսելու, ուրեմն լեռնային լեզու է»։

Բայց Ռուսահայք ծանօթանալով արևմտեան հայերէնի, ու նաև ուղղակի, ֆրանսական ձգիչ մատենագրութեան հետ, սկսան նրբանալ նաև ճաշակի մէջ։ Այսպէս ուրեմն հայութեան երկու մեծ զանգուածները տարբեր ճամբաներու հետևելով, յարեցան լատին և սլաւ կամ գերման ցեղերու, բնականաբար առանց զերծ մնալու կլիմային անխուսափելի ազդեցութենէն։

Արևմտեան հայը, նախ և առաջ, դեռ բուն գրական գործին ձեռք չի զարկած, սկսան լեզուական օրէնքով աւանդել և անոնց համեմատ հայացնել օտարազգի գլուխ գործոցներ։

Կովկասահայք ընդհակառակն, անմիջապէս և բուռն եռանդեամբ գործնականին մէջ մտան, գրաբարի կաշկանդիչ կապերէն ազատուելու համար, ինչպէս կըսէ Վանցեան։ Բարեբախտաբար շնորհիւ տաղանդաւոր անձինքներու չկասեցան ծանր գործը առաջ տանելէ, և յաջողեցան հաստատուն ուղղութիւն մը տալու լեզուին և մատենագրութեան։

Գ. Վանցեանի երկը շահեկան է ոչ միայն արևելեան լեզուի, այլ և գրաբարի պատմութեամբ հետաքրքրուողներուն. նա կը ջանայ ցուցնել գրաբարէն ալ հին հայերէն մը՝ մեր արդի գաւառաբարբառներուն մէջ։

Գ. Վանցեանի հետ կը շրջինք ոչ միայն մերձաւոր անցեալին, այլ և խորագոյն հնութեան մէջ։ Իր գիրքը կրթութիւն մը է և զբօսանք. հաճոյական է ինչպէս դալարագեղ դաշտի մը մէջ հնախօսական պեղում մը։

«Բաղմավէպ» 1907 թ. յունիս.

Григорій Ванціанъ „Армянскіе авторы“ Второе изданіе дополненное. Тофлисъ 1906 года.

Изданіе христоматіи, какъ учебнаго пособія, требуетъ отъ составителя имѣнія систематизировать литературный матеріалъ такъ, чтобы ученикъ по избраннымъ образцамъ изящной литературы могъ легко ознакомиться съ характеромъ творчества авторовъ и вмѣстѣ съ тѣмъ усвоить литературное знаніе языка. Этому требованію въ достаточной степени удовлетворяетъ вышедшій вторымъ изданіемъ сборникъ Гр. Ванціана „Армянскіе авторы“, въ которомъ нашли мѣсто отрывки изъ произведеній корифеевъ армянской литературы съ краткимъ біографическимъ очеркомъ послѣднихъ, что такъ необходимо для полноты знанія ученика жизни и дѣятельности изучаемыхъ авторовъ

Сборникъ г. Ванціана можетъ служить для учениковъ армянъ полезнымъ учебнымъ пособіемъ по классу армянскаго языка и словесности, который до послѣдняго времени у насъ не существовалъ.

«Тифл. Листокъ»

ՑԱՆԿ

Ձօն աշակերտներին, կազմողի պատկերով

	Էջ
Ուսուցիչներին	4
Հայերի ծագումը	5

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Հայ ազգի ծագումն ըստ աւանդութեան	7
Հայկի յաջորդները մինչև Արամ	9
Արամ նահապետ	10
Արա գեղեցիկ	12
Պարոյր Հայկազն և Հրաչեայ	13
Ուրարտացիները կամ խալդեր	14
Տիգրան Ա. Երուանդեան	16
Տիգրանի յաջորդները	17
Մակեդոնեան սելևկեան իշխանութիւն	18

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Արշակունիք Հայաստանում	19
Վաղարշակի հաստատած կարգերը	20
Արտաշէս Ա.	21
Տիգրան երկրորդ մեծ	23
Արտաւազդ	28
Տիգրան	29
Անանուն	30
Երուանդ	31
Արտաշէս Բ.	32
Հեթանոս հայոց կրօն	40

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Տրդատ և Լուսաւորիչ	42
Տրդատի յաջորդները	45

Վռամշապուհ և տառերի գիւտը	49
Վռամշապուհի յաջորդները	50
Առաջին կրօնական պատերազմ	51
Վասակի դաւաստանը	57
Վահան Մամիկոնեան	58

ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Սրբաբաց արշաւանքները և Բագրատունիք	61
Բագրատունիք, Աշոտ Ա. թագաւոր	65
Սմբատ Ա.	66
Աշոտ երկաթ	67
Աբաս, Աշոտ Գ. ողորմած, Սմբատ Գ. Գագիկ Ա.	68
Անի	70
Յովհաննէս Սմբատ և Աշոտ	73

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Ռուբինեան իշխանութիւն	76
Թորոս Ա.	78
Թորոս Բ.	79
Մլէհ	81
Լևոն Բ. թագաւոր	83
Զաքէլ և Փիլիպպոս. Հեթում Ա.	86
Լևոն Գ.	88
Հեթում Բ. Լևոն Դ.	89
Օշին	91
Լուսինեան թագաւորները	93
Լևոն Զ.	94
Հայաստանի դրութիւնը բագր. անկումից յետոյ.	95
Թաթարաց արշաւանքը	96
Լէնկթեմուր	98
Օսմանցիք և պարսիկները Հայաստանում	99
Շահ-Աբասի արշաւանքները	100
Էջմիածինը վերստին հայրապետանոց	103
Ղարաբաղի մելիքները և Դաւիթ բէկ	104

Հայերի գաղթը. 107
Լեհաստանի հայերը 109
Հնդկաստանի հայերը 112
Ռուսաստանի հայերը 114
Պարսից նոր յարձակումները . . 116
Պօլօժենիէ, դպրոցներ, մամուլ . . 118
Հայերը Թիւրքիայում . . . 122
Կաթոլիկ հայերի խնդիրը . . . 123
Բողոքական հայերի խնդիրը. . . 125
Ազգային սահմանադրութիւն . . 127
Հայոց հարցը 129
Մասունի ջարդը և քննիչ յանձնաժողովը 133
Զէյթունի անցքերը 134
Հայոց թիւը և պարապմունքը ներկայումս 135
Մամուլի կարծիքը Պատմ. քերականութեան և Հայ հեղինակների մասին 137

5348

0001359

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0001359

ՎԱՃԱՌԻՒՄ ԵՆ ՆՈՑՆ ՀԻՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Հայ հեղինակները. դ. տպագրութիւն .	1 ր.
2. Դպրոցական քերականութ. բ. տպագր. .	25 կ.
3. Պատմական քերականութիւն . .	75 կ.
4. Գրպանի ուղղագրութիւն	5 կ.
5. Հայ լեզու Ա. տարի	20 կ.
6. Պատկերազարդ Այբբենարան . . .	10 կ.
7. Հայոց պատմութիւն պատկերազարդ դ. տպ.	50 կ.

Պատրաստ է տպագրութեան

1. Հայ հեղինակները. բ. հատոր.
2. Պատմական քերականութիւն բ. հատոր.

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին.